



Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան



Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն
Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ

ԲՈՒԼԻՆԳԸ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ -
Հայաստանի ֆինանսական օժանդակությամբ և Հանրային քաղաքականության
ինստիտուտի խորհրդատվական աջակցությամբ:

Հետազոտության եզրահանգումներն
արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության
հիմնադրամներ-

Հայաստանի և Հանրային քաղաքականության ինստիտուտի դիրքորոշումների ու տեսակետն
երի հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	Error! Bookmark not defined.
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	60
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	63
ԳԼՈՒԽ 1 ԲՈՒԼԻՆԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ..	65
1.1 Բուլինգի սահմանումները	65
1.2 Բուլինգի կարգավորման միջազգային փորձը	68
1.3 Բուլինգի իրավական կարգավորումը ՀՀ-ում.....	72
ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	74
2.1 Բուլինգի ընկալումները դպրոցականների շրջանում (ի՞նչն են համարում բուլինգ)	74
2.2 Աշակերտների պատկերացումները դպրոցում մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ.....	76
2.3 Դպրոցականների վերաբերմունքը բուլինգի տարբեր դրսևվորումների նկատմամբ.....	78
2.4 Բուլինգի տեսակների եվ դրսևվորումների տարածվածությունը դպրոցում.....	79
ԳԼՈՒԽ 3. ԲՈՒԼԻՆԳԸ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	85
3.1 Բուլինգի հետեվանքները աշակերտների վրա	92
3.2 Աշակերտների, ուսուցիչների եվ ծնողների վարքը բուլինգի դեպքերի ակնատես լինելիս	93
ԳԼՈՒԽ 4. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	97
4.1 Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առաջացող խնդիրները, դրանց պատճառները և հնարավոր լուծումները ըստ ուսուցիչների	97
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	101
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	105
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	106
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	110

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը կարևոր սոցիալականացման օղակ է, իսկ դասարանը առաջնային սոցիալական խումբ, որտեղ ինտենսիվորեն ձևավորվում են սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Այս առումով, հանրակրթության որակը ոչ միայն կրթության հասանելիությունը, բովանդակությունը և պատշաճ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, այլև անվտանգ հոգեբանական միջավայրը, որտեղ աշակերտը զերծ է ցանկացած բռնությունից և հնարավորություն ունի լիարժեք օգտագործել իր անձի զարգացման այդ կարևոր տարիները: Եվ եթե ֆիզիկական բռնությունը ավելի տեսանելի և դատապարտելի է, ապա սոցիալ-հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումներ (պիտակավորում, վիրավորանք, ծաղր, հայհոյախոսություն, կոպտախոսություն, բամբասանքներ, բացառում և այլն), որոնք միավորվել են bullying տերմինի ներքո, ավելի քիչ դատապարտելի են հասարակության կողմից, ավելի դժվար չափելի են, իսկ բացահայտման և կանխարգելման մեխանիզմները թե՛ օրենսդրական ակտերի բովանդակության, թե՛ դրանց կիրարկման մակարդակում ևս հստակ սահմանված չեն:

Ցավոք, 2018թ. Յունիսեֆի զեկույցը փաստում է, որ աշխարհում 13–15 տարեկան աշակերտների կեսը՝ 150 մլն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել, 39 զարգացած երկրներում 10 աշակերտից 3-ն ասել է, որ բուլինգի է ենթարկել իր դասընկերոջը¹:

Ինչ վերաբերում է Հայաստանյան իրավիճակին, Save the Children-ի և World Vision-ի կողմից 2017 թ.-ին Հայաստանում իրականացված «Երեխաների կարծիքով» հետազոտության տվյալների համաձայն, միջին դասարանների աշակերտների շուրջ 40 %-ը շաբաթական 1-5 անգամ դպրոցում ականատես է լինում ծաղրի կամ կովարար պահվածքի: Առավել հաճախ (21% դեպքերում) ծաղրի են ենթարկվում արտաքին տեսքի համար²:

¹ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից (2018թ. , Նյու Յորք) դպրոցական բռնության վերաբերյալ զեկույցի ամփոփ տվյալները՝ Տես՝ <https://cutt.ly/mlXzEkV>

² Save the Children-ի և World Vision-ի կողմից իրականացված (2017թ.) «Երեխաների կարծիքով. . . » հարցման արդյունքները՝ Տես՝ https://resourcecentre.savethechildren.net/node/12512/pdf/yv_brief_version_final_arm.pdf

Բուլինգը բազմաշերտ և բազմամակարդակ երևույթ է, սակայն ՀՀ-ում իրականացված հետազոտությունները ավելի շատ ներկայացնում են բուլինգի տարբեր դրսևորումների տարածվածությունը, իսկ պատճառների, հետևանքների և լուծումների վերաբերյալ տեղեկատվություն գրեթե չկա: Ինչպես նաև, գրեթե ուսումնասիրված չէ այնպիսի կարևոր ասպեկտ, ինչպիսին ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններն են և բուլինգի կանխարգելման հնարավորությունները հայկական դպրոցական միջավայրում:

Սույն աշխատանքը Երևան քաղաքի դպրոցներում ավագ դպրոցի աշակերտների շրջանում բուլինգի առանձնահատկությունների հետազոտություն է: Ծրագրի ձեռքբերումներն են՝

- Երևան քաղաքի դպրոցական միջավայրում բուլինգի առանձնահատկությունների վերաբերյալ համապարփակ վերլուծություն
- Ստացված տվյալների հիման վրա և միջազգային փորձի հիման վրա ստեղծված առաջարկների փաթեթ
- ՀՔԻ և այլ գործընկերների աջակցությամբ հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի շրջանում
- Թեմայի վերաբերյալ գիտահետազոտական հետաքրքրության և ուշադրության հրավիրում այլ հետազոտողների շրջանում

Նախ և առաջ, հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցականները թեմայի հանդեպ մեծ հետաքրքրություն ունեն: Բազմաթիվ աշակերտներ, սոցիալական ցանցերում տեղադրված առցանց հարցման հղումով հետադարձ կապ էին հաստատում, որպեսզի մասնակցեն նաև ֆոկուս-խմբային քննարկումներին: Առցանց հարցմանը ընդգրկված բաց հարցերին ստացել ենք հարյուրավոր ծավալուն պատասխաններ, որով աշակերտները փորձել են տալ «ինչու»-ների պատասխանները: Հարցման արդյունքում ստացվել են նաև դպրոցական բուլինգի բազմաթիվ պատմություններ, որոնք թույլ են տալիս կատարել մի շարք կարևոր բացահայտումներ: Աշակերտները նաև բազմաթիվ արժեքավոր գաղափարներ են ներկայացրել բուլինգի կանխարգելման մեխանիզմների վերաբերյալ: Նրանք անկեղծ հետաքրքրություն ունեն երևույթի ուսումնասիրության և դպրոցական միջավայրի բարելավմանը իրենց ներդրումն ունենալու, իրենց տեսանկյունը լսելի դարձնելու հարցում:

Այս հետազոտությունը առավելապես ներկայացնում է աշակերտների տեսանկյունը, սակայն պետք է նշել, որ հետազոտության շրջանակներում ուսուցիչների հետ իրականացված փոքրաթիվ հարցազրույցները փաստում են, որ ուսուցիչների շրջանում ևս կա լայնածավալ հետազոտության կարիք:

*Շնորհակալ ենք հետազոտությանը մասնակցած բոլոր աշակերտներին,
փորձագետներին և ուսուցիչներին, թեմայի ուսումնասիրության հարցում իրենց կարևոր
ներդրումը ունենալու համար:*

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

✚ Երևան քաղաքի ավագ դպրոցների դպրոցական միջավայրում բուլինգի դրսևորումների ուսումնասիրության շրջանակում առաջ են քաշվել հետևյալ հետազոտական հարցերը.

- Բացահայտել դպրոցահասակների շրջանում բուլինգի ընկալումները (ի՞նչն են համարում բուլինգ)
- Բացահայտել դպրոցահասակների շրջանում վերաբերմունքը բուլինգի զանազան դրսևորումների նկատմամբ
- Բացահայտել բուլինգի հնարավոր պատճառները
- Բացահայտել բուլինգի պատմություններ, ավելի ամբողջական, պատկեր ունենալու համար
- Բացահայտել բուլինգի ականատեսների վարքը
- Բացահայտել բուլինգի տեսակների և դրսևորումների տարածվածությունը
- Բացահայտել ուսուցիչների տեսանկյունը բուլինգի վերաբերյալ
- Ուսումնասիրել բուլինգի կանխարգելման և կարգավորման միջազգային փորձը
- Բացահայտել որոշում կայացնողների վերաբերմունքը խնդրին, արդյո՞ք երևույթը կարևորվում է և ինչ քաղաքականություն է մշակվում բուլինգի կանխարգելմանն ուղղված

✚ Առաջ քաշված հետազոտական հարցերի բացահայտման նպատակով, կիրառվել են՝

Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը, որտեղ Երևան քաղաքի տարբեր համայնքների ավագ դպրոցների աշակերտների հետ խմբային քննարկման արդյունքում վեր է հանվել դպրոցական միջավայրում առկա բուլինգի առանձնահատկությունների շուրջ դիսկուրսը: Իրականացվել է 6 ֆոկուս-խմբային քննարկում (3 քննարկում աղջիկների և 3 քննարկում տղաների հետ), յուրաքանչյուր քննարկմանը մասնակցել է 4-6 աշակերտ: Քննարկումների մի մասը անց է կացվել դեմառդեմ, իսկ մյուս մասը՝ առցանց: Լրացուցիչ խորքային տեղեկատվություն ստանալու նպատակով իրականացվել է նաև 2 խորքային հարցազրույց:

Առցանց քանակական հարցման մեթոդը, որի արդյունքում վեր է հանվել բուլինգի տարբեր դրսևորումների հաճախականությունը, և այլ քանակական տվյալներ:

Հարցման ընտրանքը ձևավորվել է հետևյալ սկզբունքով. Armstat.am կայքից Երևան քաղաքի բնակչության ընդհանուր թվից դուրս է բերվել 15-18 տարեկան ազգաբնակչության մոտարկված թիվը: Գլխավոր համախմբությունը մոտարկված ՀՀ վիճակագրական վարչության կոմիտեի կայքի տվյալներով, կազմում է՝ 50,000 մարդ, իսկ ընտրանքը 5% վստահության սխալով՝ 362: Հարցմանը մասակցել է Երևան քաղաքի 15-18 տարեկան 362 աշակերտ: Հարցումների անհրաժեշտ քանակը ստանալու նպատակով, կիրառվել է ֆեյսբուքյան թիրախավորված գովազդը, անհրաժեշտ տարածքի (Երևան) և տարիքային խմբի շրջանակներում:

Առանցքային տեղեկատուների (ուսուցիչների) հետ խորին հարցազրույցի մեթոդը, որի շրջանակներում ուսուցիչների հետ իրականացվել է 6 հարցազրույց, բուլինգի վերաբերյալ նրանց տեսանկյունը վեր հանելու նպատակով: Ուսուցիչներն ընտրվել են Երևան քաղաքի 3 տիպի համայնքներից (Կենտրոն համայնք, կիսապերիֆերիկ համայնքներ, պերիֆերիկ համայնքներ), յուրաքանչյուր համայնքից՝ 2 ուսուցիչ:

Փաստաթղթերի վերլուծության մեթոդը, որով երկրորդային վերլուծության են ենթարկվել բուլինգի կանխարգելման միջազգային փորձից օրինակներ (ԱՄՆ և Ուելսի թագավորություն) և դպրոցներում բռնության կոմպոնենտի վերաբերյալ ՀՀ իրավական կարգավորումները:

Փորձագիտական հարցազրույցների մեթոդը, որով վեր են հանվել բուլինգի առանձնահատկությունների և կարգավորման մեխանիզմների վերաբերյալ մոտեցումներ: Իրականացվել է 5 փորձագիտական հարցազրույց:

ԳԼՈՒԽ 1 ԲՈՒԼԻՆԳԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1.1 Բուլինգի սահմանումները

Բուլինգի առաջին հետազոտությունները (սկսած 1970ականներից) բուլինգը սահմանում էին որպես՝ «ագրեսիվ, կանխամտածված վարք, խմբի կամ անհատի կողմից, որը ունի կրկնվող բնույթ, և ուղղված է զոհի դեմ, ով չի կարող հեշտությամբ պաշտպանել ինքն իրեն»³: Հետագայում, այս սահմանմանը ավելացվեց նաև ուժերի անհամաչափությունը զոհի և բուլինգ իրականացնողի միջև: Այս սահմանման մեջ կարելի է քննարկել վնասելու մտադրությունը և ուժերի անհամաչափությունը: Նախ, անձի խորքային մտադրությունը դժվար է վեր հանել: Բացի դա, եթե նույնիսկ բուլինգ կատարող անձի մտադրությունը գիտակցված չէ կամ վնասելու մտադրություն առհասարակ չկա, միևնույն է զոհի համար հետևանքները նույնն են, ինչ վնասելու գիտակցված մտադրությամբ գործելու դեպքում: Ուստի, բուլինգը առավել նպատակահարմար է սահմանել զոհի համար ունեցած հետևանքների տեսանկյունից:

Ինչ վերաբերում է ուժերի դիսբալանսին, ապա եթե ֆիզիկական կամ տարիքային առավելությունը հեշտ չափերի է, ապա օրինակ հոգեբանական, ներանձնային կամ սոցիալական ավելի բարենպաստ դիրքում գտնվելը առաջին հայացքից կարող է ակնհայտ չլինել:

ԱՄՆ առողջության և մարդասիրական ծառայությունների դեպարտամենտի սահմանմամբ, բուլինգը «անցանկալի, ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, իսկ վարքը կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցյալ»:⁴

³Olweus, D. Bullying at school: What we know and what we can do. Malden, MA: Blackwell Publishing (1993).

⁴ U.S. Department of Health and Human Services 2014
Տես՝ <https://www.hhs.gov/foia/statutes-and-resources/officers-reports/2014-introduction/index.html>

Այս մոտեցումը ավելի զգայուն է, և ի տարբերություն նախորդների, 2 կարևոր ասպեկտ ունի: Առաջին հերթին ուժերի ընկալվող անհամաչափությունը և բուլինգ կատարողի վարքի անցանկալիությունը: «Անցանկալի» բառով հաշվի է առնվում մարդու հոգեբանական, ֆիզիկական և էմոցիոնալ սահմանները և դրանց հանդեպ ոտնձգությունները: Այս մոտեցումը օգտակար է նաև այն պատճառով, որ որոշ չափով հաղթահարում է մշակութային տարբերությունների պատճառով առաջացող տեսամեթոդաբանական դժվարությունները: Այն ինչ մի հասարակությունում ո՛չ բռնություն, ո՛չ էլ բուլինգ չի համարվում, մեկ այլ հասարակությունում կարող է ընկալվել այդպիսին: Այս դեպքում, կարևոր է նաև հաշվի առնել անձի զգացողությունների մակարդակը: Օր. Մի աշակերտին կարող է դուր գալ իրեն կեղծանվամբ դիմելը, և դա չընկալվի որպես անձնական սահմանների խախտում կամ անցանկալի դիմելաձև, իսկ մեկ այլ աշակերտի՝ ոչ:

Բուլինգի բովանդակային սահմանման հաջորդ դժվարությունը, հատկապես արտացոլվում է իրավական կարգավորումների մակարդակում: Խոսքը բուլինգի հանդեպ առավել խոցելի, ռիսկի խմբում գտնվող խմբերի առանձնացման և օրենքի կամ քաղաքականության մակարդակում ամրագրման երկընտրանքի մասին է: Մի կողմից, ընդունելով որ բուլինգի գոհ առավել հաճախ կարող են դառնալ որոշակի խոցելի խմբերի կամ փոքրամասնությունների ներկայացուցիչներ (զենդերային, ռասայական, ազգային, կրոնական, հաշմանդամության կամ այլ հիմքով), նպատակահարմար է օրենքում կամ հակաբուլինգային քաղաքականությունում ընդգծել որպես ռիսկի բարձր խումբ, ինչը թույլ կտա ուսուցիչներին և դպրոցի անձնակազմին ուշադրություն հրավիրել առավել խոցելի խմբերի ներկայացուցիչների վրա, ավելի արդյունավետ կերպով պաշտպանել նրանց բուլինգի դրսևորումներից: ԱՄՆ դպրոցներից մեկում փորձարկված այս մոտեցումը նվազեցրել է ԼԳԲՏ համայնքի շրջանում դպրոցական բուլինգի գոհերի ինքնասպանությունների թիվը: Սակայն, մյուս կողմից բուլինգի գոհ կարող է դառնալ ցանկացած մարդ: Այս առումով ավելի ներառական մոտեցում է օրենքում ամրագրելը, որ բուլինգի ցանկացած դրսևորում ցանկացած աշակերտի հանդեպ անընդունելի է և դպրոցը բոլոր աշակերտներին պետք է տրամադրի միևնույն պաշտպանությունը, անկախ աշակերտի իրավական կարգավիճակից, սոցիալական դիրքից, խոցելի խմբի ներկայացուցիչ լինելուց և այլն:

Այսպիսով, քննարկված սահմանումների որոշ բաղադրիչների միավորումից, դուրս է բերվել հետևյալ սահմանումը, որը առավել ամբողջական է սույն հետազոտության տեսանկյունից.

Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ:

1.2 Բուլինգի կարգավորման միջազգային փորձը

Հակաբուլինգային օրենքներ և քաղաքականություններ (Antibullying Laws and Policies)

Բուլինգի վերաբերյալ տվյալների շտեմարանների ստեղծման նպատակներից մեկն էլ բուլինգի պատճառները հասկանալու, դրանց կանխարգելման, միջամտության և հետևանքների հետ աշխատելու օրենքներ, քաղաքականություններ, ռազմավարություններ և մեխանիզմներ ստեղծելու համար են:

Այն հարցին, թե ի՞նչ մոտեցում ցույց տալ բուլինգի դրսևորումներին հատկապես դպրոցական միջավայրում, ունի իր բարդությունները և դեռևս իրավական և մանկավարժական բանավեճերի հարց է: Նախ և առաջ դա կապված է այն հանգամանքի հետ, որ խոսքը դպրոցահասակ երեխաների մասին է: Բուլինգի միջամտությունը պետք է լինի այնպիսին, որ չվնասի ոչ բուլինգի ենթարկվող ոչ էլ բուլինգ իրականացնող երեխային, ավելի խոցելի չդարձնի նրանց և դուրս չնղի սոցիալական միջավայրից: Բուլինգ կարող է համարվել նաև քրեորեն պատժելի վարքի դրսևորումները, ինչպիսիք են անձի արժանապատվությանը կամ ֆիզիկական առողջությանը վնաս հասցնելը, գողությունը, հարկադրանքը, շանտաժը և այլն: Այս դեպքում, արդյո՞ք դպրոցական բուլինգը ևս նպատակահարմար է քրեականացնել թե ոչ:

Այս առումով, առկա են բուլինգի կանխարգելման կամ դադարեցման բազմաթիվ մոտեցումներ և մակարդակներ

- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային հռչակագրեր
- Իրավական կարգավորումներ ազգային օրենսդրության մակարդակում
- Բուլինգի կանխարգելման ազգային ռազմավարություններ
- Կրթության նախարարության կողմից մշակված ընթացակարգեր/համազգային ուղեցույցներ
- Հակաբուլինգային քաղաքականություն յուրաքանչյուր դպրոցի մակարդակում, որը կարող է ամփոփված լինել դպրոցի կազմակերպական/վարքային մշակությունում
- Ուսուսիչների և ծնողների համագործակցային և մասնակցային զգայուն մոտեցումը
- Աշակերտների բարեվարքության և կարգապահության զարգացումը և այլն:

- **ԱՄՆ փորձը**

ԱՄՆ-ում բուլինգի մասին իրավական կարգավորումներ սկսեցին ստեղծվել 1999 թ. - ից սկսած, Քոլումբայնի հրաձգությունից հետո, երբ 2 աշակերտ, հրազենով սպանեցին 12 աշակերտի և 1 ուսուցչի: Այդ դեպքից հետո, ԱՄՆ Ջորջիա նահանգը առաջինն էր, որ բուլինգի կանխարգելմանն ուղղված օրենք ընդունեց:

Մշտապես իրականացվում են դպրոցներում հանցավորության և անվտանգության (SSOCS) հետազոտություններ, օրենքների և ընթացակարգերի արդյունավետությունը գնահատելու և փոփոխություններ իրականացնելու նպատակով⁵:

2005-ին, արդեն 23 նահանգ ընդունել էր հակաբուլինգային օրենքներ, իսկ այժմ, բոլոր 50 նահանգներն էլ ունեն նման օրենքներ: 2002-2010 թվականներին, գրեթե բոլոր նահանգները (45) բուլինգի քեյսերի տվյալների բազայի վերլուծության հիման վրա, անընդհատ վերանայել են ընդունված օրենքները, սահմանումների փոփոխության, բուլինգի դեպքերի հաղորդման ընթացակարգերի և պատժի տեսանկյունից:

Սահմանման տեսանկյունից 32 նահանգ, բուլինգը սահմանում են առանձին օրենքի մակարդակում, 16 նահանգ բուլինգը սահմանում են harassment և intimidation տերմինների հետ միասին, 2 նահանգ (Alabama and Minnesota) բուլինգ տերմինը չեն ներառում իրենց իրավական կարգավորումներում: Նահանգների մի մասը բուլինգը կամ նմանատիպ վարքը սահմանում է նահանգի կրթության դեպարտամենտի միջոցով, և 2 նահանգ բուլինգը սահմանում են դպրոցների քաղաքականության շրջանակներում:

Առկա օրենքների շրջանակներում, նահանգների գրեթե 30 %-ում դպրոցների անձնակազմերը պարտավոր են զեկուցել բուլինգի դեպքերը դպրոցի ադմինիստրացիային, 30%-ը կարող են դա անել անանուն կերպով, իսկ 9 նահանգներ, պարտավոր են զեկուցել օրինապահներին:

SSOCS-ի տվյալների հիման վրա կատարված հետազոտության արդյունքում, պարզ է դարձել, որ ընդունված օրենքները 2%-ով նպաստում են դպրոցներում անվտանգ միջավայրի ամրապնդմանը: Առկա ընթացակարգերը ավելի արդյունավետ գործում են ցածր

⁵Weaver L.M A Content Analysis of Protective Factors Within States' Antibullying Laws, *Journal of School Violence* 12(2):156-173

Տես՝

https://www.researchgate.net/publication/263581347_A_Content_Analysis_of_Protective_Factors_Within_States'_Antibullying_Laws

դասարաններում և փոքր դպրոցներում: Եվ առավել արդյունավետ են այն նահանգներում, որտեղ դպրոցական անձնակազմից պահանջվում է բուլինգի դեպքերի մասին զեկուցել օրինապահ մարմիններին:

- **Ուելսի փորձը**

Դպրոցների համար Ուելսի կառավարության կողմից մշակվել է հակաբուլինգային ուղեցույց, որի հիմքը «Այլոց հանդեպ հարգանքն է»: Այն պրակտիկ ընթացակարգերի ամբողջություն է, ուղղված բուլինգի կանխարգելմանը, դադարեցմանը և հետևանքների հետ աշխատանքին և ունի օրենսդրական հիմք:

Ուղեցույցը մշակված է այն տեսլականով, որ հարմար լինի Ուելսի բոլոր համայնքների համար:

«Հարգելով այլոց. Հակաբուլինգային ուղեցույց»-ի (Respecting Others: Anti-Bullying Guidance) հիմքում ընկած է.

- Դպրոցահեն քաղաքականությունների և մեթոդների զարգացման անհրաժեշտությունը
- Դպրոցների իրավական պարտականությունները/պատասխանատվությունը
- Բուլինգի տիպերը, պատճառները, ռիսկերը
- Բուլինգի դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և օգտագործումը
- Բուլինգը հաղթահարելու ռազմավարություններ, գոհի հետ աշխատելու ռազմավարություններ, ծնողների հետ աշխատելու ռազմավարությունները
- Դասասենյակից դուրս բուլինգի կանխարգելման աշխատանքներ, սուպերվայզերների ներգրավում խաղահրապարակներում և դպրոցի տարածքում
- Երեխաների առանցքային դժվարությունների հաղթահարմանը աջակցություն
- Բուլինգի հաղթահարման հաջողության դեպքերի ուսումնասիրություն
- Օգտակար աղբյուրների ցանկ, որը կօգնի համալրել հակաբուլինգային ռազմավարությունները
- Խորհուրդներ սովորողներին, ծնողներին/խնամակալներին և ընտանիքներին, թե ինչպես վարվել բուլինգի դեպքում, և անհրաժեշտ կոնտակտներ թե ում դիմել:

Ուելսի կառավարության տեսլականը, ինչպես ձևակերպված է «Երեխաներ և երիտասարդներ.գործելու իրավունքը» փաստաթղթում, (Children and Young People: Rights to

Action) հիմնված է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հռչակագրի վրա (UNCRC): Այն 7 հիմնական նպատակ ունի, համաձայն որի երեխաները և երիտասարդները՝⁶

- Կյանքի թոչնդամ/սավառնող սկիզբ ունեն (Հոդված 3, 29 և 36)
- Կրթության և ուսման լայն հնարավորություններ ունեն (Հոդված 23, 28, 29 և 32)
- Վայելում են իրենց լավագույն հնարավոր առողջությունը և զերծ են բռնությունից, զոհականացումից և շահագործումից (Հոդված 6, 18–20, 24, 26–29, 32–35, 37 և 40)
- Ունեն հասանելիություն խաղի, ազատ ժամանակի, սպորտի և մշակութային գործողությունների համար (Հոդված 15, 20, 29 և 31)
- Լսված են, հասկացված են, հարգալից վերաբերմունքի են արժանանում, և ճանաչված է իրենց ռասայական և մշակութային ինքնությունը (Հոդված 2, 7, 8, 12–17 և 20)
- Ունեն ապահով տուն և համայնք, որը աջակցում է նրանց ֆիզիկական և զգայական բարեկեցությունը (Հոդված 19, 20, 25, 27, 32–35)
- Աղքատության մեջ չեն ապրում (Հոդված 6, 26, 27 և 28)

⁶ Respecting others: Anti-bullying overview: Guidance document No: 050/2011 Date of issue: September 2011

Տես՝ <https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullying-overview.pdf>

1.3 Բուլինգի իրավական կարգավորումը ՀՀ-ում

ՀՀ-ում դեռևս չկան բուլինգի վերաբերյալ օրենքներ կամ դրա հաղթահարմանն ուղղված ռազմավարություններ: Մի շարք իրավական կարգավորումներ, այս կամ այն չափով անդրադառնում են բուլինգի տարբեր դրսևորումների: Դրանք են՝

- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ընդունված 20.11.1989, Նյու Յորքում ՄԱԿ-ի կողմից, վավերացված ՀՀ-ում՝ 22.07.1993⁷
- ՀՀ սահմանադրությունը, ընդունված 06.12.2015
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 29.05.1996⁸
- «Հանրակրթության մասին ՀՀ օրենքը», ընդունված 10.07.2009⁹

Պետք է նշել, որ երեխայի իրավունքները սահմանված են վերը թվարկված իրավական կարգավորումներում և ընդունումից ի վեր արդեն իսկ մեծ դրական ազդեցություն են ունեցել երեխաների իրավունքների իրացման տեսանկյունից: Բովանդակային առումով, օր. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում բավական մանրամասն սահմանված են աշակերտի, ուսուցչի և ծնողի իրավունքները և պարտականությունները: Սակայն, տարբեր ուսումնասիրությունների համաձայն, դպրոցում երեխաների իրավունքների իրացվածության աստիճանը բավական ցածր է, կիրարկման մեխանիզմների հստակ չլինելու հետևանքով: «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները, Երեխայի իրավունքների ոլորտում իրավական վերլուծություն» հետազոտությունում (2017) նշվում է, որ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմները դեռևս հստակ չեն, և դպրոցներում հաճախ անպատիժ կերպով ոտնահարվում են երեխաների իրավունքները, և թե՛ աշակերտները, թե՛ նույնիսկ երեխաների պաշտպանությամբ զբաղվող սոցիալական աշխատողները չեն կարողանում պաշտպանել աշակերտների իրավունքները¹⁰:

Այս համատեքստում, շատ կարևոր է բուլինգի կարգավորման դպրոցահեն միասնական ուղեցույցների առկայությունը: Ուսանելի է Ուելսի փորձը, որը երեխաների

⁸ Տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>

⁹ Տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

¹⁰ Տես՝ https://www.unicef.org/armenia/sites/unicef.org.armenia/files/2019-01/no%20hyph%20report-complaint%20mechanism_HRDO.pdf

իրավունքների արդեն իսկ առկա իրավական կարգավորումների հիման վրա ստեղծեց բուլինգի կանխարգելման համադպրոցական ուղեցույց: Այն հիմք ընդունելով Ուելսի օրենսդրության տարբեր հոդվածներ և ՄԱԿ-ի երեխաների իրավունքների հիմնադրույթները, ստեղծեց պրակտիկ ընթացակարգեր և մեխանիզմներ ներառող ուղեցույց: ՀՀ դեպքում եվս, արդեն իսկ եղած օրենսդրական բազայի և կարիքների գնահատման հիման վրա կարող է ստեղծվել իրավունքների իրացման պրակտիկ մեխանիզմների, գործիքների ուղեցույց, որով կառաջնորդվեն դպրոցները:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1 Բուլինգի ընկալումները դպրոցականների շրջանում (ի՞նչն են համարում բուլինգ)

Միջազգային տարբեր գեկույցների, գիտական հոդվածների և փաստաթղթերի ուսումնասիրությունից, բուլինգի տարբեր սահմանումների և մոտեցումների համադրումից, առավել նպատակահարմար է բուլինգի հետևյալ սահմանումը, որը առավել ընդգրկուն և զգայուն է այս հետազոտության համար.

«Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ազդեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ»:

Հետազոտությանը մասնակցած աշակերտները, բուլինգը նկարագրելիս ընդգծում են մի ասպեկտ, որը մեր ուսումնասիրած գրականության մեջ այդքան էլ չէր կարևորվում: Դա բուլինգի «բոլորի ներկայությամբ իրականացվելն է», «բարձր-բարձր դիտողություն անելն է», այսինքն, աշակերտի համար նշանակալի առաջնային սոցիալական խմբի՝ դասարանի ներկայությամբ ծաղրի, նվաստացման, բռնության ենթարկվելն է:

Աշակերտները, բուլինգը նկարագրում են հետևյալ բառերով.

Ծաղր, վիրավորանք, նվաստացում, երեխաների իրավունքների խախտում, ճնշում գործադրել, սեփական կամքը պարտադրել, անհավասար վերաբերմունք, անտեսում, հայհոյանք, անհարմար դրության մեջ դնել, չշփվել, վատ փոխհարաբերություններ, և այլն:

Աշակերտները նշել են բուլինգի գրեթե բոլոր ասպեկտները, ֆիզիկականից, մինչև հոգեբանական և սեռական, հոգեբանական սահմանների գաղափարը, բուլինգի զանազան օրինակներ և դրսևորումներ, որոնք փաստաթղթերի վերլուծության ժամանակ արտասահմանյան հոդվածներում չէին հանդիպել (ինչպես վերևում նշվեց՝ «բոլորի» ներակայությամբ լինելը:

Հարցմանը մասնակցած աշակերտների մեծ մասը կարողանում է ճանաչել և նույնականացնել բուլինգը, քննադատաբար է դրան վերաբերում, գիտակցում է բուլինգի հետևանքները, մտածում է պատճառների մասին և փորձում է տեսնել ուղիներ բուլինգը կանխարգելելու համար:

Աշակերտները բուլինգը բացատրելու/նկարագրելու համար մեծաթիվ օրինակներ են նշել.

«Երբ ուսուցչուհին վիրավորում է երեխաներին, նվաստացնում է, անում է ամեն բան, որպեսզի երեխան իրեն վատ զգա: Ենթարկում է մի շարք բռնությունների, երեխային ստիպում է դաս անել, քանի որ իր վրա խոսակցություն կզա և այլն:»

«Երբ «ումանք» իրենց բարձր են դասում մյուսներից և ճնշում դիմացինին, ով ավելի «թույլ» է նրանցից: Օրինակ, ինչ-որ մեկը ստիպում է իր դասընկերոջը, որպեսզի գրի նրա թեմատիկ աշխատանքը, հետո նոր անցնի իր սեփական թեմատիկ աշխատանքին:»

«Երբ երեխային իր հագ ու կապի, կամ ինչ-որ թերության պատճառով անդադար նեղացնում են, բոլորի ներկայությամբ: Շատ դեպքեր է լինում, երբ աշակերտը նորմալ հագնվում է, ու գրեթե չի տարբերվում մնացածից, բայց նրան էլի բուլինգի են ենթարկում:»

«Օրինակ, երբ մեկը ունի հիվանդություն, որը ակնհայտ երևում է իրա շարժվելու ժամանակ ու դասարանցիները նրան կրկնօրինակում են:»

2.2 Աշակերտների պատկերացումները դպրոցում մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ

Հետազոտության արդյունքերը փաստում են, որ դպրոցական միջավայրում մարդկային փոխհարաբերությունները, այդ թվում բուլինգը պետք է դիտարկել առնվազն 2 հարթությունում: Աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ:


Աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները հետազոտության մասնակից դպրոցականների կողմից ավելի շատ նկարագրվում են խմբային դինամիկայի համատեքստում: Աշակերտների միջև բուլինգը ևս մեծամասամբ հնարավոր է բացատրել խմբային դինամիկայի կոնտեքստում, եթե դասարանը դիտարկենք որպես դպրոցականի կյանքում առաջնային սոցիալական խումբ: Թեև բուլինգի պատճառ կարող են դառնալ հասարակությունում առկա կարծրատիպերը արտաքին տեսքի, պահվածքի և այլնի վերաբերյալ, դասարանի ներսում դասարանի անդամները ստեղծում և կիսում են համոզմունքների համակարգ և վարքային սպասումներ, հեղինակության և կարգավիճակի ընկալումներ, լավի ու վատի, ճշտի և սխալի, նորմալի, գեղեցիկի վերաբերյալ պատկերացումներ, ձևավորվում է խմբի ոչ ֆորմալ կառուցվածք (օր. հայտնվում են աշակերտներ, կամ աշակերտների խմբեր, ովքեր հեղինակություն են վայելում մյուս աշակերտների շրջանում և ազդեցություն ունեն դասարանում որոշումների և փոխհարաբերությունների վրա) որոնք էլ մեծամասամբ ընկած են բուլինգի հիմքում: Այդ համոզմունքները առավելապես ստեղծվում են առաջատար համարվող/հեղինակություն ունեցող աշակերտների կողմից, որոնք ձևավորում են դասարանական «խաղի կանոնները»: Աշակերտների մեկ այլ խումբ հետևում է այդ կանոններին, իսկ նրանք ովքեր որևէ պատճառով չեն կարողանում հետևել և համապատասխանել դասարանական սպասումներին, դառնում են բուլինգի զոհ:

Իսկ օրինակ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում բուլինգի դրսևորումները ավելի կոնկրետ պատճառներ ունեն, որոնք ըստ աշակերտների կապված են՝ ուսուցիչների մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակասի, ուսուցչի անկայուն հոգեվիճակի, աշակերտի կողմից առարկայի և ընդհանուր ուսումնական գործընթացի հանդեպ հետաքրքրության բացակայության և այլ պատճառների հետ:

Սակայն, այսքանով հանդերձ, ուսուցչի հետ փոխհարաբերությունների կարևոր ասպեկտ է նաև այն, որ ուսուցիչը ևս ուղղակի կամ անուղղակի մասնակցում է դասարանական դինամիկային, այս կամ այն աշակերտի հանդեպ դրական կամ բացասական վերաբերմունքով ուժեղացնելով կամ թուլացնելով նրա դիրքը խմբի ոչ ֆորմալ կառուցվածքում:

Մինչ բուլինգի առանձին դրսևորումների հաճախականությունը ներկայացնելը, հարկ է նշել, որ աշակերտները առցանց հարցման ժամանակ գնահատել են դպրոցում մարդկային հարաբերությունների հարգալիցության աստիճանը: Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ աշակերտների ընկալմամբ, դպրոցում աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները հարգալիցության ամենացածր մակարդակն ունեն, մինչդեռ ուսուցիչների վերաբերմունքը աշակերտների հանդեպ, աշակերտների կաճիքով շատ ավելի հարգալից է: Սակայն, ուսուցչի կողմից իրականացվող բուլինգը ավելի ցավազին է ընկալվում աշակերտների կողմից:

Գծապատկեր 1. Մարդկային փոխհարաբերությունների հարգալիցության աստիճանը ըստ աշակերտների



2.3 Դպրոցականների վերաբերմունքը բուլինգի տարբեր դրսևորումների նկատմամբ

Հասկանալու համար, թե բուլինգին ինչպես են վերաբերում աշակերտները, առցանց հարցման ժամանակ, նրանց ներկայացվել են բուլինգի մի քանի դրսևորումներ, և նրանք պետք է գնահատեին թե ինչպիսին է նկարագրված երևույթը՝ դրական, բացասական թե՛ չեզոք: Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ գերիշխող մեծամասնությունը առաջարկված բոլոր դրսևորումների նկատմամբ ունի շատ բացասական վերաբերմունք:


Միայն «Դասընկերոջը կեղծանունով դիմելու» դրսևորումը աշակերտների մեծ մասը «չեզոք» երևույթ է որակել, քանի որ կան դեպքեր, երբ կեղծանունով դիմելը չունի չարամիտ նպատակ, և դեմ չէ տվյալ աշակերտի կամքին:

Մեջբերում.

Դրական օրինակ. *«Մենք մի քանի մոտ ընկերուհիներ ենք, ու մանկապարտեզից գիտենք իրար: Մեր աղջիկներից մեկին մանկապարտեզից ասում ենք «Ճուտ» ու դա իրեն ընդհանրապես չի նեղացնում, մենք էլ չարամտորեն չենք ասում»:*

Բացասական օրինակ. *«Մեր դասարանում Խալաթյան ազգանունով մի տղա կար, ում տարիներ շարունակ տղաները «Խալաթ» էին ասում: Դա իրեն դուր չէր գալիս, անգամ կռիվ էր անում հետները, սակայն անօգուտ, ստիպված համակերպվեց»:*

Գծապատկեր 2. Աշակերտների վերաբերմունքը բուլինգի տարբեր դրսևորումների նկատմամբ



2.4 Բուլինգի տեսակների եվ դրսևվորումների տարածվածությունը դպրոցում

- **Ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ բուլինգի դրսևորումները**

Աշակերտները բուլինգի մասին խոսելիս, առաջինը սկսում են պատմել ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ բուլինգի դրսևորումների մասին:

Աշակերտների նկարագրություններից, կարող ենք մի քանի կարևոր բացահայտում առանձնացնել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վերաբերյալ.

Աշակերտների ընկալմամբ.

- Ուսուցիչների մեծամասնությունը ունի մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակաս:
- Ուսուցիչները հաճախ իրենց անձնային, հոգեբանական, ընտանեկան և աշխատանքային խնդիրները պռոյեկտում են աշակերտների վրա: Ըստ նրանց պատճառն այն է, որ ուսուցիչը կարող է վատ տրամադրությամբ մտնել դասարան և «բարկությունը թափել» որևէ պատահական աշակերտի վրա, առանց տեսանելի/հասկանալի պատճառի:
- Ուսուցիչների կողմից ագրեսիվ վերաբերմունքը, բղավելը, կոպտելը կարող է լինել ինչպես մեկանգամյա երևույթ ամբողջ դասարանի նկատմամբ, այնպես էլ տևական լարված փոխհարաբերությունների ձևաչափով 1 կամ մի խումբ աշակերտների կամ ամբողջ դասարանի հետ:
- Աշակերտների խոսքով ուսուցիչները հաճախ զգայուն և նրբանկատ չեն, և կարող են աշակերտին դնել անհարմար իրավիճակի մեջ, ամբողջ դասարանի ներկայությամբ որևէ անձնական կամ զգայուն թեմայով դիտողություն անելով, ֆիզիկական կամ խոսքային բռնություն գործադրելով և այլն:
- Աշակերտների զգացողությամբ, ուսուցիչները խտրական վերաբերմունք ունեն աշակերտների հանդեպ: Որքան աշակերտի առաջադիմությունը, ուսումնական կարողությունները, սոցիալական կարգավիճակը և ընտանիքի ֆինանսական դրությունը ավելի բարձր է և բարենպաստ, այնքան ավելի դրական և հարգալից է աշակերտի հանդեպ վերաբերմունքը:
- Հետևաբար, աշակերտների ընկալմամբ, ուսուցիչների կողմից վատ վերաբերմունքի են արժանանում այն աշակերտները, ովքեր ունեն ցածր ինտելեկտուալ կարողություններ,

դժվարությամբ են յուրացնում առարկան, աշակերտի ընտանիքի ֆինանսական վիճակը շատ բարձր չէ և այլն:

- Ուսուցչի կողմից բացասական վերաբերմունքի են արժանանում նաև այն աշակերտները, ովքեր տվյալ ուսուցչի առարկայով հետաքրքրված չեն: Ուսուցիչները հաճախ դա ընդունում են որպես անձնական վիրավորանք:
- Ուսուցիչները իրենց ձեռքի տակ եղած «լծակներով» մանիպուլացնում են աշակերտին: Այդպիսի կարևոր լծակներ են համարում գնահատականը, հաճախակի դաս հարցնելը, նույն դասարան թողնելու սպառնալիքը և այլն: Նշում են, որ ուսուցիչները գնահատականի «հաղթաթղթով» սպառնում են այն աշակերտներին, ովքեր ուսուցչի հետ կոնֆլիկտային իրավիճակում են հայտնվել:
- Աշակերտները նշում են, որ ուսուցիչները հաճախ չեն ճանաչում և հարգում աշակերտների հոգեբանական սահմանները և իրենց հետաքրքիր չէ թե աշակերտը ինչ է զգում:
- Աշակերտները դասդեկին առանձնացնում են մյուս ուսուցիչներից, և քննարկված դեպքերի մեծամասնությունում դասդեկին բնութագրում են որպես զգայուն, աշակերտների բարեկեցությամբ մտահոգ ուսուցիչ, ում մոտ հիմնականում ստացվում է դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտը կարգավորել: Սակայն պատմվել է 2 դեպք, երբ դասդեկը չի կարողացել հարթել ոչ մեծ կոնֆլիկտը, այն ավելի մեծացնելով և լարելով: Մեջբերում.


«Մեր դասարանում 2 աղջիկ չէին մնում հերթապահության, ուզում էինք պարզել թե ինչու: Դասդեկը 2 շաբաթ, ամեն օր դասերից հետո աղջիկներին պահում էր, լարված խոսակցություն էր լինում, արդեն տղաներն էլ մտածում էին թե ինչ լուրջ բան է եղել...ու էդպես էլ հարցը չլուծվեց»:

- Դասարանը աշակերտի կյանքում կարևոր առաջնային խումբ է, և աշակերտները չեն ցանկանում որ դասընկերները տեսնեն թե ինչպես են իրենց վիրավորում կամ ծաղրում: Աշակերտների խոսքով, հաճախ դասարանի մյուս աշակերտները տեսնելով որ ուսուցիչը որևէ աշակերտի ծաղրում է կամ անհարգալց է վերաբերում, դառնում են բուլինգի պասիվ մասնակիցներ, սկսում են խուսափել այդ աշակերտից, կամ ծաղրել, կամ էլ ցույց տալ, որ այդ աշակերտը կորցրել է իր դիրքը դասարանի ոչ ֆորմալ կառուցվածքում:

- Առանձին ուշադրության է արժանի «ուսուցչի մոտ լրացուցիչ պարապելու» պրակտիկան, որը ևս դառնում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վատացման պատճառ: Ուսուցիչը ընդգծված դրական վերաբերմունք է ցույց տալիս այն աշակերտների հանդեպ, ովքեր իր մոտ լրացուցիչ պարապում են: Եվ հակառակը, հիմնականում լատենտ-մանիպուլյատիվ բացասական վերաբերմունք այն աշակերտների հանդեպ, ովքեր կամ չեն պարապում, կամ պարապում են ուրիշ ուսուցչի մոտ:

Գծապատկեր 3. Ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ իրականացվող բուլինգի տարբեր դրսևորումների հաճախականությունը ըստ աշակերտների

Որքա՞ն հաճախ եք Ձեր դպրոցում ականտես լինում որ ուսուցիչը



Աշակերտների խոսքով, աշակերտի վրա բղավելը, կոպտելը, վիրավորական խոսքեր ասելը, բավական հաճախ նաև ֆիզիկական բռնություն գործադրելը որոշ ուսուցիչների «սովորական» պահելաձևն է: Ըստ աշակերտների, ուսուցիչների նման պահվածքը հաճախ գիտակցված չէ, նրանք չեն համարում, որ որևէ վատ բան են անում, և նույնիսկ կարող են զարմանալ, եթե աշակերտը վիրավորվի նման վերաբերմունքից: Երբ փորձում են խոսել

ուսուցչի հետ և բացատրել, որ վիրավորվել են ուսուցչի որևէ ասածից կամ արարքից, ուսուցիչները ցույց են տալիս, որ իրենք են վիրավորված, կամ արժեզրկում են աշակերտի ապրումները, պատասխանելով, որ աշակերտը վիրավորվել է մի չնչին բանից, կամ կատակը չի հասկացել: Հատկանշական է ընդգծել ֆոկլուս-խմբային քննարկումների ժամանակ պատմված 2 դեպք, երբ ուսուցիչը դասարանից օտարել, մարզինալացրել է մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտի, նրան դուրս թողնելով դասարանական շփումներից, դասապրոցեսից, և նույնիսկ բարկացել այն աշակերտների վրա, ով ցանկացել է շփվել այդ աշակերտի հետ:

Աշակերտները բացի ուսուցիչների «բացասական» հատկանիշները նշելուց, նաև փաստել են, որ շատ հաճախ պատճառը աշակերտի մեջ է: Հիմնականում աշակերտները նշել են աշակերտի դաստիարակության պակասը, ուսուցչի հետ անհարգալից վերաբերմունքը, ուսուցչին չարժևորելը: Աշակերտների բնութագրմամբ, հաճախ անհարգալից վերաբերմունքի են արժանանում «շատ բարի», «աշակերտի հետ չափազանց ընկերական» ուսուցիչները: Աշակերտները դա բնութագրում են հետևյալ բառերով. «թույլ են», «թույլ են տալիս իրենց հետ այդպես վարվել», «չեն կարողանում դասարանը հավաքել», «չեն կարողանում բոլի մեջ պահել դասարանը» և այլն:

Մեջբերում.

*«Հա՛, ես հիշում եմ նման բան, որ մեր դասարանի տղեքը իրենց արդեն լավ էին զգում, մի քիչ մեծ տարիքում, դասատուի հետ սկսեց մեր դասարանի տղաներից մեկը «դու»-ով խոսել, էնոր սենց խեղճ դասատու էր, անընդհատ գալի, էն որ 1-2 հոգու վրա էր ուժը պատում, «շուտ արի, տղա, շուտ արի», մենակ էդ են կարում ասեն, երեխեքը սաղ աղմկում են:
Ես էդ տղայի փոխարեն գետինը մտա, վատ զգացի ինձ, ընկերներն էլ կողքից լավ ինչ ես բան անում:*

Նաև, նշվել է, որ ուսուցչի հանդեպ բացասական վերաբերմունքը հաճախ ոչ թե ուսուցչին, այլ դասին է ուղղված:

Սակայն, հենց ուսուցիչների վերաբերյալ բազմաթիվ դժգոհություններ են հնչել աշակերտների կողմից, կապված ուսուցիչների մանկավարժական հմտությունների, մասնագիտական որակների, հոգեբանական կայունության, հնացած մեթոդներով դասավանդելու, աշակերտին չհարգելու հետ:

Գծապատկեր 4. Ուսուցչի կողմից աշակերտների հանդեպ բուլինգի պատճառները



Ուսուցչի կողմից աշակերտի հանդեպ բռնության դեպքեր.

«Ես հիշում եմ, քիմիայի թեմատիկ աշխատանք էի գրել, ու ես իմ աշխատանքը 8-9 կտայի, բայց ինձ 6 էին դրել, ես դժգոհ էի իմ գնահատականից, մոտեցա որ հարցնեմ, սենց կանգնած էր, դժգոհ էր մի

բանից, մոտեցա, ասեցի կներեք, կբացատրեք սխալս, որովհետև ոչ մի կարմիր չկար նշած, վերջում 6 էր դրած, սենց վերցրեց տետրս շարտեց գոռաց ասեց էթե 6 ա ուրեմն 6-ի ես արժանացել բան...»:

«Բռնի ուժ գործադրել, հայհոյել նույնիսկ ուրիշ երեխաների ներկայությամբ: Օրինակ, էս վերջին տարում, արդեն մեծ ենք չէ՞, մեր դասարանում մի տղա կար, իրեն ոնց որ դասի ժամանակ, տղաներով մի քանի հոգով փսփսում ծիծաղում էին, դասատուն չգիտես ինչու հենց իրեն տեսավ, գնաց իրա մոտ, սենց գիրքը ծալեց, 3 անգամ հարվածեց գլխին, մի անգամ էլ սենց խբեց, մի 2 բառ էլ ասեց, ու ոնց որ ինքը դասարանում հավանած աղջիկ ուներ, ու ինքը ահավոր վատ զգաց իրեն: 2 շաբաթ դասի չի եկել: Հետո իրա ծնողներն են եկել դպրոց, ասել դուք մեր տղային լուրջ պթրեսի մեջ եք գցել, սենց սենց բաներ:

Մենք ամբողջ դասարանով «ատակա» արեցինք, թե ինչու եք միայն իրեն խբում, բոլորն էին չէ՞ խոսում, ծնողներն էլ մյուս կողմից, ու դասատուն աչքերը լցրել էր, ասում էր ես էլ էս դասարան չեմ մտնելու:

-Հա, հա իրենք են նեղանում, երբեք չեն ընդունում (հավելում է դասընկերուհին)

-Հա իրենք զոհ են, միշտ զոհ են (ժպտում է):»:

ԳԼՈՒԽ 3. ԲՈՒԼԻՆԳԸ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ըստ հարցման արդյունքների, բուլինգի որոշ դրսևորումներ բավականին մեծ տարածում ունեն աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում:

Աշակերտները դպրոցում բուլինգի պատճառները հաճախ կապում են արտաքին, դպրոցից դուրս գտնվող գործոնների հետ: «Բուլի» աշակերտների դաստիարակության պակասի, կամ բացասական արժեքներով դաստիարակված լինելու, ընտանեկան անբարենպաստ միջավայրի, «բուլի» աշակերտի ներանձնային, հոգեբանական խնդիրների, հայկական մշակույթում խտրական վարքի, բռնության մշակույթի և այլ գործոնների հետ: Թվարկված գործոնները դպրոցական միջավայրից դուրս են, և դպրոցը տարբեր գործիքակազմերով պետք է փորձի նվազեցնել արտաքին բացասական երևույթների ազդեցությունը աշակերտների վարքի և արժեհամակարգի վրա: Աշակերտների կարծիքով դպրոցը չունի այդ գործիքակազմը, և բոլոր նշված բացասական երևույթները արտացոլվում են նաև դպրոցի ներսում, իսկ երբեմն էլ ավելի սուր են արտահայտվում բուլինգը «խրախուսող» որոշակի ենթամշակույթի պատճառով:

Այդ կիսավիակ, ոչ ճկուն լինելու օրինակ է այն, որ դպրոցում չկան ընտրովի առարկաներ, և դասարանի կազմը գրեթե չի փոխվում մինչ հիմնական դպրոցի ավարտը (ի տարբերություն հանրակրթության այնպիսի մոդելների, որտեղ աշակերտները հաճախ նոր դասարան են տեղափոխվում, կամ ունեն ընտրովի առարկաների հնարավորություն) դասարանը որպես խումբ սովորում է միասին, և ունի երկար տարիների ընդհանուր պատմություն (shared history): Մա մի կողմից հեշտացնում է դասարանական շփումները այն առումով, որ բոլորը գիտեն միմյանց բնավորությունը, նախասիրությունները, ընտանիքը և այլն, մյուս կողմից ամրապնդում է դասարանի ոչ ֆորմալ կառուցվածքը և գրեթե հնարավոր չի լինում փոխել աշակերտների կարգավիճակները և դերերը: Օր.՝ դասարանում հեղինակություն ունեցող, լիդեր հանդիսացող աշակերտը մեծ հավանականությամբ մինչ դպրոցը ավարտելը մնում է այդ կարգավիճակում, իսկ բուլինգի ենթարկվող, մարզինալացված աշակերտը ևս մեծ հավանականությամբ մնում է նույն կարգավիճակում:

Իսկ ընտրովի առարկաների բացակայությունը բերում է ուսուցիչների հետ լարված փոխհարաբերությունների այն դեպքերում, երբ աշակերտը հետաքրքրված չէ այդ առարկայով, ինչը հաճախ վիրավորում է ուսուցչին:

Կարևոր է նաև դպրոցական բուլինգը ուսումնասիրելիս մշտապես մտքում ունենալ խմբային դինամիկայի համատեքստը, քանի որ դասարանը աշակերտի համար առաջնային սոցիալական խումբ է, իսկ հասակակիցները նշանակալի ուրիշներ: Դասարանը որպես սոցիալական խումբ, ունի ոչ ֆորմալ կառուցվածք, այսինքն հեղինակության, դերերի, կարգավիճակների ոչ «պաշտոնական» բաշխում (օր. ոչ ֆորմալ լիդեր, «կռուտոյներ», կամ «աութսայդերներ», չեզոք վարքով աշակերտներ և այլն):


Խմբային դինամիկայի¹¹ համատեքստում կարելի է նաև բացատրել դասարանի կողմից ձևավորված առանձին արժեհամակարգը, լավի և վատի մասին պատկերացումները, որոնց հիման վրա էլ տեղի է ունենում բուլինգը: Սա հատկապես վերաբերում է մի քանի բավական արատրակտ հասկացությունների, ինչպիսիք են «իրեն պահել չիմանալը», «իր դիրքը դնել չիմանալը», «խոսելու ձև չունենալը» և այլն, որոնք աշակերտների կողմից ներկայացվում են որպես բուլինգի պատճառ: Ըստ էության կա որոշակի խոսելու և պահվածքի ձև/կերպ, որին ինչ-ինչ պատճառներով չհամապատասխանելու դեպքում աշակերտները ենթարկվում են բուլինգի:

Գծապատկեր 5-ից պարզ է դառնում, որ երևանյան դպրոցական միջավայրում բուլինգի խոսքային դրսևորումները (վիրավորանք, ծաղր, անհարգալից տոնով խոսել) և որևէ պատճառով աշակերտին օտարելը, միտումնավոր չշփվելը բավական հաճախ հանդիպող երևույթներ են (հարցման մասնակիցների 50 %-ից ավելին նշել են, որ **հաճախ, շատ հաճախ կամ միշտ** իրենց դպրոցներում ականտես են լինում նման դրսևորումների):

¹¹ Małgorzata Wójcik and Maria Mondry “The Game of Bullying”: Shared Beliefs and Behavioral Labels in Bullying Among Middle Schoolers, 2020 American Psychological Association, 2020, Vol. 24, No. 4, 276 –293

Գծապատկեր 5. Բուլինգի դրսևորումների տարածվածությունը աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում

Որքա՞ն հաճախ եք Ձեր դպրոցում ականտես լինում, որ աշակերտը(ները)՝




Աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունների վերաբերյալ հիմնական բացահայտումներն են.

- Թե՛ աղջիկների, թե՛ տղաների հետ ֆոկուս-խմբային քննարկումներում, նշվել է, որ աղջիկները ավելի հաճախ են բուլինգի ենթարկվում: Ընդ որում, աղջիկները բուլինգի են ենթարկվում և՛ աղջիկների, և՛ տղաների կողմից, մինչդեռ տղաները աղջիկների կողմից շատ ավելի հազվադեպ են ենթարկվում բուլինգի:
- Աղջիկներին կարող են բուլինգի ենթարկել ոչ թե որևէ արարքի, այլ անձի որևէ բնութագրիչի համար, օրինակ, արտաքին տեսքի, կամ երաժշտական ճաշակի, հագուստի համար:
- Տղաների միջև կոնֆլիկտները կարող են լինել ավելի բռնի, բայց կարճատև և սահմանափակվեն 1 ծեծկռտուքի դրվագով: Աղջիկների միջև կոնֆլիկտային իրավիճակը ավելի երկարատև կարող է լինել, և ուղեկցվել հոգեբանական բռնության դրսևորումներով, օր.՝ բամբասանքներ, «կծոցներ», օտարում և այլն:
- Տղաների միջև կոնֆլիկտային իրավիճակները կարգավորման ավելի հստակ մեխանիզմներ ունեն, կա որոշակի նորմերի ամբողջություն, որոնցով առաջնորդվելու դեպքում հնարավոր է կոնֆլիկտից խուսափել: Աղջիկների դեպքում այդ մեխանիզմները այդքան էլ հստակ չեն, երբեմն խնդիրները լուծելու համար աղջիկները օգտվում են տղաների «գործիքակազմից»:
- Աղջիկները բուլինգի ավելի շատ դեպքեր են մտաբերում, ավելի շատ են «ազդվում», ավելի մանրամասն պատմում, թե՛ աղջիկների, թե՛ տղաների, թե՛ ուսուցիչների հետ կատարված բուլինգի դեպքերը: Տղաները մեծ դժվարությամբ մտաբերում են միայն «ամենահայտնի» դրվագները:
- Ինչպես նաև, աղջիկները մեծ մասամբ ավելի մեծ հետաքրքրություն ունեն երևույթի հանդեպ և ավելի շատ են գիտակցում դրա բացասական հետևանքները:
- Այն աշակերտները, ովքեր ավելի շատ իրենց նույնականացնում են բուլինգը իրականացնողի հետ, միանում են «զվարճանքին», վստահ լինելով որ դա «չի շրջվի» իրենց դեմ:
- Մեծ կարևորություն ունի աշակերտի ընկերների քանակը դասարանում: Եթե աշակերտը մեծ ընկերախմբի անդամ է, կոնֆլիկտային իրավիճակի բախվելիս խումբը սովորաբար աջակցում է: Եթե աշակերտը քիչ ընկերներ ունի, կամ ընկերներ չունի, մյուս աշակերտները նախընտրում են չաջակցել նրան: Նաև, եթե աշակերտը քիչ ընկերներ ունի, կամ ընկերներ չունի, ավելի խոցելի է բուլինգի ենթարկվելու տեսանկյունից:

- Այն աշակերտները, ովքեր փորձում են աջակցել բուլինգի ենթարկվող դասընկերոջը, ստանում են զգուշացումներ, որ իրեն ևս կսկսեն բուլինգի ենթարկել: Օր. եթե հակառակ սեռի ներկայացուցիչ է, ակնարկում են, որ սիրահարված է տվյալ աշակերտին, դրա համար փորձում է պաշտպանել: Դա բավական զգայուն թեմա է և աշակերտները նախընտրում են գործ չունենալ:
- Ինչպես նաև դեպքերի գերակշռող մեծամասնության պարագայում, ականատես աշակերտը ինքը վախ է զգում աջակցել բուլինգի ենթարկվող աշակերտին, կամ շփվել նրա հետ եթե տվյալ աշակերտը օտարված է դասարանից, քանի որ կարծում է որ իրեն էլ նույն կերպ կսկսեն վերաբերել:
- Թեև աշակերտների և ուսուցիչների մեծ մասը բուլինգի պատճառները կապում է ընտանիքի և դաստիարակության հետ, հետազոտության շրջանակներում ուսումնասիրված դեպքերից մեկում, հենց «բուլի» աշակերտը պատմել է, որ թեև իրեն «ընտանիքում դաստիարակել և դրական արժեքներ են փոխանցել, նա երկար տարիներ բուլինգի է ենթարել դասընկերուհուն»: Պատճառը ըստ նրա, այն էր, որ ուսուցիչները միշտ կոծկում էին իր արարքները, երբեք լրջորեն չեն խոսել իր հետ, որևէ կերպ չեն պատժել: Նրա խոսքով, նա այնքան ժամանակ շարունակեց բուլինգը, մինչ զգաց, որ կարող է հայտնվել ուստիկանությունում իր արարքի համար: Այսպիսով, դաստիարակությունը գուցե կարող է բուլինգի պատճառ լինել, սակայն դպրոցական վերահսկման մեխանիզմները անհրաժեշտություն են նման դեպքերը կանխարգելելու համար:

Գծապատկեր 6. Աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում բուլինգի պատճառները



Աշակերտները առավել հաճախ բուլինգի են ենթարկվում արտաքին տեսքի համար՝ դիմագծերի, մարմնի կառուցվածքի, հագուստի և այլն: Բուլինգի ենթարկվող աշակերտները «չեն կարողանում իրենց պաշտպանել», «իրենց դիրքը դնել», «խոսքով պատասխան տալ» և այլն: Ըստ էության, աշակերտները խոսում են արդյունավետ հաղորդակցության հմտությունների, ինքնավստահության և ինքնաներկայացման հմտությունների պակասի

մասին է: Քանի որ, նշվել են օրինակներ, երբ հակառակն է եղել, և աշակերտը հագնվել է դասարանում ընդունված կանոններից դուրս, կամ չի եղել ֆինանսապես ապահովված ընտանքից, սակայն չի ենթարկվել բուլինգի և ունեցել է լիդերի կարգավիճակ: Այստեղ հագուստը, կամ արտաքին տեսքը դասարանի և հասակակիցների սպասումներին համապատասխանեցնելը ավելի շատ բուլինգի պոտենցյալ գոհ չլինելու կանխարգելման:

Աշակերտների կողմից պատմված բուլինգի դեպքեր.

*«Ինքը սենց պուճուր, մուճուր, աչքի չընկնող, վատ սովորող աղջիկ աս, տղաներին կյանքս աստում, ու սաղ դասարանը խնդումա իրա վրա, սաղ տղեքը ձեռ են առնում:
Եղել աս որ ասել աս խսպորս կասեմ, բայց էդ ախպերը փոքր աս, ու դրա համար ավելի են ձեռ առնում»:*


*«Ինձ փոքրուց դաստիարակել են այնպես, որ պետք է օգնել, եթե որևէ մեկին ծաղրում են, կողքը կանգնել, բայց ես միշտ անում էի հակառակը: Իմ դասարանի աղջիկներից մեկին տանել չէի կարողանում, էլ ծեծում էի, էլ ձեռք էի առնում, ամեն ինչ, ինչ կարաք պատկերացնեք ես իրա գլխին սարքում էի, ու դասատուները էդ հարցին էդքան ուշադրություն չէին դարձնում, ոնց որ կոծկում էին, ու անցնում առաջ, իմ սխալը չէր պատժվում ոչ մի անգամ ու ես էլ մտածում էի էս անգամ էլ անեմ, ու էլ չեմ անի:
Մյուս աշակերտներն էլ մտածում էին որ դա երբեք իր դեմ չի կարող շուռ գալ, կոպիտ ասած ինքը լիդեր է, միանում են բուլինգի: Ու իրենց լավ էլ հաճելի է բուլինգի ենթարկելը: Երբ մարդը անպատիժ է մնում, ինչ-որ մարդկային բան իր մեջ կորում է»:*

«Ինձ բուլինգի էին ենթարկում, որ ես ասենք իրենց նման հոթ-դոգ չէի տանում դասի այլ խնձոր ու էդ կարգի բաներ: Ինձ բուլինգի էին ենթանկում ... սիրահարվելու ու կոտորվելու պահով: Ինձ բուլինգի են ենթարկել տղա ընկերներ ունենալու համար, հիմա ես փոխվել եմ և բոլորին իրենց տեղը դրել, ու հիմա ամեն ինչ կարգին է»:

3.1 Բուլինգի հետևանքները աշակերտների վրա

Թե՛ աշակերտների միջև բուլինգը, թե՛ աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առկա բուլինգը աշակերտների շուրջ 70%-ի կարծիքով ծայրահեղ բացասական կամ բացասական ազդեցություն ունի դպրոց հաճախելու և սովորելու մոտիվացիայի վրա:

Գծապատկեր 7. Աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում բուլինգի ազդեցությունը դպրոց հաճախելու և սովորելու մոտիվացիայի վրա



Աշակերտները նշել են նաև, որ բուլինգը բացասաբար է ազդում է նրանց ինքնագնահատականի, ինքնաընկալման, սեփական անձի մասին պատկերացումների վրա: Ուսուցչի կողմից անհարգալից վերաբերմունքը, բռնությունը աշակերտները ցավագին են ընդունում նաև այն պատճառով, որ դա տեղի է ունենում խմբում, դասընկերների ներկայությամբ: Աշակերտների կարծիքով դա ավելի վիրավորական է, հատկապես եթե կան իր համար «նշանակալի ուրիշներ», իրենց խոսքով՝ «հավանաձ» տղա կամ աղջիկ:

3.2 Աշակերտների, ուսուցիչների եւ ծնողների վարքը բուլինգի դեպքերի ականատես լինելիս

Ֆոկուս-խմբային քննարկումների, խորին հարցազրույցների և առցանց հարցման արդյունքների համադրումից պարզ է դառնում, որ բուլինգի 40 % դեպքերում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները միջամտում են, փորձում կառուցողական լուծում գտնել իրավիճակի համար: Ծնողները ավելի քիչ դեպքերում են տեղյակ և ավելի քիչ են միջամտում: Սակայն, բոլոր այս դեպքերում չկան հստակ ընթացակարգեր: Դեպքին միջամտում, արագ և արդյունավետ լուծում են փորձում տալ աշակերտների բնութագրմամբ բարեխիղճ ուսուցիչները և գիտակից աշակերտները, ովքեր նաև որոշակի հեղինակություն ունեն: Բարեբախտաբար, մոտ 40 % դեպքերում բուլինգի դեպքերը չեն անտեսվում, սակայն ընթացակարգերի, գործիքակազմերի և ֆորմալ պարտականություն ստանձնելու դեպքում, բուլինգի ավելի շատ դեպքեր կստանային կառուցողական լուծում: Հետազոտության ժամանակ բացահայտված այն դեպքերը, երբ երկարատև և բռնի բուլինգ է իրականացվել աշակերտի հանդեպ, կոծկվել, անտեսվել են և՛ ուսուցիչների, և՛ տնօրենների կողմից: Աշակերտների այս պնդումը լիովին համընկնում է փորձագետների նշած տեսանկյան հետ, համաձայն որի տնօրենները քրեորեն պատժելի արարքները կոծկում են, դպրոցի համբավը «չփչացնելու» համար:

- **Աշակերտների վարքը բուլինգի դեպքերի ականատես լինելիս**

Աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում բուլինգի ականատես լինելիս, գրեթե 40 % դեպքերում աշակերտները փորձում են միջամտել, և դադարեցնել բուլինգը: Հատկապես որոշակի դիրք և հեղինակություն ունեցող աշակերտների միջամտությամբ, (օր. բուլինգ կատարող աշակերտին սաստելով, բուլինգի ենթարկվողին աջակցելով, կամ նրանց միջև միջնորդ դառնալով) հիմնականում ստացվում է իրավիճակը շտկել և գցել կառուցողական հունի մեջ: Այստեղ կարևոր է նշել, որ միջամտությունը հաջող է, եթե միջամտող աշակերտը(ները) որոշակի դիրք ունեն դասարանում և չեն վախենում բուլինգի գոհ դառնալուց:

Աշակերտների շուրջ 30%-ը բուլինգի ականատես լինելիս ոչինչ չի ձեռնարկում: Հիմնականում, այս աշակերտները կամ չունեն դիրք և հեղինակություն, կամ վախենում են, որ բուլինգի գոհին աջակցելու և բուլինգ իրականացնողի դեմ որևէ բան խոսելու դեպքում իրենք ևս կդառնան բուլինգի գոհ:

Աշակերտների մոտ 30 %-ը ակտիվ կամ պասիվ ձևով միանում է բուլինգ իրականացնող աշակերտին(ներին) և սկսում ծաղրել բուլինգի գոհին: Դա տեղի է ունենում 2 ձևով: Ակտիվ մասնակցությամբ, երբ իրենք ևս սկսում են բուլինգ իրականացնել թիրախավորված աշակերտի հանդեպ: Պասիվ մասնակցությամբ, օրինակ, ծաղրական կատակների, վրա ծիծաղելով, եթե բուլինգի գոհը օտարվել է, նրա հետ չչփվելով, նրա կողքին չնստելով և այլն:

Աղյուսակ 1.

Աշակերտների վարքը դպրոցում բուլինգի դեպքերի ականատես լինելիս			
Փորձում են կանխարգելել կամ լուծել միջադեպը, դրական ելք գտնելով իրավիճակից 36.6%	Ոչինչ չեն անում 31.0%	Անցնում են բուլերի/ուժեղ խմբի կամ անհատի կողմը 18.3%	Ծիծաղում են բուլինգի գոհի վրա 14.1%
Մեջբերումներ աշակերտների պատասխաններից			
<p>«Ուսուցիչները սովորաբար մասնակցություն չեն ունենում հարցի լուծմանը, հարցը լուծվում է գիտակից աշակերտների օգնությամբ»</p> <p>«Հատուկ են նաև դաստիարակված և բարձր մարդկային արժեքներով ու գիտակցությամբ աշակերտներն են փորձում միջամտել և կանխել համեմատաբար թույլերի հանդեպ իրականացվողը»:</p> <p>«Աշակերտներով փորձում ենք կանխել նման իրավիճակները գոնե մեր դասարանում, կայծի դեպքում միանգամից արձագանքում և չենք թողնում շարունակվի: Բացատրում ենք, որ չպիտի նման ձևով վարվեն դասընկերոջ նկատմամբ»:</p>	<p>«Աշակերտները մտածում են, որ եթե խառնվեն, ապա իրենք կլինեն բուլինգի հաջորդ գոհերը: Չեն ուզում խնդրի մեջ ներքաշվել և լուծում գտնել»:</p> <p>«Ծաղրանքի ենթարկվող աշակերտները հիմնականում լռում են՝ վախենալով կամ գուցե ամաչելով: Պատասխան չստանալով՝ ծաղրող աշակերտները շարունակում են իրենց չափազանց վատ պահվածքը: Բսկ կողքից դիտորդները հիմնականում արձագանք չեն տալիս»:</p> <p>«Աշակերտները ևս չեն միջամտում ծաղրողներին գոհ չդառնալու նպատակով, ասում են անուշադրության մատնիր կանցնի կգնա կամ ուղղակի լռում են»</p>	<p>«Աշակերտները սովորաբար ինքնագիտակցում չունեն: Գնում են այն կողմը, որտեղ ուժեղներն են»:</p> <p>«Ավելի շատ աջակցում են այն աշակերտին ով բուլինգ է սկսում»:</p> <p>«Աշակերտները հիմնականում անցնում են նրա կողմը, որ ավելի ուժեղ է»:</p> <p>«Ցավոք, միանում են ծաղրող կողմին»:</p> <p>«Աշակերտներից որոշները միանում են ճնշող աշակերտին»:</p>	<p>«Աշակերտները երբեմն չեն հասկանում պահի լրջությունը և ավելի են բորբոքում կրքերը (օրինակ բարձր ծիծաղելով վիրավորական կատակի վրա)»:</p> <p>«Աշակերտները հիմնականում չեզոք են նրանք ուրախանում են տեսնելով այդ երևույթը»:</p> <p>«Մեծ մասը փորձում է ստեղծել սեփական հումորը»:</p> <p>«Աշակերտները խնդում են»:</p>

• **Ուսուցիչների վարքը բուլինգի դեպքերի ականատես լինելիս**

Ըստ աշակերտների, ուսուցիչները ևս շուրջ 40 % դեպքերում ականատես լինելով իրավիճակին, փորձում է հետևողական, նրբանկատ ձևով իրավիճակը գցել կառուցողական հունի մեջ: Այստեղ կարևոր է այն, որ միջամտությունը մեկանգամյա չէ, և ուսուցիչը որոշ ժամանակ հետևում է իրավիճակին և տեղեկանում դեպքի դինամիկային: Մոտ 30 % դեպքերում, ուսուցիչները կրկին միջամտում են, սակայն չի հաջողվում իրավիճակը շտկել: Աշակերտների խոսքով, եթե ուսուցիչը նրբանկատ չէ, և իմանալով աշակերտների միջև լարվածության մասին, պարզապես բղավում է, հորդրում 2 կողմին էլ «հանդարտվել», առանց իրավիճակը լսելու և հստակեցնելու, ավելի բացասական ազդեցություն է ունենում, իրավիճակը չի շտկվում և լարվածությունը ավելի է խորանում:

Մոտ 5 % դեպքերում ուսուցիչը կամ ինքն է դրդում որ աշակերտի հանդեպ բուլինգ լինի, կամ էլ արդեն իսկ ընթացող բուլինգին է միանում, ծիծաղում ծաղրական կատակների վրա և այլն:

Շուրջ 20 % դեպքերում ուսուցիչները տեղյակ չեն բուլինգի դեպքի մասին:

Աղյուսակ 2.

Ուսուցիչների վարքը դպրոցում բուլինգի դեպքերի ականատես լինելիս					
Միջամտում են, փորձում են հարցը լուծել տևական ջանքերի միջոցով, և հասնում կառուցողական լուծման 40.0 %	Միջամտում են, փորձում են հարցը լուծել սակայն կառուցողական լուծման հասնել չի ստացվում 16.0%	Համարյա ոչինչ չեն անում 18.9%	Ուղղակի նկատողություն են անում, կամ այդ պահին բարկանում, ինչից հետո իրավիճակը մնում է նույնը 13.1%	Տեղյակ չեն 5.1%	Միանում են բուլինգին, ծիծաղում, ծաղրում բուլինգի ենթարկվող աշակերտին 4.6%
Մեջբերումներ աշակերտների պատասխաններից					
«Այդ մարդուն փորձում են խոսքով հասկացնել դիմացինի հետ այդպես վարվելու վատ հետևանքները»:	«Հիմնական միջադեպ հարթողը ուսուցիչն է, որի մոտ, սակայն, միշտ չէ, որ ստացվում է: Կարծում եմ՝	«Ուսուցիչները չեն անում լուծելու համար էական ինչ որ բան»: «Ուսուցիչները կամ չեն	«Ուղղակի բարկանում են և վերջ»: «Շատ-շատ նկատողություն անեն»:	«Ուսուցիչները հիմնականում ականատես չեն լինում այդ դեպքերին»: «Ամենակարևոր դեպքերը չեն	«Շատ դեպքերում ուսուցիչը ինքն է դրդում բուլինգի»: «Ուսուցիչները անտարբեր են, երբեմն իրենք էլ են կողմնակալ

<p>«Բաժանում են կոնֆլիկտ ունեցող երեխաներին ու փորձում հարցը երեխաների հետ խոսելով, հասկացնելով խոսել»:</p> <p>«Ուսուցիչները առանձնազույգ են ունենում, որի ժամանակ փորձում են հասկանալ առաջացած խնդրի պատճառը, և այնպես են լուծում այն, որ ոչ ոք չտուժի»:</p>	<p>մանավարժական կրթության թերությունն է»:</p> <p>«Ամեն մեկին մի երկու բան ասում, ուղարկում են իրանց դասարանները ու վերջ: Այդ պահին կարող է հանգստացնեն ու վերջ»:</p>	<p>նկատում, կամ նկատելիս հազվադեպ են միջամտում»:</p> <p>«Կատակի են տվել, մեծ հաշվով ոչ մի բան»:</p>	<p>«Էրեխեք հանգստացեք ասեն և վերջ»:</p> <p>«Միայն անօգուտ նկատողություններ»:</p> <p>«Ուղղակի ասում են չի կարելի ու վերջ, տաս րոպե հետո սաղ անցած ա լինում, բայց իհարկե հեշ որ էտ աշակերտը տաս րոպե առաջ էն մեկին ինչ ասես ասեց»:</p>	<p>նկատում»:</p> <p>«Ուսուցիչներին բուլինգի ենթարկված անձինք չեն պատմում եղելությունները, չվստահելով, մտածելով որ կտարածվի ամբողջ դպրոցում/քոլեջում»</p>	<p>վերաբերվում և նվաստացնում, բամբասանքների տարածմանն են մասնակցում և քննադատում սաստելու փոխարեն»:</p> <p>«Հիմնականում ոչինչ: Ցավոք սրտի, երբեմն ուսուցիչները հենց իրենք են հանդիսանում ագրեսորներ և սկիզբ դնում բուլինգին»:</p>
---	--	---	--	--	---

• **Ծնողների վարքը բուլինգի դեպքերի ակնառես լինելիս**

Ծնողները հիմնականում տեղյակ չեն, որ իրենց երեխան դպրոցում բուլինգի է ենթարկվում: Աշակերտները նշում են, որ մեծամասամբ ծնողի միջամտությունը այդքան էլ արդյունավետ չէ, և ավելի է բարդացնում երեխայի վիճակը: Բուլինգը չի դադարում, երեխան ավելի է մեկուսանում դասարանից: Նաև նշվեց որ բուլի երեխաների ծնողները երբեմն հենց իրենք էլ խրախուսում են, և նույնիսկ հպարտ են իրենց երեխայի պահվածքով:

ԳԼՈՒԽ 4. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

4.1 Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առաջացող խնդիրները, դրանց պատճառները և հնարավոր լուծումները ըստ ուսուցիչների

Գրեթե բոլոր ուսուցիչները աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում բուլինգի և այլ դեստրուկտիվ դրսևորումների պատճառները տեսնում են մի քանի մակարդակներում և շերտերում:

- Հասարակությունում առկա ոչ բարենպաստ պատկերացումները ուսուցչի կերպարի և աշխատանքի վերաբերյալ
- Ուսուցչի կերպարի, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների խեղաթյուրումը
- Ուսուցչի հանդեպ հարգանքի նվազումը վերջին տարիներին

Մեջբերում.

«Երբ մենք էինք դպրոցական, ամաչում էինք ուսուցչանոցի դուռը բացել և տեսնել որ ուսուցչուհին սուրճ է խմում, հիմա աշակերտը փողոցում տեսնում, նույնիսկ կարող է չբարնել»

«Ուսուցչին տարբեր հաղորդումներով, հումորային շոուներով ներկայացնում են որպես անհաջողակ կերպար, աշակերտի հարգանքն էլ նվազում է, կարծրատիպեր և կանխատրամադրվածություն են ստեղծում»:

- Ընտանիքում դպրոցի վերաբերյալ երեխային բացասական վերաբերմունք և վարքականոններ սերմանելը, դպրոցում պատշաճ պահվածք չսովորեցնելը:
- Ընտանիքում առկա լարվածությունը երեխային փոխանցելը, ինչն էլ տեղափոխվում է դպրոց:
- Ծնողների հետ կառուցողական շփում հաստատելու դժվարությունը:

Մեջբերում.

«Երբ երեխայի վարքի վերաբերյալ ծնողին փորձում են տեղեկացնել, ծնողը ուսուցչին է սկսում մեղադրել, արժեզրկել, կասկածի տակ դնել նրա գիտելիքները և այլն: Կամ էլ, ասում, որ երեխան տանն էլ ունի խնդիրներ, և փորձեք մի կերպ «յոլա տանել» էդպես է, եթե երեխան

դպրոցում խնդիրներ ունի, սովորաբար տանը նույնպես նա պրոբլեմատիկ է»:

- Հանրակրթության ոլորտում առկա համակարգային խնդիրները, ճգնաժամային իրավիճակը
- Դպրոցում կարգ ու կանոն հաստատելու մեխանիզմների բացակայությունը խանգարում է առողջ մթնոլորտ ձևավորելուն: Ուսուցչին չեն տրվում լծակներ աշակերտների վարքը վերահսկելու համար, բղավելը արգելվում է, սակայն այլ լծակներ էլ տրված չեն:

Մեջբերում.

«Խնդիրն էն ա, որ բոլորը ուսուցչին են փորձում ինչ որ բան սովորեցնել, բայց խնդիրը ուսուցչի հմտությունը չի: Համաձայն եմ կան շատ ուսուցիչներ, որ սովետից եկող մեթոդիկայով չեն ստիպում երեխիսեքին իրենց ենթարկվեն կամ լսեն: Ուսուցչի գործը ուսուցչություն անելն է, բայց դու դա չես կարող անել, եթե քեզ կամ էլ իրենց լարված դրության մեջ պահես: Ես չեմ կարծում որ դասարանի կարգուկանոնը ուսուցչի վրա պետք է լինի»:

- Ուսուցիչների սոցիալական ոչ բարենպաստ պայմանները, ցածր աշխատավարձը, որի հետևանքով, ուսուցիչը մոտիվացված չէ աշակերտի հետ լրացուցիչ աշխատանք կատարել, կամ զբաղվել բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմամբ:
- Աշակերտի կողմից դասով, ուսմամբ, և տվյալ առարկայով հետաքրքրված չլինելը
- Հատկապես խոցելի են աշակերտների ընկալումներով «ոչ այնքան առաջնահերթ և կարևոր առարկաների ուսուցիչները», կամ այն առարկաների, որոնք տվյալ աշակերտը բուհ ընդունվելու համար քննություն չի հանձնելու:
- Դեստրուկտիվ դրսևորումներ կարող են լինել դասը ամեն գնով տապալելը, օր. 7-րդ դասարանում մի աշակերտուհի դեղ է լցրել ուսուցչուհու բաժակի մեջ, որպեսզի ուսուցչուհին իրեն վատ զգա և դասը չկայանա:
- Չեզոք դրսևորումներ, օր. աշակերտները խնդրում էին դասի ժամին դասից դուրս թեմաներով զրուցել, կյանքի մասին, հետաքրքրվում էին ուսուցչուհու մասին և այլն:
- Ավագ դպրոցի աշակերտները կարող են պարզապես չհաճախել դասին, կամ ներկայանալ, բայց անտարբեր սպասել դասաժամի ավարտին: Դա ավելի շատ խնդիրներ է ստեղծում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում: Իսկ աշակերտների միջև

հարաբերությունները ավագ դպրոցում լարված չեն, եթե իրար չեն հավանում, կամ ընդհանուր հետաքրքրություններ չունեն, պարզապես չեն շփվում:

- Ավագ դպրոցում, ուսուցիչները չեն հասցնում ճանաչել աշակերտին, նրա բնավորությունը, և անհատական մոտեցում ցուցաբերել: ըստ նրանց, դա ազդում է ն' իրենց աշխատանքի վրա, և՛ աշակերտի մոտիվացիայի վրա.

Մեջբերում.

«Տեսնում ենք, որ միջին դպրոցից աշակերտը բարձր գնահատականներով եկել է, բայց ավագում սկսել է վատ սովորել, դասերին չհաճախել, կարծում ենք նրանց համար ևս դժվար է հարմարվելը: Մեր համար իսկապես բարդ է, մենք, ո՛չ մանկավարժներս, ո՛չ էլ աշակերտները, պատրաստ չեինք ավագ դպրոցին»:

- Ուսուցիչների խոսքով, հազվադեպ է լինում, որ աշակերտի նեգատիվ վարքը պայմանավորված լինի ուսուցչի անձով, հիմանականում ուսման գործընթացից դժգոհությամբ է պայմանավորված:

Ուսուցիչները նշեցին դպրոցում կարգուկանոնի մեխանիզմների ներդրման անհրաժեշտության մասին, քանի որ կարծում են, որ ուսուցիչը պետք է առավելապես զբաղվի գիտելիքի փոխանցմամբ, ոչ թե կարգուկանոնի հաստատմամբ, որի պատճառները իր դասապրոցեսից դուրս են (այսինքն հասարակությունից, մշակույթից, ընտանիքից, կամ կրթական համակարգի խնդիրներից եկող խոչընդոտներ են):

Ուսուցիչները նշեցին մի քանի կարևոր հանգամանք, որոնց առկայության դեպքում բուլինգի դրսևորումները ավելի քիչ կլինեն: Դրանք են՝

- Դասարաններում աշակերտների թվաքանակի նվազեցում: Դա թույլ կտա ուսուցչին ավելի զգայուն լինել աշակերտների կարիքների հանդեպ, վաղ հայտնաբերել լարվածությունները:
- Դպրոցում խստության ավելացում: Խիստ տնօրենի առկայություն: Աշակերտը պետք է իմանա, որ ոչ պատշաճ պահվածքի համար կարող է հեռացվել դպրոցից, և մեկ այլ դպրոց իրեն հեշտությամբ չի ընդունի հեռացված լինելու դեպքում:
- Դպրոցում էթիկայի հանձնաժողովի ներդրում, որտեղ կքննարկվեն աշակերտների կողմից կատարված արարքները, աշակերտների, ուսուցիչների և ծնողների ներկայությամբ: Աշակերտի համար հանձնաժողովը կսահմանի պատժամիջոցներ:

- Ուսուցիչները նշեցին պատժամիջոցի մի քանի օրինակ, որոնք ըստ իրենց հայկական միջավայրում աշխատող կլինեն.
- Աշակերտի կողմից հասարակական աշխատանքների կատարում, օր. դպրոցի մաքրությամբ զբաղվելը:
- Ֆինանսական տուգանք:

Գրեթե բոլոր ուսուցիչները խոսեցին այն մասին, որ աշակերտները կարող են տեսանկարահանել ուսուցչին, եթե կարծում են, որ ուսուցիչը խախտում է աշակերտի իրավունքները: Ըստ նրանց, դա արդյունավետ մեխանիզմ չէ, և միայն խոցելի է դարձնում ուսուցչին, նշվեց նաև օրինակ, երբ տեսամոնտաժի միջոցով ուսուցչուհու մասին հոլովակ էին պատրաստել և ներբեռնել համացանց, կիրբերովինգի գոհ դարձնելով ուսուցչուհուն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնական բացահայտումներ

Փորձագետները նշել են մի քանի համակարգային խնդիրներ, որոնք նպաստում են դպրոցում բուլինգի դրևստրումներին և խոչընդոտում բուլինգի կանխարգելմանը: Դրանք են՝

- Դպրոցի, ուսման և ուսուցչի վերաբերյալ հանրային ընկալումներում բացասական կերպարների և ըմբռումների ձևավորումը:
Փորձագետների մի մասը սա կապում է մեղիայում ստեղծվող ծաղրական և արժեզրկող բովանդակությամբ հումորային հաղորդումների, սերիալների, անեկդոտների հետ, ինչը ուսուցչին խոցելի է դարձնում աշակերտների և ծնողների հետ փոխհարաբերություններում:
- Ընտանիքի դերը դպրոց-ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում.
 - Եթե ընտանիքը հետևողական չէ, չի ստացվում աշակերտ-ուսուցիչ-ծնող կապը, ինչը բարդացնում է ծնողի հետ համագործակցելով երեխայի վարքը բարեավելու փորձերը:
 - Եթե ընտանիքում ընդունված են ագրեսիվ վարքականոններ, կամ այլ դեստրուկտիվ արժեքներ, երեխան դա տեղափոխում է դպրոց:
- Քաղաքային դպրոցներում և հատկապես մայրաքաղաքի դպրոցներում կադրերի դանդաղ փոփոխությունը.
 - Դպրոցներում տևական ժամանակ դասավանդում են տարեց ուսուցիչներ: Քանի որ մայրաքաղաքում աշխատաշուկան մեծ է, երիտասարդները մանկավարժությունը չեն դիտարկում որպես առաջնահերթ նախընտրելի աշխատանք: Դպրոցները երիտասարդ մասնագետներով համալրվում են շատ դանդաղ:
 - Մանկավարժությամբ զբաղվել ցանկացող երիտասարդները նախընտրում են մանկավարժական կարիերա ստեղծել կամ մասնավոր կրթահամալիրներում, կամ այնպիսի ծրագրերում, ինչպիսին «Դասավանդի՛ր Հայաստան»-ն է: Հանրակրթական դպրոցները այս դեպքում ևս չեն համալրվում նոր, մոտիվացված, երիտասարդ մասնագետներով:
 - Այս խնդիրը համեմատաբար մեղմ է ոչ մեծ քաղաքներում և գյուղերում, քանի որ ուսուցչի աշխատանքը ընկալվում է որպես առկա լավագույն աշխատանքներից մեկը:
- Ուսուցչի աշխատանքի ցածր վարձատրությունը որոշ դեպքերում առաջ է բերում մի շարք ռիսկեր

- Ուսուցիչը մոտիվացված չէ կատարել իր անմիջական աշխատանքային պարտականություններից դուրս աշխատանք, լրացուցիչ ջանքեր ներդնել աշակերտների ուսման հարցում, կամ դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտը բարելավելու հարցում:
- Առաջ են գալիս կոռուպցիոն ռիսկեր, ուսուցիչը անհավասար/խտրական վերաբերմունք է ցուցաբերում աշակերտների հանդեպ: Ավելի լավ է վերաբերում այն աշակերտներին, ովքեր ֆինանսապես ապահովված ընտանիքներից են և ֆինանսապես աջակցում են ուսուցչին:
- Ուսուցիչը ճնշում է գործադրում իր մոտ «լրացուցիչ արտադասարանական պարապմունքների» համար, այս հիմքով ևս տարբերակված վերաբերմունք է ցուցաբերում այն աշակերտների հանդեպ ովքեր իր մոտ պարապում են և այն աշակերտների ովքեր չեն պարապում:
- Ուսուցիչների իրավունքների պաշտպանված չլինելը, դրսևորվում է մի քանի մակարդակներում և խոցելի է դարձնում ուսուցչին գործատուի, ծնողների և աշակերտների հետ շփումներում
- Որոշ դպրոցներում տնօրենների քաղաքականացված/կուսակցականացված լինելը:
- Ուսուցիչների այն համոզմունքը, որ իրենք այլ աշխատանք չեն կարողանա գտնել: Դաստիպում է համակերպվել աշխատանքային իրավունքների պաշտպանված չլինելու հանգամանքի հետ և չբարձրաձայնել խնդիրների մասին:

Մեջբերում.

«Մենք ունենք մոտավորապես 30.000 ուսուցիչ, ու շատ դժվար է գտնել մարդկանց, ովքեր եղել են օբյեկտիվ, անաչառ, գիտակցել են իրենց իրավունքները: Մա շատ մեծ խոցելի խումբ է, իսկ եթե այդ խումբը խոցվում է պետության կողմից, ինքը մեխանիկորեն դառնում է խոցելի այն միջավայրում, որտեղ աշխատում է»:

- Աշակերտների հետ փոխհարաբերություններում առավել խոցելի են հոգեպես անկայուն ուսուցիչները:

- Բոլոր փորձագետները նշեցին կիբեռբուլինգի¹² ակտուալ դառնալը: փորձագետները ընդգծեցին, որ կիբեռբուլինգը բազմաթիվ ռիսկեր է պարունակում, և ավելի դժվար կառավարելի և վերահսկելի է քան դպրոցի պատերի ներսում տեղի ունեցողը: Կիբեռբուլինգի գոհ կարող են դառնալ թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները: Նշվեց 1 դեպք, երբ ուսուչին բարկացած ժամանակ նկարահանել են մի քանի տարբեր օրեր, տեսանյութերը մոնտաժել և ներբեռնել համացանցում, ուսուցչին դարձնելով ծաղրի առարկա:
- Եվ՛ կիբեռբուլինգի, և՛ դպրոցի պատերի ներսում տեղի ունեցող բուլինգի վերահսկման և կանխարգելման տեսանկյունից նշվեց տարբեր դպրոցների և ընտանիքների անհավասար ռեսուրսների մասին: Անհրաժեշտություն կա ուղեցույցների և գործիքակազմերի մշակման, որոնցով կառաջնորդվեն բոլոր դպրոցները, և կլինեն քիչ թե շատ հավասար պայմաններում:
- Աշակերտների իրավունքների տեսանկյունից, փորձագետները նշեցին հատկապես ծանր դեպքերի կոծկումը տնօրինության կողմից: Բուլինգի կարգավորումը տեղի է ունենում ոչ թե երեխայի լավագույն շահից ելնելով, այլ դպրոցի հեղինակությունը չփչացնելու տեսանկյունից: Տնօրենները շահագրգռված են, որպեսզի իրենց դպրոցը լավ համբավ ունենա, աշակերտների հոսքը չնվազեցնելու համար:

Մեջբերում.

«Անչափահասների բաժին 30 դեպքից միայն 2-ն է եղել դպրոցի ուղղորդմամբ: Դե պատկերացրեք, թե ինչքան են տնօրենները կոծկում դպրոցում կատարվող բացասական երևույթները»:

- Փորձագետների մի մասը կարծում է, որ աշակերտների շրջանում առկա բուլինգը խմբային դինամիկային և դեռահասությանը տիպիկ երևույթ է, և կարող է դրական փորձ դառնալ

¹² Կիբեռբուլինգի սահմանումը ըստ ՅՈՒՆԻՄԵՏԻ՝
 Կիբեռբուլինգը բուլինգն է թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: Այն կարող է տեղի ունենալ սոցիալական մեդիայի, հաղորդագրությունների հարթակների (messengers), խաղային համակարգերի և բջջային հեռախոսների միջոցով: Դա կրկնվող, նպատակաուղղված վարք է, որի նպատակն է վախեցնել, զայրացնել կամ խայտառակել/պարսավել/հանրային ամոթի առարկա դարձնել թիրախին: Օրինակները ներառում են.
 Դեմ առ դեմ բուլինգը և կիբեռբուլինգը հաճախ կարող են պատահել զուգընթաց, սակայն կիբեռբուլինգը թողնում է նաև մեդիահետք:
 Տես <https://www.unicef.org/end-violence/how-to-stop-cyberbullying>

աշակերտի համար, եթե ուսուցիչները հետևեն խմբային դինամիկային և տարբեր տեխնիկաների և խաղային պրակտիկաների օգնությամբ զարգացնեն աշակերտների հաղորդակցության հմտությունները: Եթե բուլինգը շարունակվում է և աշակերտին չեն փորձում հզորացնել, զոհի կամ ագրեսորի վարքը դառնում է վարքային նմուշ և պահպանվում երկար տարիներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ տվեց բացահայտել Երևան քաղաքի ավագ դպրոցներում բուլինգի վերաբերյալ մի շարք առանձնահատկություններ. Դրանք են՝

- Եվ՝ բուլինգի պատճառները, և՛ դրսևորումները բազմաշերտ են, և պայմանավորված են թե՛ հասարակության մշակութային առանձնահատկություններով, թե՛ կրթական համակարգի թերություններով, թե՛ դեռահասներին բնորոշ խմբային դինամիկայի առանձնահատկություններով:
- Թեման մեծ արձագանք գտավ աշակերտների շրջանում: Նրանք այդ մասին խոսելու, իրենց ձայնը լսելի դարձնելու պահանջմունք ունեն:
- Խնդրահարույց են և՛ աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները, և՛ աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունները:
- Ուսուցիչների հետ փոխհարաբերություններում աշակերտները զգալի մասը զգում են մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակաս: Նրանք իրենց զգում են չկարևորված, իրենց կարիքները անտեսված, հոգեբանական և ֆիզիկական սահմանները ոտնահարված:
- Որոշ ուսուցիչների կողմից առկա է աշակերտների հանդեպ տարբերակված մոտեցումը (աշակերտի ինտելեկտուալ կարողությունների, առաջադիմության, ընտանիքի ֆինանսական ապահովվածության, ուսուցչի մոտ արտաժամյա պարապել/չպարապելու և այլ գործոնների հիման վրա:
- Թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները նշում են դպրոցում կարգուկանոնի ավելի արդյունավետ մեխանիզմների ներդրման մասին, քանի որ դեստրուկտիվ վարքով աշակերտները խանգարում են մյուս աշակերտների և ուսուցիչների արդյունավետ ուսումնական գործընթացին:
- Աղջիկների և տղաների բուլինգի դրսևորումները ունեն առանձնահատկություններ, բուլինգի հաճախականության, պատճառների, տևողության, ընթացքի և լուծման մեխանիզմների տեսանկյունից:
- Բուլինգի տեսանկյունից խոցելի են կոմունիկացիոն արդյունավետ հմտություններ չունեցող և շատ ընկերներ չունեցող աշակերտները:

- Բուլինգի ականատես աշակերտների և ուսուցիչների զգալի մասը փորձում է միջամտել և կառուցողական լուծում տալ բուլինգի ականատես լինելու դեպքում, սակայն հմտությունների պակասի պատճառով միշտ չէ որ հաջողվում է:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հետազոտության արդյունքնում ստացված բազմաշերտ և բազմակողմանի տեղեկատվության հիման վրա, ձևակերպել ենք դպրոցական միջավայրում բուլինգի կանխարգելման հետևյալ առաջարկները.

Առաջարկում ենք ԿԳՄՄ նախարարության հանրակրթության բաժնին՝

(Աշակերտների կարծիքի հիման վրա)

- Աշակերտների համար ստեղծել ինստիտուցիոնալ մեխանիզմներ, տարին մի քանի անգամ ուսումնական պրոցեսի և մանկավարժական անձնակազմի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելու համար: Աշակերտները կարիք ունեն լսված լինել, և իրենց հուզող հարցերը բարձրաձայնելու հնարավորություն ունենալ: Այսպիսով առաջարկվում է՝
 - Տարին մի քանի անգամ անանուն սոցիոլոգիական հարցումների կազմակերպում, ուսումնական գործընթացի տարբեր բաղադրիչների վերաբերյալ իրենց կարծիքը/վերաբերմունքը արտահայտելու նպատակով
 - Ամիսը 1-2 անգամ տնօրենի և ուսուցչական անձնակազմի հետ անմիջական քննարկումների կազմակերպում, որտեղ աշակերտները կկարողանան խոսել իրենց հուզող հարցերի մասին
- Ներդնել բուլինգի դեպքերի ահազանգման անվտանգ մեխանիզմներ՝
 - Արկղի տեղադրում, որտեղ կարող են գցել անանուն գրառումներ իրենց հուզող հարցերի վերաբերյալ
 - Սոցիալական կայքերում դպրոցի կողմից էջի բացում, որին աշակերտները կկարողանան գրել/ահազանգել իրենց հուզող հարցերի վերաբերյալ (հատկապես բուլինգի դեպքերի)
 - Թեժ գծի ստեղծում, որտեղ աշակերտները իրենց հուզող հրատապ հարցերով կարող են անանուն զանգ կատարել
- Աշակերտներին տրամադրել իրենց դասացուցակի կազմմանը մասնակցելու հնարավորություն: Նրանք կցանկանային ունենալ ընտրովի առարկաներ, ինչը թույլ կտա հաճախել այն առարկաներին, որոնք իրենց իսկապես հետաքրքիր են: Բուլինգի առումով, սա թույլ կտա նվազեցնել ուսուցիչների և աշակերտների միջև լարվածությունը այն դեպքերում, երբ աշակերտը հետաքրքրված չէ տվյալ առարկայով:

- Ներդնել պրակտիկ գիտելիքներ տրամադրող առարկաներ: Աշակերտները կցանկանային ունենալ կիրառական արվեստի և արհեստի, մասնագիտացումների մի քանի ընտրովի առարկա, որոնց հաճախելով կստանան կիրառական գիտելիքներ, ինչպես նաև վկայական, որով դպրոցն ավարտելուց հետո կկարողանան աշխատել այդ հմտությամբ: Ինչպես նաև, ստեղծել անվճար խմբակներ, որոնց ըստ ցանկության կարող են հաճախել աշակերտները: Աշակերտների կարծիքով սա ևս կբարելավի դպրոցում ընդհանուր մթնոլորտը, հատկապես ավագ դպրոցում կբարձրացնի աշակերտների՝ դպրոց հաճախելու մոտիվացիան:
- Ներդնել անվճար արտաժամյա պարապմունքներ բոլոր, կամ աշակերտների կողմից առաջնահերթ համարվող առարկաներից: Դա թույլ կտա լուծել «ուսուցչի մոտ պարապելու» հարցը, քանի որ վերջինս դառնում է աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում կոնֆլիկտի պատճառ, կամ ուսուցչի կողմից մանիպուլացիաների և տարբերակված մոտեցման առիթ:
- Ներդնել պրոֆեսիոնալ հոգեբանական թիմ, որը կկարողանա աջակցություն տրամադրել դպրոցի աշակերտներին և անձնակազմին: Աշակերտների մեծամասնության կարծիքով յուրաքանչյուր աշակերտ պետք է հնարավորություն ունենա որակյալ հոգեբանական աջակցություն ստանալ դպրոցում:
- Ներդնել կամ ավելացնել դպրոցական միջավայրում կրթության ոչ ֆորմալ բաղադրիչը: Դա կօգնի աշակերտների միջև առողջ հարաբերությունների հաստատմանը, և կնպաստի աշակերտների անձնային աճին: Մասնավորապես,
 - Թիմային աշխատանքների ավելացում, թիմում աշխատելու կարողությունների զարգացում
 - Խմբային աշխատանքների ավելացում, խմբով առաջադրանքներ կատարելու հանձնարարությունների ձևաչափի ներմուծում
 - Ֆիլմի դիտում և քննարկումների կազմակերպում
 - Դասարանով հաճախակի անվճար էքսկուրսիաների հնարավորություն
 - Դասղեկի հետ քննարկումներ, որտեղ աշակերտները անմիջականորեն կկարողանան քննարկել իրենց հուզող հարցերը
 - Աշակերտները կցանկանային նաև որպես առարկա ուսումնասիրել հոգեբանություն և դաստիարակություն: Ըստ նրանց, դա թույլ կտա բարելավել մարդկային փոխհարաբերությունների բնույթը և նվազեցնել բուլինգը:

- Ներդնել դասաժամի վարման ժամանակակից մոտեցումներ: Առկա մոտեցումները աշակերտները համարում են հնացած, ինչն էլ պատճառ է դառնում ուսման հանդեպ ցածր հետաքրքրվածության և հանգեցնում ուսուցիչների հետ լարված փոխհարաբերությունների:
- Վերապատրաստումների միջոցով նպաստել ուսուցիչների հոգեբանական և մանկավարժական հմտությունների զարգացմանը:
 - Գրեթե բոլոր աշակերտները նշել են, որ ուսուցիչների մոտ հոգեբանական և մանկավարժական հմտությունների պակասը շատ բացասական է ազդում նրանց հոգեկան բարեկեցության և ուսման մոտիվացիայի վրա:
- Ներդնել աշակերտների կարգապահության և բարեվարքության արդյունավետ մեխանիզմներ, որոնք թույլ կտան ուսուցիչներին կենտրոնանալ գիտելիք փոխանցելու գործառույթի վրա: Որպես այդպիսի մեխանիզմներ, աշակերտները, ուսուցիչները և փորձագետները առաջարկել են՝
 - Էթիկայի հանձնաժողովի ստեղծում, որտեղ ուսուցիչների, աշակերտների և ծնողների ներկայությամբ կքննարկվի աշակերտի արարքը, և կսահմանվեն նրա վարքի շտկման և պատժի ձևաչափեր: Որպես պատժի արդյունավետ տարբերակներ, առաջարկվել են՝
 - Հասարակական աշխատանքների կատարում (օր. դպրոցի մաքրությանը մասնակցել)
 - Որոշակի վարքականոնների խախտումների դեպքում ֆինանսական տուգանքների վճարում աշակերտի կամ իր ընտանիքի կողմից
 - Գրավոր նկատողությունների համակարգի ներդրում, որոշակի քանակի դեպքում դպրոցից հեռացում
 - Դպրոցից հեռացված լինելու դեպքում այլ դպրոց ընդունվելու մեծ դժվարություններ
- ԱՍՀՆ և ԿԳՄՄՆ ԿՈՂՄԻՅ բուլիվարք դրսևորող և բուլինգի ենթարկվող աշակերտների ծնողների հետ աշխատանքների կատարում:
- Տեղական զանգվածային լրատվամիջոցների միջոցով մանկավարժի աշխատանքի հեղինակության բարձրացմանը ուղղված տեղեկատվական արշավներ, սոցիալական հոլովակների ստեղծում: Դա թույլ կտա գործող մանկավարժների սոցիալական դերի արժեվորում, որոշ չափով նրանց խոցելիության հաղթահարում, ինչպես նաև նոր, երիտասարդ կադրերի շրջանում մանկավարժական աշխատանքի հանդեպ հետաքրքրության բարձրացում: Սա կնպաստի աշակերտների կողմից ուսուցիչների հանդեպ

հարգալից վերաբերմունքի ձևավորմանը և ուսուցչի խոցելիության նվազմանը գործատուի հետ հարաբերություններում:

- Տնօրենների վերապատրաստում որպես կրթության ոլորտի կառավարիչների
- Ուսուցիչների աշխատանքային իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրում: Աշակերտների և տնօրենի հետ փոխհարաբերություններում ուսուցչի խոցելի լինելը նրան դարձնում է աշակերտների կողմից բուլինգի պոտենցյալ գոհ: Ուսուցչի աշխատանքային իրավունքների պաշտպանված լինելը թույլ կտա, որպեսզի նա վստահորեն կառավարի դասարանը, անհրաժեշտության դեպքում չվախենալով դիտողություն անել բուլի աշակերտներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Երեխաների կարծիքով» հարցման արդյունքներ, Երևան 2017

https://resourcecentre.savethechildren.net/node/12512/pdf/yv_brief_version_final_arm.pdf

2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում. իրավական վերլուծություն, Երևան 2017

https://www.unicef.org/armenia/sites/unicef.org/armenia/files/2019-01/no%20hyph%20report-complaint%20mechanism_HRDO.pdf

3. Małgorzata Wójcik and Maria Mondry “The Game of Bullying”: Shared Beliefs and Behavioral Labels in Bullying Among Middle Schoolers, 2020 American Psychological Association, 2020, Vol. 24, No. 4, 276 –293

<https://psycnet.apa.org/fulltext/2020-43455-001.html>

4. Respecting others: Anti-bullying overview: Guidance Guidance document No: 050/2011 Date of issue: September 2011

<https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullying-overview.pdf>

5. Olweus, D. Bullying at school: What we know and what we can do. Malden, MA: Blackwell Publishing (1993)

https://www.researchgate.net/publication/246876123_Olweus_D_1993Bullying_at_school_What_we_know_and_what_we_can_do_Malden_MA_Blackwell_Publishing_140_pp_2500

6. Weaver L.M A Content Analysis of Protective Factors Within States' Antibullying Laws, Journal of School Violence 12(2):156-173

https://www.researchgate.net/publication/263581347_A_Content_Analysis_of_Protective_Factors_Within_States'_Antibullying_Laws

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ընդունված 20.11.1989թ. Նյու Յորքում

ՄԱԿ-ի կողմից, վավերացված ՀՀ-ում՝ 22.07.1993

<https://www.unicef.org/armenia/%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%A>
[B-](#)

[%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B6%D5%BE%D5%A5%D5%B6%D6%81%D5%AB%D5%A1](#)

ՀՀ սահմանադրությունը, ընդունված 06.12.2015

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 29.05.1996

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>

«Հանրակրթության մասին ՀՀ օրենքը», ընդունված 10.07.2009

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

Այս հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ -
Հայաստանի ֆինանսական օժանդակությամբ և Հանրային քաղաքականության
ինստիտուտի խորհրդատվական աջակցությամբ:

Հետազոտության եզրահանգումներն
արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության
հիմնադրամներ -

Հայաստանի և Հանրային քաղաքականության ինստիտուտի դիրքորոշումների ու տեսակետ
ների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	Error! Bookmark not defined.
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	60
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	63
ԳԼՈՒԽ 1 ԲՈՒԼԻՆԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ	65
1.1 Բուլինգի սահմանումները	65
1.2 Բուլինգի կարգավորման միջազգային փորձը	68
1.3 Բուլինգի իրավական կարգավորումը ՀՀ-ում.....	72
ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	74
2.1 Բուլինգի ընկալումները դպրոցականների շրջանում (ի՞նչն են համարում բուլինգ)	74
2.2 Աշակերտների պատկերացումները դպրոցում մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ	76
2.3 Դպրոցականների վերաբերմունքը բուլինգի տարբեր դրսևվորումների նկատմամբ.....	78
2.4 Բուլինգի տեսակների եվ դրսևվորումների տարածվածությունը դպրոցում.....	79

ԳԼՈՒԽ 3. ԲՈՒԼԻՆԳԸ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	85
3.1 Բուլինգի հետեւանքները աշակերտների վրա	92
3.2 Աշակերտների, ուսուցիչների եվ ծնողների վարքը բուլինգի դեպքերի ականատես լինելիս	93
ԳԼՈՒԽ 4. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	97
4.1 Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առաջացող խնդիրները, դրանց պատճառները և հնարավոր լուծումները ըստ ուսուցիչների.....	97
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	101
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	105
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	106
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	110

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը կարևոր սոցիալականացման օղակ է, իսկ դասարանը առաջնային սոցիալական խումբ, որտեղ ինտենսիվորեն ձևավորվում են սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Այս առումով, հանրակրթության որակը ոչ միայն կրթության հասանելիությունը, բովանդակությունը և պատշաճ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, այլև անվտանգ հոգեբանական միջավայրը, որտեղ աշակերտը զերծ է ցանկացած բռնությունից և հնարավորություն ունի լիարժեք օգտագործել իր անձի զարգացման այդ կարևոր տարիները: Եվ եթե ֆիզիկական բռնությունը ավելի տեսանելի և դատապարտելի է, ապա սոցիալ-հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումներ (պիտակավորում, վիրավորանք, ծաղր, հայեոյախոսություն, կոպտախոսություն, բամբասանքներ, բացառում և այլն), որոնք միավորվել են bullying տերմինի ներքո, ավելի քիչ դատապարտելի են հասարակության կողմից, ավելի դժվար չափելի են, իսկ բացահայտման և կանխարգելման մեխանիզմները թե՛ օրենսդրական ակտերի բովանդակության, թե՛ դրանց կիրարկման մակարդակում ևս հստակ սահմանված չեն:

Ցավոք, 2018թ. Յունիսեֆի զեկույցը փաստում է, որ աշխարհում 13–15 տարեկան աշակերտների կեսը՝ 150 մլն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել, 39 զարգացած երկրներում 10 աշակերտից 3-ն ասել է, որ բուլինգի է ենթարկել իր դասընկերոջը¹³:

Ինչ վերաբերում է Հայաստանյան իրավիճակին, Save the Children-ի և World Vision-ի կողմից 2017 թ.-ին Հայաստանում իրականացված «Երեխաների կարծիքով» հետազոտության տվյալների համաձայն, միջին դասարանների աշակերտների շուրջ 40 %-ը շաբաթական 1-5 անգամ դպրոցում ականատես է լինում ծաղրի կամ կովարար պահվածքի: Առավել հաճախ (21% դեպքերում) ծաղրի են ենթարկվում արտաքին տեսքի համար¹⁴:

¹³ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից (2018թ. , Նյու Յորք) դպրոցական բռնության վերաբերյալ զեկույցի ամփոփ տվյալները՝ Տես՝ <https://cutt.ly/mlXzEkV>

¹⁴ Save the Children-ի և World Vision-ի կողմից իրականացված (2017թ.) «Երեխաների կարծիքով. . . » հարցման արդյունքները՝ Տես՝ https://resourcecentre.savethechildren.net/node/12512/pdf/yv_brief_version_final_arm.pdf

Բուլինգը բազմաշերտ և բազմամակարդակ երևույթ է, սակայն ՀՀ-ում իրականացված հետազոտությունները ավելի շատ ներկայացնում են բուլինգի տարբեր դրսևորումների տարածվածությունը, իսկ պատճառների, հետևանքների և լուծումների վերաբերյալ տեղեկատվություն գրեթե չկա: Ինչպես նաև, գրեթե ուսումնասիրված չէ այնպիսի կարևոր ասպեկտ, ինչպիսին ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններն են և բուլինգի կանխարգելման հնարավորությունները հայկական դպրոցական միջավայրում:

Սույն աշխատանքը Երևան քաղաքի դպրոցներում ավագ դպրոցի աշակերտների շրջանում բուլինգի առանձնահատկությունների հետազոտություն է: Ծրագրի ձեռքբերումներն են՝

- Երևան քաղաքի դպրոցական միջավայրում բուլինգի առանձնահատկությունների վերաբերյալ համապարփակ վերլուծություն
- Ստացված տվյալների հիման վրա և միջազգային փորձի հիման վրա ստեղծված առաջարկների փաթեթ
- ՀՔԻ և այլ գործընկերների աջակցությամբ հանրային քննարկումներ շահագրգիռ կողմերի շրջանում
- Թեմայի վերաբերյալ գիտահետազոտական հետաքրքրության և ուշադրության հրավիրում այլ հետազոտողների շրջանում

Նախ և առաջ, հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցականները թեմայի հանդեպ մեծ հետաքրքրություն ունեն: Բազմաթիվ աշակերտներ, սոցիալական ցանցերում տեղադրված առցանց հարցման հղումով հետադարձ կապ էին հաստատում, որպեսզի մասնակցեն նաև ֆոկուս-խմբային քննարկումներին: Առցանց հարցմանը ընդգրկված բաց հարցերին ստացել ենք հարյուրավոր ծավալուն պատասխաններ, որով աշակերտները փորձել են տալ «ինչու»-ների պատասխանները: Հարցման արդյունքում ստացվել են նաև դպրոցական բուլինգի բազմաթիվ պատմություններ, որոնք թույլ են տալիս կատարել մի շարք կարևոր բացահայտումներ: Աշակերտները նաև բազմաթիվ արժեքավոր գաղափարներ են ներկայացրել բուլինգի կանխարգելման մեխանիզմների վերաբերյալ: Նրանք անկեղծ հետաքրքրություն ունեն երևույթի ուսումնասիրության և դպրոցական միջավայրի բարելավմանը իրենց ներդրումն ունենալու, իրենց տեսանկյունը լսելի դարձնելու հարցում:

Այս հետազոտությունը առավելապես ներկայացնում է աշակերտների տեսանկյունը, սակայն պետք է նշել, որ հետազոտության շրջանակներում ուսուցիչների հետ իրականացված փոքրաթիվ հարցազրույցները փաստում են, որ ուսուցիչների շրջանում ևս կա լայնածավալ հետազոտության կարիք:

*Շնորհակալ ենք հետազոտությանը մասնակցած բոլոր աշակերտներին,
փորձագետներին և ուսուցիչներին, թեմայի ուսումնասիրության հարցում իրենց կարևոր
ներդրումը ունենալու համար:*

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

✚ Երևան քաղաքի ավագ դպրոցների դպրոցական միջավայրում բուլինգի դրսևորումների ուսումնասիրության շրջանակում առաջ են քաշվել հետևյալ հետազոտական հարցերը.

- Բացահայտել դպրոցահասակների շրջանում բուլինգի ընկալումները (ի՞նչն են համարում բուլինգ)
- Բացահայտել դպրոցահասակների շրջանում վերաբերմունքը բուլինգի զանազան դրսևորումների նկատմամբ
- Բացահայտել բուլինգի հնարավոր պատճառները
- Բացահայտել բուլինգի պատմություններ, ավելի ամբողջական, պատկեր ունենալու համար
- Բացահայտել բուլինգի ականատեսների վարքը
- Բացահայտել բուլինգի տեսակների և դրսևորումների տարածվածությունը
- Բացահայտել ուսուցիչների տեսանկյունը բուլինգի վերաբերյալ
- Ուսումնասիրել բուլինգի կանխարգելման և կարգավորման միջազգային փորձը
- Բացահայտել որոշում կայացնողների վերաբերմունքը խնդրին, արդյո՞ք երևույթը կարևորվում է և ինչ քաղաքականություն է մշակվում բուլինգի կանխարգելմանն ուղղված

✚ **Առաջ քաշված հետազոտական հարցերի բացահայտման նպատակով, կիրառվել են՝**

Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը, որտեղ Երևան քաղաքի տարբեր համայնքների ավագ դպրոցների աշակերտների հետ խմբային քննարկման արդյունքում վեր է հանվել դպրոցական միջավայրում առկա բուլինգի առանձնահատկությունների շուրջ դիսկուսիա: Իրականացվել է 6 ֆոկուս-խմբային քննարկում (3 քննարկում աղջիկների և 3 քննարկում տղաների հետ), յուրաքանչյուր քննարկմանը մասնակցել է 4-6 աշակերտ: Քննարկումների մի մասը անց է կացվել դեմառդեմ, իսկ մյուս մասը՝ առցանց: Լրացուցիչ խորքային

տեղեկատվություն ստանալու նպատակով իրականացվել է նաև 2 խորքային հարցազրույց:

Առցանց քանակական հարցման մեթոդը, որի արդյունքում վեր է հանվել բուլինգի տարբեր դրսևորումների հաճախականությունը, և այլ քանակական տվյալներ:

Հարցման ընտրանքը ձևավորվել է հետևյալ սկզբունքով. Armstat.am կայքից Երևան քաղաքի բնակչության ընդհանուր թվից դուրս է բերվել 15-18 տարեկան ազգաբնակչության մոտարկված թիվը: Գլխավոր համախմբությունը մոտարկված ՀՀ վիճակագրական վարչության կոմիտեի կայքի տվյալներով, կազմում է՝ 50,000 մարդ, իսկ ընտրանքը 5% վստահության սխալով՝ 362: Հարցմանը մասակցել է Երևան քաղաքի 15-18 տարեկան 362 աշակերտ: Հարցումների անհրաժեշտ քանակը ստանալու նպատակով, կիրառվել է ֆեյսբուքյան թիրախավորված գովազդը, անհրաժեշտ տարածքի (Երևան) և տարիքային խմբի շրջանակներում:

Առանցքային տեղեկատվությունների (ուսուցիչների) հետ խորին հարցազրույցի մեթոդը, որի շրջանակներում ուսուցիչների հետ իրականացվել է 6 հարցազրույց, բուլինգի վերաբերյալ նրանց տեսանկյունը վեր հանելու նպատակով: Ուսուցիչներն ընտրվել են Երևան քաղաքի 3 տիպի համայնքներից (Կենտրոն համայնք, կիսապերիֆերիկ համայնքներ, պերիֆերիկ համայնքներ), յուրաքանչյուր համայնքից՝ 2 ուսուցիչ:

Փաստաթղթերի վերլուծության մեթոդը, որով երկրորդային վերլուծության են ենթարկվել բուլինգի կանխարգելման միջազգային փորձից օրինակներ (ԱՄՆ և Ուելսի թագավորություն) և դպրոցներում բռնության կոմպոնենտի վերաբերյալ ՀՀ իրավական կարգավորումները:

Փորձագիտական հարցազրույցների մեթոդը, որով վեր են հանվել բուլինգի առանձնահատկությունների և կարգավորման մեխանիզմների վերաբերյալ մոտեցումներ: Իրականացվել է 5 փորձագիտական հարցազրույց:

ԳԼՈՒԽ 1 ԲՈՒԼԻՆԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1.1 Բուլինգի սահմանումները

Բուլինգի առաջին հետազոտությունները (սկսած 1970ականներից) բուլինգը սահմանում էին որպես՝ «ագրեսիվ, կանխամտածված վարք, խմբի կամ անհատի կողմից, որը ունի կրկնվող բնույթ, և ուղղված է զոհի դեմ, ով չի կարող հեշտությամբ պաշտպանել ինքն իրեն»¹⁵: Հետագայում, այս սահմանմանը ավելացվեց նաև ուժերի անհամաչափությունը զոհի և բուլինգ իրականացնողի միջև: Այս սահմանման մեջ կարելի է քննարկել վնասելու մտադրությունը և ուժերի անհամաչափությունը: Նախ, անձի խորքային մտադրությունը դժվար է վեր հանել: Բացի դա, եթե նույնիսկ բուլինգ կատարող անձի մտադրությունը գիտակցված չէ կամ վնասելու մտադրությունն առհասարակ չկա, միևնույն է զոհի համար հետևանքները նույնն են, ինչ վնասելու գիտակցված մտադրությամբ գործելու դեպքում: Ուստի, բուլինգը առավել նպատակահարմար է սահմանել զոհի համար ունեցած հետևանքների տեսանկյունից:

Ինչ վերաբերում է ուժերի դիսբալանսին, ապա եթե ֆիզիկական կամ տարիքային առավելությունը հեշտ չափերի է, ապա օրինակ հոգեբանական, ներանձնային կամ սոցիալական ավելի բարենպաստ դիրքում գտնվելը առաջին հայացքից կարող է ակնհայտ չլինել:

ԱՄՆ առողջության և մարդասիրական ծառայությունների դեպարտամենտի սահմանմամբ, բուլինգը «անցանկալի, ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, իսկ վարքը կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցյալ»:¹⁶

Այս մոտեցումը ավելի զգայուն է, և ի տարբերություն նախորդների, 2 կարևոր ասպեկտ ունի: Առաջին հերթին ուժերի ընկալվող անհամաչափությունը և բուլինգ

¹⁵ Olweus, D. Bullying at school: What we know and what we can do. Malden, MA: Blackwell Publishing (1993).

¹⁶ U.S. Department of Health and Human Services 2014
Տես՝ <https://www.hhs.gov/foia/statutes-and-resources/officers-reports/2014-introduction/index.html>

կատարողի վարքի անցանկալիությունը: «Անցանկալի» բառով հաշվի է առնվում մարդու հոգեբանական, ֆիզիկական և էմոցիոնալ սահմանները և դրանց հանդեպ ոտնձգությունները: Այս մոտեցումը օգտակար է նաև այն պատճառով, որ որոշ չափով հաղթահարում է մշակութային տարբերությունների պատճառով առաջացող տեսամեթոդաբանական դժվարությունները: Այն ինչ մի հասարակությունում ո՛չ բռնություն, ո՛չ էլ բուլինգ չի համարվում, մեկ այլ հասարակությունում կարող է ընկալվել այդպիսին: Այս դեպքում, կարևոր է նաև հաշվի առնել անձի զգացողությունների մակարդակը: Օր. Մի աշակերտին կարող է դուր գալ իրեն կեղծանվամբ դիմելը, և դա չընկալվի որպես անձնական սահմանների խախտում կամ անցանկալի դիմելաձև, իսկ մեկ այլ աշակերտի՝ ոչ:

Բուլինգի բովանդակային սահմանման հաջորդ դժվարությունը, հատկապես արտացոլվում է իրավական կարգավորումների մակարդակում: Խոսքը բուլինգի հանդեպ առավել խոցելի, ռիսկի խմբում գտնվող խմբերի առանձնացման և օրենքի կամ քաղաքականության մակարդակում ամրագրման երկընտրանքի մասին է: Մի կողմից, ընդունելով որ բուլինգի գոհ առավել հաճախ կարող են դառնալ որոշակի խոցելի խմբերի կամ փոքրամասնությունների ներկայացուցիչներ (գենդերային, ռասայական, ազգային, կրոնական, հաշմանդամության կամ այլ հիմքով), նպատակահարմար է օրենքում կամ հակաբուլինգային քաղաքականությունում ընդգծել որպես ռիսկի բարձր խումբ, ինչը թույլ կտա ուսուցիչներին և դպրոցի անձնակազմին ուշադրություն հրավիրել առավել խոցելի խմբերի ներկայացուցիչների վրա, ավելի արդյունավետ կերպով պաշտպանել նրանց բուլինգի դրսևորումներից: ԱՄՆ դպրոցներից մեկում փորձարկված այս մոտեցումը նվազեցրել է ԼԳԲՏ համայնքի շրջանում դպրոցական բուլինգի գոհերի ինքնասպանությունների թիվը: Սակայն, մյուս կողմից բուլինգի գոհ կարող է դառնալ ցանկացած մարդ: Այս առումով ավելի ներառական մոտեցում է օրենքում ամրագրելը, որ բուլինգի ցանկացած դրսևորում ցանկացած աշակերտի հանդեպ անընդունելի է և դպրոցը բոլոր աշակերտներին պետք է տրամադրի միևնույն պաշտպանությունը, անկախ աշակերտի իրավական կարգավիճակից, սոցիալական դիրքից, խոցելի խմբի ներկայացուցիչ լինելուց և այլն:

Այսպիսով, քննարկված սահմանումների որոշ բաղադրիչների միավորումից, դուրս է բերվել հետևյալ սահմանումը, որը առավել ամբողջական է սույն հետազոտության տեսանկյունից.

Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ:

1.2 Բուլինգի կարգավորման միջազգային փորձը

Հակաբուլինգային օրենքներ և քաղաքականություններ (Antibullying Laws and Policies)

Բուլինգի վերաբերյալ տվյալների շտեմարանների ստեղծման նպատակներից մեկն էլ բուլինգի պատճառները հասկանալու, դրանց կանխարգելման, միջամտության և հետևանքների հետ աշխատելու օրենքներ, քաղաքականություններ, ռազմավարություններ և մեխանիզմներ ստեղծելու համար են:

Այն հարցին, թե ի՞նչ մոտեցում ցույց տալ բուլինգի դրսևորումներին հասկապես դպրոցական միջավայրում, ունի իր բարդությունները և դեռևս իրավական և մանկավարժական բանավեճերի հարց է: Նախ և առաջ դա կապված է այն հանգամանքի հետ, որ խոսքը դպրոցահասակ երեխաների մասին է: Բուլինգի միջամտությունը պետք է լինի այնպիսին, որ չվնասի ոչ բուլինգի ենթարկվող ոչ էլ բուլինգ իրականացնող երեխային, ավելի խոցելի չդարձնի նրանց և դուրս չնղի սոցիալական միջավայրից: Բուլինգ կարող է համարվել նաև քրեորեն պատժելի վարքի դրսևորումները, ինչպիսիք են անձի արժանապատվությանը կամ ֆիզիկական առողջությանը վնաս հասցնելը, գողությունը, հարկադրանքը, շանտաժը և այլն: Այս դեպքում, արդյո՞ք դպրոցական բուլինգը ևս նպատակահարմար է քրեականացնել թե ոչ:

Այս առումով, առկա են բուլինգի կանխարգելման կամ դադարեցման բազմաթիվ մոտեցումներ և մակարդակներ

- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային հռչակագրեր
- Իրավական կարգավորումներ ազգային օրենսդրության մակարդակում
- Բուլինգի կանխարգելման ազգային ռազմավարություններ
- Կրթության նախարարության կողմից մշակված ընթացակարգեր/համազգային ուղեցույցներ
- Հակաբուլինգային քաղաքականություն յուրաքանչյուր դպրոցի մակարդակում, որը կարող է ամփոփված լինել դպրոցի կազմակերպական/վարքային մշակություն
- Ուսուսիչների և ծնողների համագործակցային և մասնակցային զգայուն մոտեցումը
- Աշակերտների բարեվարքության և կարգապահության զարգացումը և այլն:

- **ԱՄՆ փորձը**

ԱՄՆ-ում բուլինգի մասին իրավական կարգավորումներ սկսեցին ստեղծվել 1999 թ. - ից սկսած, Քոլումբայնի հրաձգությունից հետո, երբ 2 աշակերտ, հրազենով սպանեցին 12 աշակերտի և 1 ուսուցչի: Այդ դեպքից հետո, ԱՄՆ Ջորջիա նահանգը առաջինն էր, որ բուլինգի կանխարգելմանն ուղղված օրենք ընդունեց:

Մշտապես իրականացվում են դպրոցներում հանցավորության և անվտանգության (SSOCS) հետազոտություններ, օրենքների և ընթացակարգերի արդյունավետությունը գնահատելու և փոփոխություններ իրականացնելու նպատակով¹⁷:

2005-ին, արդեն 23 նահանգ ընդունել էր հակաբուլինգային օրենքներ, իսկ այժմ, բոլոր 50 նահանգներն էլ ունեն նման օրենքներ: 2002-2010 թվականներին, գրեթե բոլոր նահանգները (45) բուլինգի քեյսերի տվյալների բազայի վերլուծության հիման վրա, անընդհատ վերանայել են ընդունված օրենքները, սահմանումների փոփոխության, բուլինգի դեպքերի հաղորդման ընթացակարգերի և պատժի տեսանկյունից:

Սահմանման տեսանկյունից 32 նահանգ, բուլինգը սահմանում են առանձին օրենքի մակարդակում, 16 նահանգ բուլինգը սահմանում են harassment և intimidation տերմինների հետ միասին, 2 նահանգ (Alabama and Minnesota) բուլինգ տերմինը չեն ներառում իրենց իրավական կարգավորումներում: Նահանգների մի մասը բուլինգը կամ նմանատիպ վարքը սահմանում է նահանգի կրթության դեպարտամենտի միջոցով, և 2 նահանգ բուլինգը սահմանում են դպրոցների քաղաքականության շրջանակներում:

Առկա օրենքների շրջանակներում, նահանգների գրեթե 30 %-ում դպրոցների անձնակազմերը պարտավոր են զեկուցել բուլինգի դեպքերը դպրոցի ադմինիստրացիային, 30%-ը կարող են դա անել անանուն կերպով, իսկ 9 նահանգներ, պարտավոր են զեկուցել օրինապահներին:

SSOCS-ի տվյալների հիման վրա կատարված հետազոտության արդյունքում, պարզ է դարձել, որ ընդունված օրենքները 2%-ով նպաստում են դպրոցներում անվտանգ միջավայրի

¹⁷Weaver L.M A Content Analysis of Protective Factors Within States' Antibullying Laws, *Journal of School Violence* 12(2):156-173
Stu`
https://www.researchgate.net/publication/263581347_A_Content_Analysis_of_Protective_Factors_Within_States'_Antibullying_Laws

ամրապնդմանը: Առկա ընթացակարգերը ավելի արդյունավետ գործում են ցածր դասարաններում և փոքր դպրոցներում: Եվ առավել արդյունավետ են այն նահանգներում, որտեղ դպրոցական անձնակազմից պահանջվում է բուլինգի դեպքերի մասին զեկուցել օրինապահ մարմիններին:

- **Ուելսի փորձը**

Դպրոցների համար Ուելսի կառավարության կողմից մշակվել է հակաբուլինգային ուղեցույց, որի հիմքը «Այլոց հանդեպ հարգանքն է»: Այն պրակտիկ ընթացակարգերի ամբողջություն է, ուղղված բուլինգի կանխարգելմանը, դադարեցմանը և հետևանքների հետ աշխատանքին և ունի օրենսդրական հիմք:

Ուղեցույցը մշակված է այն տեսլականով, որ հարմար լինի Ուելսի բոլոր համայնքների համար:

«Հարգելով այլոց. Հակաբուլինգային ուղեցույց»-ի (Respecting Others: Anti-Bullying Guidance) հիմքում ընկած է.

- Դպրոցահեն քաղաքականությունների և մեթոդների զարգացման անհրաժեշտությունը
- Դպրոցների իրավական պարտականությունները/պատասխանատվությունը
- Բուլինգի տիպերը, պատճառները, ռիսկերը
- Բուլինգի դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և օգտագործումը
- Բուլինգը հաղթահարելու ռազմավարություններ, գոհի հետ աշխատելու ռազմավարություններ, ծնողների հետ աշխատելու ռազմավարություններ
- Դասասենյակից դուրս բուլինգի կանխարգելման աշխատանքներ, սուպերվայզերների ներգրավում խաղահրապարակներում և դպրոցի տարածքում
- Երեխաների առանցքային դժվարությունների հաղթահարմանը աջակցություն
- Բուլինգի հաղթահարման հաջողության դեպքերի ուսումնասիրություն
- Օգտակար աղբյուրների ցանկ, որը կօգնի համալրել հակաբուլինգային ռազմավարությունները
- Խորհուրդներ սովորողներին, ծնողներին/խնամակալներին և ընտանիքներին, թե ինչպես վարվել բուլինգի դեպքում, և անհրաժեշտ կոնտակտներ թե ում դիմել:

Ուելսի կառավարության տեսչականը, ինչպես ձևակերպված է «Երեխաներ և երիտասարդներ.գործելու իրավունքը» փաստաթղթում, (Children and Young People: Rights to Action) հիմնված է ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հռչակագրի վրա (UNCRC): Այն 7 հիմնական նպատակ ունի, համաձայն որի երեխաները և երիտասարդները՝¹⁸

- Կյանքի թռիչքաձև/սավառնող սկիզբ ունեն (Հոդված 3, 29 և 36)
- Կրթության և ուսման լայն հնարավորություններ ունեն (Հոդված 23, 28, 29 և 32)
- Վայելում են իրենց լավագույն հնարավոր առողջությունը և զերծ են բռնությունից, գոհականացումից և շահագործումից (Հոդված 6, 18–20, 24, 26–29, 32–35, 37 և 40)
- Ունեն հասանելիություն խաղի, ազատ ժամանակի, սպորտի և մշակութային գործողությունների համար (Հոդված 15, 20, 29 և 31)
- Լսված են, հասկացված են, հարգալից վերաբերմունքի են արժանանում, և ճանաչված է իրենց ռասայական և մշակութային ինքնությունը (Հոդված 2, 7, 8, 12–17 և 20)
- Ունեն ապահով տուն և համայնք, որը աջակցում է նրանց ֆիզիկական և զգայական բարեկեցությունը (Հոդված 19, 20, 25, 27, 32–35)
- Աղքատության մեջ չեն ապրում (Հոդված 6, 26, 27 և 28)

¹⁸ Respecting others: Anti-bullying overview: Guidance document No: 050/2011 Date of issue: September 2011

Տես՝ <https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullying-overview.pdf>

1.3 Բուլինգի իրավական կարգավորումը ՀՀ-ում

ՀՀ-ում դեռևս չկան բուլինգի վերաբերյալ օրենքներ կամ դրա հաղթահարմանն ուղղված ռազմավարություններ: Մի շարք իրավական կարգավորումներ, այս կամ այն չափով անդրադառնում են բուլինգի տարբեր դրսևորումների: Դրանք են՝

- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ընդունված 20.11.1989, Նյու Յորքում ՄԱԿ-ի կողմից, վավերացված ՀՀ-ում՝ 22.07.1993¹⁹
- ՀՀ սահմանադրությունը, ընդունված 06.12.2015
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 29.05.1996 ²⁰
- «Հանրակրթության մասին ՀՀ օրենքը», ընդունված 10.07.2009²¹

Պետք է նշել, որ երեխայի իրավունքները սահմանված են վերը թվարկված իրավական կարգավորումներում և ընդունումից ի վեր արդեն իսկ մեծ դրական ազդեցություն են ունեցել երեխաների իրավունքների իրացման տեսանկյունից: Բովանդակային առումով, օր. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում բավական մանրամասն սահմանված են աշակերտի, ուսուցչի և ծնողի իրավունքները և պարտականությունները: Սակայն, տարբեր ուսումնասիրությունների համաձայն, դպրոցում երեխաների իրավունքների իրացվածության աստիճանը բավական ցածր է, կիրարկման մեխանիզմների հստակ չլինելու հետևանքով: «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները, Երեխայի իրավունքների ոլորտում իրավական վերլուծություն» հետազոտությունում (2017) նշվում է, որ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմները դեռևս հստակ չեն, և դպրոցներում հաճախ անպատիժ կերպով ոտնահարվում են երեխաների իրավունքները, և թե՛ աշակերտները, թե՛ նույնիսկ երեխաների պաշտպանությամբ զբաղվող սոցիալական աշխատողները չեն կարողանում պաշտպանել աշակերտների իրավունքները²²:

Այս համատեքստում, շատ կարևոր է բուլինգի կարգավորման դպրոցահեն միասնական ուղեցույցների առկայությունը: Ուսանելի է Ուելսի փորձը, որը երեխաների

20 Տե՛ս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>

21 Տե՛ս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

22 Տե՛ս՝ https://www.unicef.org/armenia/sites/unicef.org.armenia/files/2019-01/no%20hyph%20report-complaint%20mechanism_HRDO.pdf

իրավունքների արդեն իսկ առկա իրավական կարգավորումների հիման վրա ստեղծեց բուլինգի կանխարգելման համադպրոցական ուղեցույց: Այն հիմք ընդունելով Ուելսի օրենսդրության տարբեր հոդվածներ և ՄԱԿ-ի երեխաների իրավունքների հիմնադրույթները, ստեղծեց պրակտիկ ընթացակարգեր և մեխանիզմներ ներառող ուղեցույց: ՀՀ դեպքում եվս, արդեն իսկ եղած օրենսդրական բազայի և կարիքների գնահատման հիման վրա կարող է ստեղծվել իրավունքների իրացման պրակտիկ մեխանիզմների, գործիքների ուղեցույց, որով կառաջնորդվեն դպրոցները:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1 Բուլինգի ընկալումները դպրոցականների շրջանում (ի՞նչն են համարում բուլինգ)

Միջազգային տարբեր գեկույցների, գիտական հոդվածների և փաստաթղթերի ուսումնասիրությունից, բուլինգի տարբեր սահմանումների և մոտեցումների համադրումից, առավել նպատակահարմար է բուլինգի հետևյալ սահմանումը, որը առավել ընդգրկուն և զգայուն է այս հետազոտության համար.

«Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ»:

Հետազոտությանը մասնակցած աշակերտները, բուլինգը նկարագրելիս ընդգծում են մի ասպեկտ, որը մեր ուսումնասիրած գրականության մեջ այդքան էլ չէր կարևորվում: Դա բուլինգի «բոլորի ներկայությամբ իրականացվելն է», «բարձր-բարձր դիտողություն անելն է», այսինքն, աշակերտի համար նշանակալի առաջնային սոցիալական խմբի՝ դասարանի ներկայությամբ ծաղրի, նվաստացման, բռնության ենթարկվելն է:

Աշակերտները, բուլինգը նկարագրում են հետևյալ բառերով.

Ծաղր, վիրավորանք, նվաստացում, երեխաների իրավունքների խախտում, ճնշում գործադրել, սեփական կամքը պարտադրել, անհավասար վերաբերմունք, անտեսում, հայհոյանք, անհարմար դրության մեջ դնել, չշփվել, վատ փոխհարաբերություններ, և այլն:

Աշակերտները նշել են բուլինգի գրեթե բոլոր ասպեկտները, ֆիզիկականից, մինչև հոգեբանական և սեռական, հոգեբանական սահմանների գաղափարը, բուլինգի զանազան օրինակներ և դրսևորումներ, որոնք փաստաթղթերի վերլուծության ժամանակ արտասահմանյան հոդվածներում չէին հանդիպել (ինչպես վերևում նշվեց՝ «բոլորի» ներակայությամբ լինելը:

Հարցմանը մասնակցած աշակերտների մեծ մասը կարողանում է ճանաչել և նույնականացնել բուլինգը, քննադատաբար է դրան վերաբերում, գիտակցում է բուլինգի հետևանքները, մտածում է պատճառների մասին և փորձում է տեսնել ուղիներ բուլինգը կանխարգելելու համար:

Աշակերտները բուլինգը բացատրելու/նկարագրելու համար մեծաթիվ օրինակներ են նշել.

«Երբ ուսուցչուհին վիրավորում է երեխաներին, նվաստացնում է, անում է ամեն բան, որպեսզի երեխան իրեն վատ զգա: Ենթարկում է մի շարք բռնությունների, երեխային ստիպում է դաս անել, քանի որ իր վրա խոսակցություն կզա և այլն:»

«Երբ «ումանք» իրենց բարձր են դասում մյուսներից և ճնշում դիմացինին, ով ավելի «թույլ» է նրանցից: Օրինակ, ինչ-որ մեկը ստիպում է իր դասընկերոջը, որպեսզի գրի նրա թեմատիկ աշխատանքը, հետո նոր անցնի իր սեփական թեմատիկ աշխատանքին:»

«Երբ երեխային իր հագ ու կապի, կամ ինչ-որ թերության պատճառով անդադար նեղացնում են, բոլորի ներկայությամբ: Շատ դեպքեր է լինում, երբ աշակերտը նորմալ հագնվում է, ու գրեթե չի տարբերվում մնացածից, բայց նրան էլի բուլինգի են ենթարկում:»

«Օրինակ, երբ մեկը ունի հիվանդություն, որը ակնհայտ երևում է իրա շարժվելու ժամանակ ու դասարանցիները նրան կրկնօրինակում են:»

2.2 Աշակերտների պատկերացումները դպրոցում մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ

Հետազոտության արդյունքերը փաստում են, որ դպրոցական միջավայրում մարդկային փոխհարաբերությունները, այդ թվում բուլինգը պետք է դիտարկել առնվազն 2 հարթությունում: Աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ:


Աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները հետազոտության մասնակից դպրոցականների կողմից ավելի շատ նկարագրվում են խմբային դինամիկայի համատեքստում: Աշակերտների միջև բուլինգը ևս մեծամասամբ հնարավոր է բացատրել խմբային դինամիկայի կոնտեքստում, եթե դասարանը դիտարկենք որպես դպրոցականի կյանքում առաջնային սոցիալական խումբ: Թեև բուլինգի պատճառ կարող են դառնալ հասարակությունում առկա կարծրատիպերը արտաքին տեսքի, պահվածքի և այլնի վերաբերյալ, դասարանի ներսում դասարանի անդամները ստեղծում և կիսում են համոզմունքների համակարգ և վարքային սպասումներ, հեղինակության և կարգավիճակի ընկալումներ, լավի ու վատի, ճշտի և սխալի, նորմալի, գեղեցիկի վերաբերյալ պատկերացումներ, ձևավորվում է խմբի ոչ ֆորմալ կառուցվածք (օր. հայտնվում են աշակերտներ, կամ աշակերտների խմբեր, ովքեր հեղինակություն են վայելում մյուս աշակերտների շրջանում և ազդեցություն ունեն դասարանում որոշումների և փոխհարաբերությունների վրա) որոնք էլ մեծամասամբ ընկած են բուլինգի հիմքում: Այդ համոզմունքները առավելապես ստեղծվում են առաջատար համարվող/հեղինակություն ունեցող աշակերտների կողմից, որոնք ձևավորում են դասարանական «խաղի կանոնները»: Աշակերտների մեկ այլ խումբ հետևում է այդ կանոններին, իսկ նրանք ովքեր որևէ պատճառով չեն կարողանում հետևել և համապատասխանել դասարանական սպասումներին, դառնում են բուլինգի զոհ:

Իսկ օրինակ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում բուլինգի դրսևորումները ավելի կոնկրետ պատճառներ ունեն, որոնք ըստ աշակերտների կապված են՝ ուսուցիչների մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակասի, ուսուցչի անկայուն հոգեվիճակի, աշակերտի կողմից առարկայի և ընդհանուր ուսումնական գործընթացի հանդեպ հետաքրքրության բացակայության և այլ պատճառների հետ:

Սակայն, այսքանով հանդերձ, ուսուցչի հետ փոխհարաբերությունների կարևոր ասպեկտ է նաև այն, որ ուսուցիչը ևս ուղղակի կամ անուղղակի մասնակցում է դասարանական դինամիկային, այս կամ այն աշակերտի հանդեպ դրական կամ բացասական վերաբերմունքով ուժեղացնելով կամ թուլացնելով նրա դիրքը խմբի ոչ ֆորմալ կառուցվածքում:

Մինչ բուլինգի առանձին դրսևորումների հաճախականությունը ներկայացնելը, հարկ է նշել, որ աշակերտները առցանց հարցման ժամանակ գնահատել են դպրոցում մարդկային հարաբերությունների հարգալիցության աստիճանը: Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ աշակերտների ընկալմամբ, դպրոցում աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները հարգալիցության ամենացածր մակարդակն ունեն, մինչդեռ ուսուցիչների վերաբերմունքը աշակերտների հանդեպ, աշակերտների կածիքով շատ ավելի հարգալից է: Սակայն, ուսուցչի կողմից իրականացվող բուլինգը ավելի ցավազին է ընկալվում աշակերտների կողմից:

Գծապատկեր 1. Մարդկային փոխհարաբերությունների հարգալիցության աստիճանը ըստ աշակերտների



2.3 Դպրոցականների վերաբերմունքը բուլինգի տարբեր դրսևորումների նկատմամբ

Հասկանալու համար, թե բուլինգին ինչպես են վերաբերում աշակերտները, առցանց հարցման ժամանակ, նրանց ներկայացվել են բուլինգի մի քանի դրսևորումներ, և նրանք պետք է գնահատեին թե ինչպիսին է նկարագրված երևույթը՝ դրական, բացասական թե՛ չեզոք: Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ գերիշխող մեծամասնությունը առաջարկված բոլոր դրսևորումների նկատմամբ ունի շատ բացասական վերաբերմունք:


Միայն «Դասընկերոջը կեղծանունով դիմելու» դրսևորումը աշակերտների մեծ մասը «չեզոք» երևույթ է որակել, քանի որ կան դեպքեր, երբ կեղծանունով դիմելը չունի չարամիտ նպատակ, և դեմ չէ տվյալ աշակերտի կամքին:

Մեջբերում.

Դրական օրինակ. «Մենք մի քանի մոտ ընկերուհիներ ենք, ու մանկապարտեզից գիտենք իրար: Մեր աղջիկներից մեկին մանկապարտեզից ասում ենք «Ճուտ» ու դա իրեն ընդհանրապես չի նեղացնում, մենք էլ չարամտորեն չենք ասում»:

Բացասական օրինակ. «Մեր դասարանում Խալաթյան ազգանունով մի տղա կար, ում տարիներ շարունակ տղաները «Խալաթ» էին ասում: Դա իրեն դուր չէր գալիս, անգամ կռիվ էր անում հետները, սակայն անօգուտ, ստիպված համակերպվեց»:

Գծապատկեր 2. Աշակերտների վերաբերմունքը բուլինգի տարբեր դրսևորումների նկատմամբ



2.4 Բուլինգի տեսակների եվ դրսևվորումների տարածվածությունը դպրոցում

- **Ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ բուլինգի դրսևորումները**

Աշակերտները բուլինգի մասին խոսելիս, առաջինը սկսում են պատմել ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ բուլինգի դրսևորումների մասին:

Աշակերտների նկարագրություններից, կարող ենք մի քանի կարևոր բացահայտում առանձնացնել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վերաբերյալ.

Աշակերտների ընկալմամբ.

- Ուսուցիչների մեծամասնությունը ունի մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակաս:
- Ուսուցիչները հաճախ իրենց անձնային, հոգեբանական, ընտանեկան և աշխատանքային խնդիրները պոռոյեկտում են աշակերտների վրա: Ըստ նրանց պատճառն այն է, որ ուսուցիչը կարող է վատ տրամադրությամբ մտնել դասարան և «Բարկությունը թափել» որևէ պատահական աշակերտի վրա, առանց տեսանելի/հասկանալի պատճառի:
- Ուսուցիչների կողմից ագրեսիվ վերաբերմունքը, բղավելը, կոպտելը կարող է լինել ինչպես մեկանգամյա երևույթ ամբողջ դասարանի նկատմամբ, այնպես էլ տևական լարված փոխհարաբերությունների ձևաչափով 1 կամ մի խումբ աշակերտների կամ ամբողջ դասարանի հետ:
- Աշակերտների խոսքով ուսուցիչները հաճախ զգայուն և նրբանկատ չեն, և կարող են աշակերտին դնել անհարմար իրավիճակի մեջ, ամբողջ դասարանի ներկայությամբ որևէ անձնական կամ զգայուն թեմայով դիտողություն անելով, ֆիզիկական կամ խոսքային բռնություն գործադրելով և այլն:
- Աշակերտների զգացողությամբ, ուսուցիչները խտրական վերաբերմունք ունեն աշակերտների հանդեպ: Որքան աշակերտի առաջադիմությունը, ուսումնական կարողությունները, սոցիալական կարգավիճակը և ընտանիքի ֆինանսական դրությունը ավելի բարձր է և բարենպաստ, այնքան ավելի դրական և հարգալից է աշակերտի հանդեպ վերաբերմունքը:

- Հետևաբար, աշակերտների ընկալմամբ, ուսուցիչների կողմից վատ վերաբերմունքի են արժանանում այն աշակերտները, ովքեր ունեն ցածր ինտելեկտուալ կարողություններ, դժվարությամբ են յուրացնում առարկան, աշակերտի ընտանիքի ֆինանսական վիճակը շատ բարձր չէ և այլն:
- Ուսուցչի կողմից բացասական վերաբերմունքի են արժանանում նաև այն աշակերտները, ովքեր տվյալ ուսուցչի առարկայով հետաքրքրված չեն: Ուսուցիչները հաճախ դա ընդունում են որպես անձնական վիրավորանք:
- Ուսուցիչները իրենց ձեռքի տակ եղած «լծակներով» մանիպուլացնում են աշակերտին: Այդպիսի կարևոր լծակներ են համարում գնահատականը, հաճախակի դաս հարցնելը, նույն դասարան թողնելու սպառնալիքը և այլն: Նշում են, որ ուսուցիչները գնահատականի «հաղթաթղթով» սպառնում են այն աշակերտներին, ովքեր ուսուցչի հետ կոնֆլիկտային իրավիճակում են հայտնվել:
- Աշակերտները նշում են, որ ուսուցիչները հաճախ չեն ճանաչում և հարգում աշակերտների հոգեբանական սահմանները և իրենց հետաքրքիր չէ թե աշակերտը ինչ է զգում:
- Աշակերտները դաստիարակի առանձնացնում են մյուս ուսուցիչներից, և քննարկված դեպքերի մեծամասնությունում դաստիարակի բնութագրում են որպես զգայուն, աշակերտների բարեկեցությամբ մտահոգ ուսուցիչ, ում մոտ հիմնականում ստացվում է դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտը կարգավորել: Սակայն պատմվել է 2 դեպք, երբ դաստիարակ չի կարողացել հարթել ոչ մեծ կոնֆլիկտը, այն ավելի մեծացնելով և լարելով: Մեջբերում.

«Մեր դասարանում 2 աղջիկ չէին մնում հերթապահության, ուզում էինք պարզել թե ինչու: Դաստիարակը 2 շաբաթ, ամեն օր դասերից հետո աղջիկներին պահում էր, լարված խոսակցություն էր լինում, արդեն տղաներն էլ մտածում էին թե ինչ լուրջ բան է եղել...ու էդպես էլ հարցը չլուծվեց»:


- Դասարանը աշակերտի կյանքում կարևոր առաջնային խումբ է, և աշակերտները չեն ցանկանում որ դասընկերները տեսնեն թե ինչպես են իրենց վիրավորում կամ

ծաղրում: Աշակերտների խոսքով, հաճախ դասարանի մյուս աշակերտները տեսնելով որ ուսուցիչը որևէ աշակերտի ծաղրում է կամ անհարգալց է վերաբերում, դառնում են բուլինգի պասիվ մասնակիցներ, սկսում են խուսափել այդ աշակերտից, կամ ծաղրել, կամ էլ ցույց տալ, որ այդ աշակերտը կորցրել է իր դիրքը դասարանի ոչ ֆորմալ կառուցվածքում:

- Առանձին ուշադրության է արժանի «ուսուցչի մոտ լրացուցիչ պարապելու» պրակտիկան, որը ևս դառնում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վատացման պատճառ: Ուսուցիչը ընդգծված դրական վերաբերմունք է ցույց տալիս այն աշակերտների հանդեպ, ովքեր իր մոտ լրացուցիչ պարապում են: Եվ հակառակը, հիմնականում լատենտ-մանիպուլյատիվ բացասական վերաբերմունք այն աշակերտների հանդեպ, ովքեր կամ չեն պարապում, կամ պարապում են ուրիշ ուսուցչի մոտ:

Գծապատկեր 3. Ուսուցիչների կողմից աշակերտների հանդեպ իրականացվող բուլինգի տարբեր դրսևորումների հաճախականությունը ըստ աշակերտների

Որքա՞ն հաճախ եք Ձեր դպրոցում ականտես լինում որ ուսուցիչը



Աշակերտների խոսքով, աշակերտի վրա բղավելը, կոպտելը, վիրավորական խոսքեր ասելը, բավական հաճախ նաև ֆիզիկական բռնություն գործադրելը որոշ ուսուցիչների «սովորական» պահելաձևն է: Ըստ աշակերտների, ուսուցիչների նման պահվածքը հաճախ գիտակցված չէ, նրանք չեն համարում, որ որևէ վատ բան են անում, և նույնիսկ կարող են զարմանալ, եթե աշակերտը վիրավորվի նման վերաբերմունքից: Երբ փորձում են խոսել ուսուցչի հետ և բացատրել, որ վիրավորվել են ուսուցչի որևէ ասածից կամ արարքից, ուսուցիչները ցույց են տալիս, որ իրենք են վիրավորված, կամ արժեզրկում են աշակերտի ապրումները, պատասխանելով, որ աշակերտը վիրավորվել է մի չնչին բանից, կամ կատակը չի հասկացել: Հատկանշական է ընդգծել ֆոկլու-խմբային քննարկումների ժամանակ պատմված 2 դեպք, երբ ուսուցիչը դասարանից օտարել, մարզինալացրել է մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտի, նրան դուրս թողնելով դասարանական շփումներից, դասապրոցեսից, և նույնիսկ բարկացել այն աշակերտների վրա, ով ցանկացել է շփվել այդ աշակերտի հետ:

Աշակերտները բացի ուսուցիչների «բացասական» հատկանիշները նշելուց, նաև փաստել են, որ շատ հաճախ պատճառը աշակերտի մեջ է: Հիմնականում աշակերտները նշել են աշակերտի դաստիարակության պակասը, ուսուցչի հետ անհարգալից վերաբերմունքը, ուսուցչին չարժևորելը: Աշակերտների բնութագրմամբ, հաճախ անհարգալից վերաբերմունքի են արժանանում «շատ բարի», «աշակերտի հետ չափազանց ընկերական» ուսուցիչները: Աշակերտները դա բնութագրում են հետևյալ բառերով. «թույլ են», «թույլ են տալիս իրենց հետ այդպես վարվել», «չեն կարողանում դասարանը հավաքել», «չեն կարողանում բռի մեջ պահել դասարանը» և այլն:

Մեջբերում.

«Հա՛, ես հիշում եմ նման բան, որ մեր դասարանի տղեքը իրենց արդեն լավ էին զգում, մի քիչ մեծ տարիքում, դասատուի հետ սկսեց մեր դասարանի տղաներից մեկը «դու»-ով խոսել, էնոր սենց խեղճ դասատու էր, անընդհատ գալի, էն որ 1-2 հոգու վրա էր ուժը պատում, «շուտ արի, տղա, շուտ արի», մենակ էր են կարում ասեն, երեխեքը սաղ աղմկում են:

Ես էր տղայի փոխարեն գետիներ մտա, վատ զգացի ինձ, ընկերներն էլ կողքից լավ ինչ ես բան անում:

Նաև, նշվել է, որ ուսուցչի հանդեպ բացասական վերաբերմունքը հաճախ ոչ թե ուսուցչին, այլ դասին է ուղղված:

Սակայն, հենց ուսուցիչների վերաբերյալ բազմաթիվ դժգոհություններ են հնչել աշակերտների կողմից, կապված ուսուցիչների մանկավարժական հմտությունների, մասնագիտական որակների, հոգեբանական կայունության, հնացած մեթոդներով դասավանդելու, աշակերտին չհարգելու հետ:

Գծապատկեր 4. Ուսուցչի կողմից աշակերտների հանդեպ բուլինգի պատճառները



Ուսուցչի կողմից աշակերտի հանդեպ բռնության դեպքեր.

«Ես հիշում եմ, քիմիայի թեմատիկ աշխատանք էի գրել, ու ես իմ աշխատանքը 8-9 կտայի, բայց ինձ 6 էին դրել, ես դժգոհ էի իմ գնահատականից, մոտեցա որ հարցնեմ, սենց կանգնած էր, դժգոհ էր մի բանից, մոտեցա, ասեցի կներե՞ք, կբացատրե՞ք սխալս, որովհետև ոչ մի կարմիր չկար նշած, վերջում 6 էր դրած, սենց վերցրեց տետրս շարունակ գոռաց ասեց եթե 6 ա ուրեմն 6-ի ես արժանացել բան...»:

«Բռնի ուժ գործադրել, հայիռել նույնիսկ ուրիշ երեխաների ներկայությամբ: Օրինակ, էս վերջին տարում, արդեն մեծ ենք չէ՞, մեր դասարանում մի տղա կար, իրեն ոնց որ դասի ժամանակ, տղաներով մի քանի հոգով փսփսում ծիծաղում էին, դասատուն չգիտես ինչու հենց իրեն տեսավ, գնաց իրա մոտ, սենց գիրքը ծալեց, 3 անգամ հարվածեց գլխին, մի անգամ էլ սենց խբեց, մի 2 բառ էլ ասեց, ու ոնց որ ինքը դասարանում հավանած աղջիկ ուներ, ու ինքը ահավոր վատ զգաց իրեն: 2 շաբաթ դասի չի եկել: Հետո իրա ծնողներն են եկել դպրոց, ասել դուք մեր տղային լուրջ սթրեսի մեջ եք գցել, սենց սենց բաներ:

Մենք ամբողջ դասարանով «ատակա» արեցինք, թե ինչու եք միայն իրեն խբում, բոլորն էին չէ՞ խոսում, ծնողներն էլ մյուս կողմից, ու դասատուն աչքերը լցրել էր, ասում էր ես էլ ես դասարան չեմ մտնելու:

-Հա, հա իրենք են նեղանում, երբեք չեն ընդունում (հավելում է դասընկերուհին)

-Հա իրենք գոհ են, միշտ գոհ են (ժպտում է):»:

ԳԼՈՒԽ 3. ԲՈՒԼԻՆԳԸ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ըստ հարցման արդյունքների, բուլինգի որոշ դրսևորումներ բավականին մեծ տարածում ունեն աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում:

Աշակերտները դպրոցում բուլինգի պատճառները հաճախ կապում են արտաքին, դպրոցից դուրս գտնվող գործոնների հետ: «Բուլի» աշակերտների դաստիարակության պակասի, կամ բացասական արժեքներով դաստիարակված լինելու, ընտանեկան անբարենպաստ միջավայրի, «բուլի» աշակերտի ներանձնային, հոգեբանական խնդիրների, հայկական մշակույթում խտրական վարքի, բռնության մշակույթի և այլ գործոնների հետ: Թվարկված գործոնները դպրոցական միջավայրից դուրս են, և դպրոցը տարբեր գործիքակազմերով պետք է փորձի նվազեցնել արտաքին բացասական երևույթների ազդեցությունը աշակերտների վարքի և արժեհամակարգի վրա: Աշակերտների կարծիքով դպրոցը չունի այդ գործիքակազմը, և բոլոր նշված բացասական երևույթները արտացոլվում են նաև դպրոցի ներսում, իսկ երբեմն էլ ավելի սուր են արտահայտվում բուլինգը «խրախուսող» որոշակի ենթամշակույթի պատճառով:

Այդ կիսավիակ, ոչ ճկուն լինելու օրինակ է այն, որ դպրոցում չկան ընտրովի առարկաներ, և դասարանի կազմը գրեթե չի փոխվում մինչ հիմնական դպրոցի ավարտը (ի տարբերություն հանրակրթության այնպիսի մոդելների, որտեղ աշակերտները հաճախ նոր դասարան են տեղափոխվում, կամ ունեն ընտրովի առարկաների հնարավորություն) դասարանը որպես խումբ սովորում է միասին, և ունի երկար տարիների ընդհանուր պատմություն (shared history): Մա մի կողմից հեշտացնում է դասարանական շփումները այն առումով, որ բոլորը գիտեն միմյանց բնավորությունը, նախասիրությունները, ընտանիքը և այլն, մյուս կողմից ամրապնդում է դասարանի ոչ ֆորմալ կառուցվածքը և գրեթե հնարավոր չի լինում փոխել աշակերտների կարգավիճակները և դերերը: Օր.՝ դասարանում հեղինակություն ունեցող, լիդեր հանդիսացող աշակերտը մեծ հավանականությամբ մինչ դպրոցը ավարտելը մնում է այդ կարգավիճակում, իսկ բուլինգի ենթարկվող, մարզինալացված աշակերտը ևս մեծ հավանականությամբ մնում է նույն կարգավիճակում:

Իսկ ընտրովի առարկաների բացակայությունը բերում է ուսուցիչների հետ լարված փոխհարաբերությունների այն դեպքերում, երբ աշակերտը հետաքրքրված չէ այդ առարկայով, ինչը հաճախ վիրավորում է ուսուցչին:

Կարևոր է նաև դպրոցական բուլինգը ուսումնասիրելիս մշտապես մտքում ունենալ խմբային դինամիկայի համատեքստը, քանի որ դասարանը աշակերտի համար առաջնային սոցիալական խումբ է, իսկ հասակակիցները նշանակալի ուրիշներ: Դասարանը որպես սոցիալական խումբ, ունի ոչ ֆորմալ կառուցվածք, այսինքն հեղինակության, դերերի, կարգավիճակների ոչ «պաշտոնական» բաշխում (օր. ոչ ֆորմալ լիդեր, «կռուտոյներ», կամ «աութսայդերներ», չեզոք վարքով աշակերտներ և այլն):


Խմբային դինամիկայի²³ համատեքստում կարելի է նաև բացատրել դասարանի կողմից ձևավորված առանձին արժեհամակարգը, լավի և վատի մասին պատկերացումները, որոնց հիման վրա էլ տեղի է ունենում բուլինգը: Սա հատկապես վերաբերում է մի քանի բավական արատրակտ հասկացությունների, ինչպիսիք են «իրեն պահել չիմանալը», «իր դիրքը դնել չիմանալը», «խոսելու ձև չունենալը» և այլն, որոնք աշակերտների կողմից ներկայացվում են որպես բուլինգի պատճառ: Ըստ էության կա որոշակի խոսելու և պահվածքի ձև/կերպ, որին ինչ-ինչ պատճառներով չհամապատասխանելու դեպքում աշակերտները ենթարկվում են բուլինգի:

Գծապատկեր 5-ից պարզ է դառնում, որ երևանյան դպրոցական միջավայրում բուլինգի խոսքային դրսևորումները (վիրավորանք, ծաղր, անհարգալից տոնով խոսել) և որևէ պատճառով աշակերտին օտարելը, միտումնավոր չշփվելը բավական հաճախ հանդիպող երևույթներ են (հարցման մասնակիցների 50 %-ից ավելին նշել են, որ **հաճախ, շատ հաճախ կամ միշտ** իրենց դպրոցներում ականտես են լինում նման դրսևորումների):

²³ Małgorzata Wójcik and Maria Mondry “The Game of Bullying”: Shared Beliefs and Behavioral Labels in Bullying Among Middle Schoolers, 2020 American Psychological Association, 2020, Vol. 24, No. 4, 276–293

Գծապատկեր 5. Բուլինգի դրսևորումների տարածվածությունը աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում

Որքա՞ն հաճախ եք Ձեր դպրոցում ականտես լինում, որ աշակերտը(ները)՝



Աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունների վերաբերյալ հիմնական բացահայտումներն են.

- Թե՛ աղջիկների, թե՛ տղաների հետ ֆոկուս-խմբային քննարկումներում, նշվել է, որ աղջիկները ավելի հաճախ են բուլինգի ենթարկվում: Ընդ որում, աղջիկները բուլինգի են ենթարկվում ն՛աղջիկների, ն՛ տղաների կողմից, մինչդեռ տղաները աղջիկների կողմից շատ ավելի հազվադեպ են ենթարկվում բուլինգի:
- Աղջիկներին կարող են բուլինգի ենթարկել ոչ թե որևէ արարքի, այլ անձի որևէ բնութագրիչի համար, օրինակ, արտաքին տեսքի, կամ երաժշտական ճաշակի, հագուստի համար:
- Տղաների միջև կոնֆլիկտները կարող են լինել ավելի բռնի, բայց կարճատև և սահմանափակվեն 1 ծեծկռտուքի դրվագով: Աղջիկների միջև կոնֆլիկտային իրավիճակը ավելի երկարատև կարող է լինել, և ուղեկցվել հոգեբանական բռնության դրսևորումներով, օր.՝ բամբասանքներ, «կծոցներ», օտարում և այլն:
- Տղաների միջև կոնֆլիկտային իրավիճակները կարգավորման ավելի հստակ մեխանիզմներ ունեն, կա որոշակի նորմերի ամբողջություն, որոնցով առաջնորդվելու դեպքում հնարավոր է կոնֆլիկտից խուսափել: Աղջիկների դեպքում այդ մեխանիզմները այդքան էլ հստակ չեն, երբեմն խնդիրները լուծելու համար աղջիկները օգտվում են տղաների «գործիքակազմից»:
- Աղջիկները բուլինգի ավելի շատ դեպքեր են մտաբերում, ավելի շատ են «ազդվում», ավելի մանրամասն պատմում, թե՛ աղջիկների, թե՛ տղաների, թե՛ ուսուցիչների հետ կատարված բուլինգի դեպքերը: Տղաները մեծ դժվարությամբ մտաբերում են միայն «ամենահայտնի» դրվագները:
- Ինչպես նաև, աղջիկները մեծ մասամբ ավելի մեծ հետաքրքրություն ունեն երևույթի հանդեպ և ավելի շատ են գիտակցում դրա բացասական հետևանքները:
- Այն աշակերտները, ովքեր ավելի շատ իրենց նույնականացնում են բուլինգը իրականացնողի հետ, միանում են «զվարճանքին», վստահ լինելով որ դա «չի շրջվի» իրենց դեմ:
- Մեծ կարևորություն ունի աշակերտի ընկերների քանակը դասարանում: Եթե աշակերտը մեծ ընկերախմբի անդամ է, կոնֆլիկտային իրավիճակի բախվելիս խումբը սովորաբար աջակցում է: Եթե աշակերտը քիչ ընկերներ ունի, կամ ընկերներ չունի,

մյուս աշակերտները նախընտրում են չաջակցել նրան: Նաև, եթե աշակերտը քիչ ընկերներ ունի, կամ ընկերներ չունի, ավելի խոցելի է բուլինգի ենթարկվելու տեսանկյունից:

- Այն աշակերտները, ովքեր փորձում են աջակցել բուլինգի ենթարկվող դասընկերոջը, ստանում են զգուշացումներ, որ իրեն ևս կսկսեն բուլինգի ենթարկել: Օր. եթե հակառակ սեռի ներկայացուցիչ է, ակնարկում են, որ սիրահարված է տվյալ աշակերտին, դրա համար փորձում է պաշտպանել: Դա բավական զգայուն թեմա է և աշակերտները նախընտրում են գործ չունենալ:
- Ինչպես նաև դեպքերի գերակշռող մեծամասնության պարագայում, ականատես աշակերտը ինքը վախ է զգում աջակցել բուլինգի ենթարկվող աշակերտին, կամ շփվել նրա հետ եթե տվյալ աշակերտը օտարված է դասարանից, քանի որ կարծում է որ իրեն էլ նույն կերպ կսկսեն վերաբերել:
- Թեև աշակերտների և ուսուցիչների մեծ մասը բուլինգի պատճառները կապում է ընտանիքի և դաստիարակության հետ, հետազոտության շրջանակներում ուսումնասիրված դեպքերից մեկում, հենց «բուլի» աշակերտը պատմել է, որ թեև իրեն «ընտանիքում դաստիարակել և դրական արժեքներ են փոխանցել, նա երկար տարիներ բուլինգի է ենթարել դասընկերուհուն»: Պատճառը ըստ նրա, այն էր, որ ուսուցիչները միշտ կոծկում էին իր արարքները, երբեք լրջորեն չեն խոսել իր հետ, որեն կերպ չեն պատժել: Նրա խոսքով, նա այնքան ժամանակ շարունակեց բուլինգը, մինչ զգաց, որ կարող է հայտնվել ուստիկանությունում իր արարքի համար: Այսպիսով, դաստիարակությունը գուցե կարող է բուլինգի պատճառ լինել, սակայն դպրոցական վերահսկման մեխանիզմները անհրաժեշտություն են նման դեպքերը կանխարգելելու համար:

Գծապատկեր 6. Աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում բուլինգի պատճառները



Աշակերտները առավել հաճախ բուլինգի են ենթարկվում արտաքին տեսքի համար՝ դիմագծերի, մարմնի կառուցվածքի, հագուստի և այլն: Բուլինգի ենթարկվող աշակերտները «չեն կարողանում իրենց պաշտպանել», «իրենց դիրքը դնել», «խոսքով պատասխան տալ» և այլն: Ըստ էության, աշակերտները խոսում են արդյունավետ հաղորդակցության

հմտությունների, ինքնավստահության և ինքնաներկայացման հմտությունների պակասի մասին է: Քանի որ, նշվել են օրինակներ, երբ հակառակն է եղել, և աշակերտը հագնվել է դասարանում ընդունված կանոններից դուրս, կամ չի եղել ֆինանսապես ապահովված ընտանքից, սակայն չի ենթարկվել բուլինգի և ունեցել է լիդերի կարգավիճակ: Այստեղ հագուստը, կամ արտաքին տեսքը դասարանի և հասակակիցների սպասումներին համապատասխանեցնելը ավելի շատ բուլինգի պոտենցյալ գոհ չլինելու կանխարգելման:

Աշակերտների կողմից պատմված բուլինգի դեպքեր.

*«Ինքը սենց պուճուր, մուճուր, աչքի չընկնող, վատ սովորող աղջիկ ա, տղաներին կյանքս ա ասում, ու սաղ դասարանը խնդումա իրա վրա, սաղ տղեքը ձեռ են առնում:
Եղել ա որ ասել ա ախպորս կասեմ, բայց էդ ախպերը փոքր ա, ու դրա համար ավելի են ձեռ առնում»:*


*«Ինձ փոքրուց դաստիարակել են այնպես, որ պետք է օգնել, եթե որևէ մեկին ծաղրում են, կողքը կանգնել, բայց ես միշտ անում էի հակառակը: Իմ դասարանի աղջիկներից մեկին տանել չէի կարողանում, էլ ծեծում էի, էլ ձեռք էի առնում, ամեն ինչ, ինչ կարաք պատկերացնեք ես իրա գլխին սարքում էի, ու դասատուները էդ հարցին էդքան ուշադրություն չէին դարձնում, ոնց որ կոծկում էին, ու անցնում առաջ, իմ սխալը չէր պատժվում ոչ մի անգամ ու ես էլ մտածում էի էս անգամ էլ անեմ, ու էլ չեմ անի:
Մյուս աշակերտներն էլ մտածում էին որ դա երբեք իր դեմ չի կարող շուռ գալ, կոպիտ ասած ինքը լիդեր է, միանում են բուլինգի: Ու իրենց լավ էլ հաճելի է բուլինգի ենթարկելը: Երբ մարդը անպատիժ է մնում, ինչ-որ մարդկային բան իր մեջ կորում է»:*

«Ինձ բուլինգի էին ենթարկում, որ ես ասենք իրենց նման հոթ-դոգ չէի տանում դասի այլ խնձոր ու էդ կարգի բաներ: Ինձ բուլինգի էին ենթանկում ... սիրահարվելու ու կոտրվելու պահով: Ինձ բուլինգի են ենթարկել տղա ընկերներ ունենալու համար, հիմա ես փոխվել եմ և բոլորին իրենց տեղը դրել, ու հիմա ամեն ինչ կարգին է»:

3.1 Բուլինգի հետևանքները աշակերտների վրա

Թե՛ աշակերտների միջև բուլինգը, թե՛ աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առկա բուլինգը աշակերտների շուրջ 70%-ի կարծիքով ծայրահեղ բացասական կամ բացասական ազդեցություն ունի դպրոց հաճախելու և սովորելու մոտիվացիայի վրա:

Գծապատկեր 7. Աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում բուլինգի ազդեցությունը դպրոց հաճախելու և սովորելու մոտիվացիայի վրա



Աշակերտները նշել են նաև, որ բուլինգը բացասաբար է ազդում է նրանց ինքնագնահատականի, ինքնաընկալման, սեփական անձի մասին պատկերացումների վրա: Ուսուցչի կողմից անհարգալից վերաբերմունքը, բռնությունը աշակերտները ցավագին են ընդունում նաև այն պատճառով, որ դա տեղի է ունենում խմբում, դասընկերների ներկայությամբ: Աշակերտների կարծիքով դա ավելի վիրավորական է, հատկապես եթե կան իր համար «նշանակալի ուրիշներ», իրենց խոսքով՝ «հավանաձ» տղա կամ աղջիկ:

3.2 Աշակերտների, ուսուցիչների եւ ծնողների վարքը բուլինգի դեպքերի ականատես լինելիս

Ֆոկուս-խմբային քննարկումների, խորին հարցազրույցների և առցանց հարցման արդյունքների համադրումից պարզ է դառնում, որ բուլինգի 40 % դեպքերում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները միջամտում են, փորձում կառուցողական լուծում գտնել իրավիճակի համար: Ծնողները ավելի քիչ դեպքերում են տեղյակ և ավելի քիչ են միջամտում: Սակայն, բոլոր այս դեպքերում չկան հստակ ընթացակարգեր: Դեպքին միջամտում, արագ և արդյունավետ լուծում են փորձում տալ աշակերտների բնութագրմամբ բարեխիղճ ուսուցիչները և գիտակից աշակերտները, ովքեր նաև որոշակի հեղինակություն ունեն: Բարեբախտաբար, մոտ 40 % դեպքերում բուլինգի դեպքերը չեն անտեսվում, սակայն ընթացակարգերի, գործիքակազմերի և ֆորմալ պարտականություն ստանձնելու դեպքում, բուլինգի ավելի շատ դեպքեր կստանային կառուցողական լուծում: Հետազոտության ժամանակ բացահայտված այն դեպքերը, երբ երկարատև և բռնի բուլինգ է իրականացվել աշակերտի հանդեպ, կոծկվել, անտեսվել են և՛ ուսուցիչների, և՛ տնօրենների կողմից: Աշակերտների այս պնդումը լիովին համընկնում է փորձագետների նշած տեսանկյան հետ, համաձայն որի տնօրենները քրեորեն պատժելի արարքները կոծկում են, դպրոցի համբավը «չփչացնելու» համար:

- **Աշակերտների վարքը բուլինգի դեպքերի ականատես լինելիս**

Աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում բուլինգի ականատես լինելիս, գրեթե 40 % դեպքերում աշակերտները փորձում են միջամտել, և դադարեցնել բուլինգը: Հատկապես որոշակի դիրք և հեղինակություն ունեցող աշակերտների միջամտությամբ, (օր. բուլինգ կատարող աշակերտին սաստելով, բուլինգի ենթարկվողին աջակցելով, կամ նրանց միջև միջնորդ դառնալով) հիմնականում ստացվում է իրավիճակը շտկել և զցել կառուցողական հունի մեջ: Այստեղ կարևոր է նշել, որ միջամտությունը հաջող է, եթե միջամտող աշակերտը(ները) որոշակի դիրք ունեն դասարանում և չեն վախենում բուլինգի զոհ դառնալուց:

Աշակերտների շուրջ 30%-ը բուլինգի ականատես լինելիս ոչինչ չի ձեռնարկում: Հիմնականում, այս աշակերտները կամ չունեն դիրք և հեղինակություն, կամ վախենում են, որ բուլինգի զոհին աջակցելու և բուլինգ իրականացնողի դեմ որևէ բան խոսելու դեպքում իրենք ևս կդառնան բուլինգի զոհ:

Աշակերտների մոտ 30 %-ը ակտիվ կամ պասիվ ձևով միանում է բուլինգ իրականացնող աշակերտին(ներին) և սկսում ծաղրել բուլինգի գոհին: Դա տեղի է ունենում 2 ձևով: Ակտիվ մասնակցությամբ, երբ իրենք ևս սկսում են բուլինգ իրականացնել թիրախավորված աշակերտի հանդեպ: Պասիվ մասնակցությամբ, օրինակ, ծաղրական կատակների, վրա ծիծաղելով, եթե բուլինգի գոհը օտարվել է, նրա հետ չչփվելով, նրա կողքին չնստելով և այլն:

Աղյուսակ 1.

Աշակերտների վարքը դպրոցում բուլինգի դեպքերի ականատես լինելիս			
Փորձում են կանխարգելել կամ լուծել միջադեպը, դրական ելք գտնելով իրավիճակից 36.6%	Ոչինչ չեն անում 31.0%	Անցնում են բուլերի/ուժեղ խմբի կամ անհատի կողմը 18.3%	Ծիծաղում են բուլինգի գոհի վրա 14.1%
Մեջբերումներ աշակերտների պատասխաններից			
<p>«Ուսուցիչները սովորաբար մասնակցություն չեն ունենում հարցի լուծմանը, հարցը լուծվում է գիտակից աշակերտների օգնությամբ»</p> <p>«Հատուկ են նաև դաստիարակված և բարձր մարդկային արժեքներով ու գիտակցությամբ աշակերտներն են փորձում միջամտել և կանխել համեմատաբար թույլերի հանդեպ իրականացվողը»:</p> <p>«Աշակերտներով փորձում ենք կանխել նման իրավիճակները գոնե մեր դասարանում, կայծի դեպքում միանգամից արձագանքում և չենք թողնում շարունակվի: Բացատրում ենք, որ չպիտի նման ձևով վարվեն դասընկերոջ նկատմամբ»:</p>	<p>«Աշակերտները մտածում են, որ եթե խառնվեն, ապա իրենք կլինեն բուլինգի հաջորդ գոհերը: Չեն ուզում խնդրի մեջ ներքաշվել և լուծում գտնել»:</p> <p>«Ծաղրանքի ենթարկվող աշակերտները հիմնականում լռում են՝ վախենալով կամ գուցե ամաչելով: Պատասխան չստանալով՝ ծաղրող աշակերտները շարունակում են իրենց չափազանց վատ պահվածքը: Բսկ կողքից դիտորդները հիմնականում արձագանք չեն տալիս»:</p> <p>«Աշակերտները ևս չեն միջամտում ծաղրողներին գոհ չդառնալու նպատակով, ասում են անուշադրության մատնիր կանցնի կգնա կամ ուղղակի լռում են»</p>	<p>«Աշակերտները սովորաբար ինքնագիտակցում չունեն: Գնում են այն կողմը, որտեղ ուժեղներն են»:</p> <p>«Ավելի շատ աջակցում են այն աշակերտին ով բուլինգ է սկսում»:</p> <p>«Աշակերտները հիմնականում անցնում են նրա կողմը, որ ավելի ուժեղ է»:</p> <p>«Ցավոք, միանում են ծաղրող կողմին»:</p> <p>«Աշակերտներից որոշները միանում են ճնշող աշակերտին»:</p>	<p>«Աշակերտները երբեմն չեն հասկանում պահի լրջությունը և ավելի են բորբոքում կրքերը (օրինակ բարձր ծիծաղելով վիրավորական կատակի վրա)»:</p> <p>«Աշակերտները հիմնականում չեզոք են նրանք ուրախանում են տեսնելով այդ երևույթը»:</p> <p>«Մեծ մասը փորձում է ստեղծել սեփական հումորը»:</p> <p>«Աշակերտները խնդում են»:</p>

• **Ուսուցիչների վարքը բուլինգի դեպքերի ականատես լինելիս**

Ըստ աշակերտների, ուսուցիչները ևս շուրջ 40 % դեպքերում ականատես լինելով իրավիճակին, փորձում է հետևողական, նրբանկատ ձևով իրավիճակը գցել կառուցողական հունի մեջ: Այստեղ կարևոր է այն, որ միջամտությունը մեկանգամյա չէ, և ուսուցիչը որոշ ժամանակ հետևում է իրավիճակին և տեղեկանում դեպքի դինամիկային: Մոտ 30 % դեպքերում, ուսուցիչները կրկին միջամտում են, սակայն չի հաջողվում իրավիճակը շտկել: Աշակերտների խոսքով, եթե ուսուցիչը նրբանկատ չէ, և իմանալով աշակերտների միջև լարվածության մասին, պարզապես բղավում է, հորդորում 2 կողմին էլ «հանդարտվել», առանց իրավիճակը լսելու և հստակեցնելու, ավելի բացասական ազդեցություն է ունենում, իրավիճակը չի շտկվում և լարվածությունը ավելի է խորանում:

Մոտ 5 % դեպքերում ուսուցիչը կամ ինքն է դրդում որ աշակերտի հանդեպ բուլինգ լինի, կամ էլ արդեն իսկ ընթացող բուլինգին է միանում, ծիծաղում ծաղրական կատակների վրա և այլն:

Շուրջ 20 % դեպքերում ուսուցիչները տեղյակ չեն բուլինգի դեպքի մասին:

Աղյուսակ 2.

Ուսուցիչների վարքը դպրոցում բուլինգի դեպքերի ականատես լինելիս					
Միջամտում են, փորձում են հարցը լուծել տևական ջանքերի միջոցով, և հասնում կառուցողական լուծման 40.0 %	Միջամտում են, փորձում են հարցը լուծել սակայն կառուցողական լուծման հասնել չի ստացվում 16.0%	Համարյա ոչինչ չեն անում 18.9%	Ուղղակի նկատողություն են անում, կամ այդ պահին բարկանում, ինչից հետո իրավիճակը մնում է նույնը 13.1%	Տեղյակ չեն 5.1%	Միանում են բուլինգին, ծիծաղում, ծաղրում բուլինգի ենթարկվող աշակերտին 4.6%
Մեջբերումներ աշակերտների պատասխաններից					
«Այդ մարդուն փորձում են խոսքով հասկացնել դիմացինի հետ այդպես վարվելու վատ հետևանքները»:	«Հիմնական միջադեպ հարթողը ուսուցիչն է, որի մոտ, սակայն, միշտ չէ, որ ստացվում է: Կարծում եմ՝	«Ուսուցիչները չեն անում լուծելու համար էական ինչ որ բան»: «Ուսուցիչները կամ չեն	«Ուղղակի բարկանում են և վերջ»: «Շատ-շատ նկատողություն անեն»:	«Ուսուցիչները հիմնականում ականատես չեն լինում այդ դեպքերին»: «Ամենակարևոր դեպքերը չեն	«Շատ դեպքերում ուսուցիչը ինքն է դրդում բուլինգի»: «Ուսուցիչները անտարբեր են, երբեմն իրենք էլ են կողմնակալ

<p>«Բաժանում են կոնֆլիկտ ունեցող երեխաներին ու փորձում հարցը երեխաների հետ խոսելով, հասկացնելով խոսել»:</p> <p>«Ուսուցիչները առանձնազույգ են ունենում, որի ժամանակ փորձում են հասկանալ առաջացած խնդրի պատճառը, և այնպես են լուծում այն, որ ոչ ոք չտուժի»:</p>	<p>մանավարժական կրթության թերությունն է»:</p> <p>«Ամեն մեկին մի երկու բան ասում, ուղարկում են իրանց դասարանները ու վերջ: Այդ պահին կարող է հանգստացնեն ու վերջ»:</p>	<p>նկատում, կամ նկատելիս հազվադեպ են միջամտում»:</p> <p>«Կատակի են տվել, մեծ հաշվով ոչ մի բան»:</p>	<p>«Էրեխեք հանգստացեք ասեն և վերջ»:</p> <p>«Միայն անօգուտ նկատողություններ»:</p> <p>«Ուղղակի ասում են չի կարելի ու վերջ, տաս րոպե հետո սաղ անցած ա լինում, բայց իհարկե հեշ որ էտ աշակերտը տաս րոպե առաջ էն մեկին ինչ ասես ասեց»:</p>	<p>նկատում»:</p> <p>«Ուսուցիչներին բուլինգի ենթարկված անձինք չեն պատմում եղելությունները, չվստահելով, մտածելով որ կտարածվի ամբողջ դպրոցում/քոլեջում»</p>	<p>վերաբերվում և նվաստացնում, բամբասանքների տարածմանն են մասնակցում և քննադատում սաստելու փոխարեն»:</p> <p>«Հիմնականում ոչինչ: Ցավոք սրտի, երբեմն ուսուցիչները հենց իրենք են հանդիսանում ագրեսորներ և սկիզբ դնում բուլինգին»:</p>
---	--	---	--	--	---

• **Ծնողների վարքը բուլինգի դեպքերի ակնառես լինելիս**

Ծնողները հիմնականում տեղյակ չեն, որ իրենց երեխան դպրոցում բուլինգի է ենթարկվում: Աշակերտները նշում են, որ մեծամասամբ ծնողի միջամտությունը այդքան էլ արդյունավետ չէ, և ավելի է բարդացնում երեխայի վիճակը: Բուլինգը չի դադարում, երեխան ավելի է մեկուսանում դասարանից: Նաև նշվեց որ բուլի երեխաների ծնողները երբեմն հենց իրենք էլ խրախուսում են, և նույնիսկ հպարտ են իրենց երեխայի պահվածքով:

ԳԼՈՒԽ 4. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

4.1 Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում առաջացող խնդիրները, դրանց պատճառները և հնարավոր լուծումները ըստ ուսուցիչների

Գրեթե բոլոր ուսուցիչները աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում բուլինգի և այլ դեստրուկտիվ դրսևորումների պատճառները տեսնում են մի քանի մակարդակներում և շերտերում:

- Հասարակությունում առկա ոչ բարենպաստ պատկերացումները ուսուցչի կերպարի և աշխատանքի վերաբերյալ
 - Ուսուցչի կերպարի, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների խեղաթյուրումը
 - Ուսուցչի հանդեպ հարգանքի նվազումը վերջին տարիներին

Մեջբերում.

«Երբ մենք էինք դպրոցական, ամաչում էինք ուսուցչանոցի դուռը բացել և տեսնել որ ուսուցչուհին սուրճ է խմում, հիմա աշակերտը փողոցում տեսնում, նույնիսկ կարող է չբարևել»

«Ուսուցչին տարբեր հաղորդումներով, հումորային շոուներով ներկայացնում են որպես անհաջողակ կերպար, աշակերտի հարգանքն էլ նվազում է, կարծրատիպեր և կանխատրամադրվածություն են ստեղծում»:

- Ընտանիքում դպրոցի վերաբերյալ երեխային բացասական վերաբերմունք և վարքականոններ սերմանելը, դպրոցում պատշաճ պահվածք չսովորեցնելը:
 - Ընտանիքում առկա լարվածությունը երեխային փոխանցելը, ինչն էլ տեղափոխվում է դպրոց:
 - Ծնողների հետ կառուցողական շփում հաստատելու դժվարությունը:

Մեջբերում.

«Երբ երեխայի վարքի վերաբերյալ ծնողին փորձում են տեղեկացնել, ծնողը ուսուցչին է սկսում մեղադրել, արժեզրկել, կասկածի տակ դնել նրա գիտելիքները և այլն: Կամ էլ, ասում,

որ երեխան տանն էլ ունի խնդիրներ, և փորձեք մի կերպ «յուրա տանել» էդպես է, եթե երեխան դպրոցում խնդիրներ ունի, սովորաբար տանը նույնպես նա պրոբլեմատիկ է»:

- Հանրակրթության ոլորտում առկա համակարգային խնդիրները, ճգնաժամային իրավիճակը
 - Դպրոցում կարգ ու կանոն հաստատելու մեխանիզմների բացակայությունը խանգարում է առողջ մթնոլորտ ձևավորելուն: Ուսուցչին չեն տրվում լծակներ աշակերտների վարքը վերահսկելու համար, բղավելը արգելվում է, սակայն այլ լծակներ էլ տրված չեն:

Մեջբերում.

«Խնդիրն էն ա, որ բոլորը ուսուցչին են փորձում ինչ որ բան սովորեցնել, բայց խնդիրը ուսուցչի հմտությունը չի: Համաձայն եմ կան շատ ուսուցիչներ, որ սովետից եկող մեթոդիկայով չեն ստիպում երեխիսեքին իրենց ենթարկվեն կամ լսեն: Ուսուցչի գործը ուսուցչություն անելն է, բայց դու դա չես կարող անել, եթե քեզ կամ էլ իրենց լարված դրության մեջ պահես: Ես չեմ կարծում որ դասարանի կարգուկանոնը ուսուցչի վրա պետք է լինի»:

- Ուսուցիչների սոցիալական ոչ բարենպաստ պայմանները, ցածր աշխատավարձը, որի հետևանքով, ուսուցիչը մոտիվացված չէ աշակերտի հետ լրացուցիչ աշխատանք կատարել, կամ զբաղվել բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմամբ:
- Աշակերտի կողմից դասով, ուսմամբ, և տվյալ առարկայով հետաքրքրված չլինելը
 - Հատկապես խոցելի են աշակերտների ընկալումներով «ոչ այնքան առաջնահերթ և կարևոր առարկաների ուսուցիչները», կամ այն առարկաների, որոնք տվյալ աշակերտը բուհ ընդունվելու համար քննություն չի հանձնելու:
 - Դեստրուկտիվ դրսևորումներ կարող են լինել դասը ամեն գնով տապալելը, օր. 7-րդ դասարանում մի աշակերտուհի դեղ է լցրել ուսուցչուհու բաժակի մեջ, որպեսզի ուսուցչուհին իրեն վատ զգա և դասը չկայանա:
 - Չեզոք դրսևորումներ, օր. աշակերտները խնդրում էին դասի ժամին դասից դուրս թեմաներով զրուցել, կյանքի մասին, հետաքրքրվում էին ուսուցչուհու մասին և այլն:

- Ավագ դպրոցի աշակերտները կարող են պարզապես չհաճախել դասին, կամ ներկայանալ, բայց անտարբեր սպասել դասաժամի ավարտին: Դա ավելի շատ խնդիրներ է ստեղծում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում: Իսկ աշակերտների միջև հարաբերությունները ավագ դպրոցում լարված չեն, եթե իրար չեն հավանում, կամ ընդհանուր հետաքրքրություններ չունեն, պարզապես չեն շփվում:
- Ավագ դպրոցում, ուսուցիչները չեն հասցնում ճանաչել աշակերտին, նրա բնավորությունը, և անհատական մոտեցում ցուցաբերել: ըստ նրանց, դա ազդում է և՛ իրենց աշխատանքի վրա, և՛ աշակերտի մոտիվացիայի վրա.

Մեջբերում.

«Տեսնում ենք, որ միջին դպրոցից աշակերտը բարձր գնահատականներով եկել է, բայց ավագում սկսել է վատ սովորել, դասերին չհաճախել, կարծում ենք նրանց համար ևս դժվար է հարմարվելը: Մեր համար իսկապես բարդ է, մենք, ո՛չ մանկավարժներս, ո՛չ էլ աշակերտները, պատրաստ չե՛ինք ավագ դպրոցին»:

- Ուսուցիչների խոսքով, հազվադեպ է լինում, որ աշակերտի նեգատիվ վարքը պայմանավորված լինի ուսուցչի անձով, հիմանականում ուսման գործընթացից դժգոհությամբ է պայմանավորված:

Ուսուցիչները նշեցին դպրոցում կարգուկանոնի մեխանիզմների ներդրման անհրաժեշտության մասին, քանի որ կարծում են, որ ուսուցիչը պետք է առավելապես զբաղվի գիտելիքի փոխանցմամբ, ոչ թե կարգուկանոնի հաստատմամբ, որի պատճառները իր դասապրոցեսից դուրս են (այսինքն հասարակությունից, մշակույթից, ընտանիքից, կամ կրթական համակարգի խնդիրներից եկող խոչընդոտներ են):

Ուսուցիչները նշեցին մի քանի կարևոր հանգամանք, որոնց առկայության դեպքում բուլինգի դրսևորումները ավելի քիչ կլինեն: Դրանք են՝

- Դասարաններում աշակերտների թվաքանակի նվազեցում: Դա թույլ կտա ուսուցչին ավելի զգայուն լինել աշակերտների կարիքների հանդեպ, վաղ հայտնաբերել լարվածությունները:

- Դպրոցում խստության ավելացում: Խիստ տնօրենի առկայություն: Աշակերտը պետք է իմանա, որ ոչ պատշաճ պահվածքի համար կարող է հեռացվել դպրոցից, և մեկ այլ դպրոց իրեն հեշտությամբ չի ընդունի հեռացված լինելու դեպքում:
- Դպրոցում էթիկայի հանձնաժողովի ներդրում, որտեղ կքննարկվեն աշակերտների կողմից կատարված արարքները, աշակերտների, ուսուցիչների և ծնողների ներկայությամբ: Աշակերտի համար հանձնաժողովը կսահմանի պատժամիջոցներ:
- Ուսուցիչները նշեցին պատժամիջոցի մի քանի օրինակ, որոնք ըստ իրենց հայկական միջավայրում աշխատող կլինեն.
 - Աշակերտի կողմից հասարակական աշխատանքների կատարում, օր. դպրոցի մաքրությամբ զբաղվելը:
 - Ֆինանսական տուգանք:

Գրեթե բոլոր ուսուցիչները խոսեցին այն մասին, որ աշակերտները կարող են տեսանկարահանել ուսուցչին, եթե կարծում են, որ ուսուցիչը խախտում է աշակերտի իրավունքները: Ըստ նրանց, դա արդյունավետ մեխանիզմ չէ, և միայն խոցելի է դարձնում ուսուցչին, նշվեց նաև օրինակ, երբ տեսամոնիտինգի միջոցով ուսուցչուհու մասին հոլովակ էին պատրաստել և ներբեռնել համացանց, կիրբերբուլինգի գոհ դարձնելով ուսուցչուհուն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնական բացահայտումներ

Փորձագետները նշել են մի քանի համակարգային խնդիրներ, որոնք նպաստում են դպրոցում բուլինգի դրևստրումներին և խոչընդոտում բուլինգի կանխարգելմանը: Դրանք են՝

- Դպրոցի, ուսման և ուսուցչի վերաբերյալ հանրային ընկալումներում բացասական կերպարների և ըմբռնումների ձևավորումը:
Փորձագետների մի մասը սա կապում է մեղիայում ստեղծվող ծաղրական և արժեզրկող բովանդակությամբ հումորային հաղորդումների, սերիալների, անեկդոտների հետ, ինչը ուսուցչին խոցելի է դարձնում աշակերտների և ծնողների հետ փոխհարաբերություններում:
- Ընտանիքի դերը դպրոց-ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում.
 - Եթե ընտանիքը հետևողական չէ, չի ստացվում աշակերտ-ուսուցիչ-ծնող կապը, ինչը բարդացնում է ծնողի հետ համագործակցելով երեխայի վարքը բարեավելու փորձերը:
 - Եթե ընտանիքում ընդունված են ագրեսիվ վարքականոններ, կամ այլ դեստրուկտիվ արժեքներ, երեխան դա տեղափոխում է դպրոց:
- Քաղաքային դպրոցներում և հատկապես մայրաքաղաքի դպրոցներում կադրերի դանդաղ փոփոխությունը.
 - Դպրոցներում տևական ժամանակ դասավանդում են տարեց ուսուցիչներ: Քանի որ մայրաքաղաքում աշխատաշուկան մեծ է, երիտասարդները մանկավարժությունը չեն դիտարկում որպես առաջնահերթ նախընտրելի աշխատանք: Դպրոցները երիտասարդ մասնագետներով համալրվում են շատ դանդաղ:
 - Մանկավարժությամբ զբաղվել ցանկացող երիտասարդները նախընտրում են մանկավարժական կարիերա ստեղծել կամ մասնավոր կրթահամալիրներում, կամ այնպիսի ծրագրերում, ինչպիսին «Դասավանդի՛ր Հայաստան»-ն է: Հանրակրթական դպրոցները այս դեպքում ևս չեն համալրվում նոր, մոտիվացված, երիտասարդ մասնագետներով:

- Այս խնդիրը համեմատաբար մեղմ է ոչ մեծ քաղաքներում և գյուղերում, քանի որ ուսուցչի աշխատանքը ընկալվում է որպես առկա լավագույն աշխատանքներից մեկը:
- Ուսուցչի աշխատանքի ցածր վարձատրությունը որոշ դեպքերում առաջ է բերում մի շարք ռիսկեր
 - Ուսուցիչը մոտիվացված չէ կատարել իր անմիջական աշխատանքային պարտականություններից դուրս աշխատանք, լրացուցիչ ջանքեր ներդնել աշակերտների ուսման հարցում, կամ դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտը բարելավելու հարցում:
 - Առաջ են գալիս կոռուպցիոն ռիսկեր, ուսուցիչը անհավասար/խտրական վերաբերմունք է ցուցաբերում աշակերտների հանդեպ: Ավելի լավ է վերաբերում այն աշակերտներին, ովքեր ֆինանսապես ապահովված ընտանիքներից են և ֆինանսապես աջակցում են ուսուցչին:
 - Ուսուցիչը ճնշում է գործադրում իր մոտ «լրացուցիչ արտադասարանական պարապմունքների» համար, այս հիմքով ևս տարբերակված վերաբերմունք է ցուցաբերում այն աշակերտների հանդեպ ովքեր իր մոտ պարապում են և այն աշակերտների ովքեր չեն պարապում:
- Ուսուցիչների իրավունքների պաշտպանված չլինելը, դրսևորվում է մի քանի մակարդակներում և խոցելի է դարձնում ուսուցչին գործատուի, ծնողների և աշակերտների հետ շփումներում
 - Որոշ դպրոցներում տնօրենների քաղաքականացված/կուսակցականացված լինելը:
 - Ուսուցիչների այն համոզմունքը, որ իրենք այլ աշխատանք չեն կարողանա գտնել: Դա ստիպում է համակերպվել աշխատանքային իրավունքների պաշտպանված չլինելու հանգամանքի հետ և չբարձրաձայնել խնդիրների մասին:

Մեջբերում.

«Մենք ունենք մոտավորապես 30.000 ուսուցիչ, ու շատ դժվար է գտնել մարդկանց, ովքեր եղել են օբյեկտիվ, անաչառ, գիտակցել են իրենց իրավունքները: Մա շատ մեծ խոցելի խումբ է, իսկ եթե այդ խումբը խոցվում է պետության կողմից, ինքը մեխանիկորեն դառնում է խոցելի այն միջավայրում, որտեղ աշխատում է»:

- Աշակերտների հետ փոխհարաբերություններում առավել խոցելի են հոգեպես անկայուն ուսուցիչները:
 - Բոլոր փորձագետները նշեցին կիբեբբուլինգի²⁴ ակտուալ դառնալը: Փորձագետները ընդգծեցին, որ կիբեբբուլինգը բազմաթիվ ռիսկեր է պարունակում, և ավելի դժվար կառավարելի և վերահսկելի է քան դպրոցի պատերի ներսում տեղի ունեցողը: Կիբեբբուլինգի զոհ կարող են դառնալ թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները: Նշվեց 1 դեպք, երբ ուսուչին բարկացած ժամանակ նկարահանել են մի քանի տարբեր օրեր, տեսանյութերը մոնտաժել և ներբեռնել համացանցում, ուսուցչին դարձնելով ծաղրի առարկա:
 - Եվ՛ կիբեբբուլինգի, և՛ դպրոցի պատերի ներսում տեղի ունեցող բուլինգի վերահսկման և կանխարգելման տեսանկյունից նշվեց տարբեր դպրոցների և ընտանիքների անհավասար ռեսուրսների մասին: Անհրաժեշտություն կա ուղեցույցների և գործիքակազմերի մշակման, որոնցով կառաջնորդվեն բոլոր դպրոցները, և կլինեն քիչ թե շատ հավասար պայմաններում:

²⁴ Կիբեբբուլինգի սահմանումը ըստ ՅՈՒՆԻՄԵՏԻՎ՝

Կիբեբբուլինգը բուլինգն է թվային տեխնոլոգիաների կիրառմամբ: Այն կարող է տեղի ունենալ սոցիալական մեդիայի, հաղորդագրությունների հարթակների (messengers), խաղային համակարգերի և բջջային հեռախոսների միջոցով: Դա կրկնվող, նպատակաուղղված վարք է, որի նպատակն է վախեցնել, զայրացնել կամ խայտառակել/պարսավել/հանրային ամոթի առարկա դարձնել թիրախին: Օրինակները ներառում են.

Դեմ առ դեմ բուլինգը և կիբեբբուլինգը հաճախ կարող են պատահել զուգընթաց, սակայն կիբեբբուլինգը թողնում է նաև մեդիահետք:

Տես <https://www.unicef.org/end-violence/how-to-stop-cyberbullying>

- Աշակերտների իրավունքների տեսանկյունից, փորձագետները նշեցին հասկապես ծանր դեպքերի կոծկումը տնօրինության կողմից: Բուլինգի կարգավորումը տեղի է ունենում ոչ թե երեխայի լավագույն շահից ելնելով, այլ դպրոցի հեղինակությունը չփչացնելու տեսանկյունից: Տնօրենները շահագրգռված են, որպեսզի իրենց դպրոցը լավ համբավ ունենա, աշակերտների հոսքը չնվազեցնելու համար:

Մեջբերում.

«Անչափահասների բաժին 30 դեպքից միայն 2-ն է եղել դպրոցի ուղղորդմամբ: Դե պատկերացրեք, թե ինչքան են տնօրենները կոծկում դպրոցում կատարվող բացասական երևույթները»;

- Փորձագետների մի մասը կարծում է, որ աշակերտների շրջանում առկա բուլինգը խմբային դինամիկային և դեռահասությանը տիպիկ երևույթ է, և կարող է դրական փորձ դառնալ աշակերտի համար, եթե ուսուցիչները հետևեն խմբային դինամիկային և տարբեր տեխնիկաների և խաղային պրակտիկաների օգնությամբ զարգացնեն աշակերտների հաղորդակցության հմտությունները: Եթե բուլինգը շարունակվում է և աշակերտին չեն փորձում հզորացնել, գոհի կամ ազրեատրի վարքը դառնում է վարքային նմուշ և պահպանվում երկար տարիներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ տվեց բացահայտել Երևան քաղաքի ավագ դպրոցներում բուլինգի վերաբերյալ մի շարք առանձնահատկություններ. Դրանք են՝

- Եվ՝ բուլինգի պատճառները, և՛ դրսևորումները բազմաշերտ են, և պայմանավորված են թե՛ հասարակության մշակութային առանձնահատկություններով, թե՛ կրթական համակարգի թերություններով, թե՛ դեռահասներին բնորոշ խմբային դինամիկայի առանձնահատկություններով:
- Թեման մեծ արձագանք գտավ աշակերտների շրջանում: Նրանք այդ մասին խոսելու, իրենց ձայնը լսելի դարձնելու պահանջմունք ունեն:
- Խնդրահարույց են և՛ աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները, և՛ աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունները:
- Ուսուցիչների հետ փոխհարաբերություններում աշակերտները զգալի մասը զգում են մանկավարժական և հոգեբանական հմտությունների պակաս: Նրանք իրենց զգում են չկարևորված, իրենց կարիքները անտեսված, հոգեբանական և ֆիզիկական սահմանները ոտնահարված:
- Որոշ ուսուցիչների կողմից առկա է աշակերտների հանդեպ տարբերակված մոտեցումը (աշակերտի ինտելեկտուալ կարողությունների, առաջադիմության, ընտանիքի ֆինանսական ապահովվածության, ուսուցչի մոտ արտաժամյա պարապել/չպարապելու և այլ գործոնների հիման վրա:
- Թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները նշում են դպրոցում կարգուկանոնի ավելի արդյունավետ մեխանիզմների ներդրման մասին, քանի որ դեստրուկտիվ վարքով աշակերտները խանգարում են մյուս աշակերտների և ուսուցիչների արդյունավետ ուսումնական գործընթացին:
- Աղջիկների և տղաների բուլինգի դրսևորումները ունեն առանձնահատկություններ, բուլինգի հաճախականության, պատճառների, տևողության, ընթացքի և լուծման մեխանիզմների տեսանկյունից:
- Բուլինգի տեսանկյունից խոցելի են կոմունիկացիոն արդյունավետ հմտություններ չունեցող և շատ ընկերներ չունեցող աշակերտները:
- Բուլինգի ականատես աշակերտների և ուսուցիչների զգալի մասը փորձում է միջամտել և կառուցողական լուծում տալ բուլինգի ականատես լինելու դեպքում, սակայն հմտությունների պակասի պատճառով միշտ չէ որ հաջողվում է:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հետազոտության արդյունքնում ստացված բազմաշերտ և բազմակողմանի տեղեկատվության հիման վրա, ձևակերպել ենք դպրոցական միջավայրում բուլինգի կանխարգելման հետևյալ առաջարկները.

Առաջարկում ենք ԿԳՄՄ նախարարության հանրակրթության բաժնին՝

(Աշակերտների կարծիքի հիման վրա)

- Աշակերտների համար ստեղծել ինստիտուցիոնալ մեխանիզմներ, տարին մի քանի անգամ ուսումնական պրոցեսի և մանկավարժական անձնակազմի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելու համար: Աշակերտները կարիք ունեն լսված լինել, և իրենց հուզող հարցերը բարձրաձայնելու հնարավորություն ունենալ: Այսպիսով առաջարկվում է՝
 - Տարին մի քանի անգամ անանուն սոցիոլոգիական հարցումների կազմակերպում, ուսումնական գործընթացի տարբեր բաղադրիչների վերաբերյալ իրենց կարծիքը/վերաբերմունքը արտահայտելու նպատակով
 - Ամիսը 1-2 անգամ տնօրենի և ուսուցչական անձնակազմի հետ անմիջական քննարկումների կազմակերպում, որտեղ աշակերտները կկարողանան խոսել իրենց հուզող հարցերի մասին
- Ներդնել բուլինգի դեպքերի ահազանգման անվտանգ մեխանիզմներ՝
 - Արկղի տեղադրում, որտեղ կարող են գցել անանուն գրառումներ իրենց հուզող հարցերի վերաբերյալ
 - Սոցիալական կայքերում դպրոցի կողմից էջի բացում, որին աշակերտները կկարողանան գրել/ահազանգել իրենց հուզող հարցերի վերաբերյալ (հատկապես բուլինգի դեպքերի)
 - Թեժ գծի ստեղծում, որտեղ աշակերտները իրենց հուզող հրատապ հարցերով կարող են անանուն զանգ կատարել
- Աշակերտներին տրամադրել իրենց դասացուցակի կազմմանը մասնակցելու հնարավորություն: Նրանք կցանկանային ունենալ ընտրովի առարկաներ, ինչը թույլ կտա հաճախել այն առարկաներին, որոնք իրենց իսկապես հետաքրքիր են: Բուլինգի

առումով, սա թույլ կտա նվազեցնել ուսուցիչների և աշակերտների միջև լարվածությունը այն դեպքերում, երբ աշակերտը հետաքրքրված չէ տվյալ առարկայով:

- Ներդնել պրակտիկ գիտելիքներ տրամադրող առարկաներ: Աշակերտները կցանկանային ունենալ կիրառական արվեստի և արհեստի, մասնագիտացումների մի քանի ընտրովի առարկա, որոնց հաճախելով կստանան կիրառական գիտելիքներ, ինչպես նաև վկայական, որով դպրոցն ավարտելուց հետո կկարողանան աշխատել այդ հմտությամբ: Ինչպես նաև, ստեղծել անվճար խմբակներ, որոնց ըստ ցանկության կարող են հաճախել աշակերտները: Աշակերտների կարծիքով սա ևս կբարելավի դպրոցում ընդհանուր մթնոլորտը, հատկապես ավագ դպրոցում կբարձրացնի աշակերտների՝ դպրոց հաճախելու մոտիվացիան:
- Ներդնել անվճար արտաժամյա պարապմունքներ բոլոր, կամ աշակերտների կողմից առաջնահերթ համարվող առարկաներից: Դա թույլ կտա լուծել «ուսուցչի մոտ պարապելու» հարցը, քանի որ վերջինս դառնում է աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում կոնֆլիկտի պատճառ, կամ ուսուցչի կողմից մանիպուլացիաների և տարբերակված մոտեցման առիթ:
- Ներդնել պրոֆեսիոնալ հոգեբանական թիմ, որը կկարողանա աջակցություն տրամադրել դպրոցի աշակերտներին և անձնակազմին: Աշակերտների մեծամասնության կարծիքով յուրաքանչյուր աշակերտ պետք է հնարավորություն ունենա որակյալ հոգեբանական աջակցություն ստանալ դպրոցում:
- Ներդնել կամ ավելացնել դպրոցական միջավայրում կրթության ոչ ֆորմալ բաղադրիչը: Դա կօգնի աշակերտների միջև առողջ հարաբերությունների հաստատմանը, և կնպաստի աշակերտների անձնային աճին: Մասնավորապես,
 - Թիմային աշխատանքների ավելացում, թիմում աշխատելու կարողությունների զարգացում
 - Խմբային աշխատանքների ավելացում, խմբով առաջադրանքներ կատարելու հանձնարարությունների ձևաչափի ներմուծում
 - Ֆիլմի դիտում և քննարկումների կազմակերպում
 - Դասարանով հաճախակի անվճար էքսկուրսիաների հնարավորություն

- Դասադեկի հետ քննարկումներ, որտեղ աշակերտները անմիջականորեն կկարողանան քննարկել իրենց հուզող հարցերը
 - Աշակերտները կցանկանային նաև որպես առարկա ուսումնասիրել հոգեբանություն և դաստիարակություն: Ըստ նրանց, դա թույլ կտա բարելավել մարդկային փոխհարաբերությունների բնույթը և նվազեցնել բուլինգը:
- Ներդնել դասաժամի վարման ժամանակակից մոտեցումներ: Առկա մոտեցումները աշակերտները համարում են հնացած, ինչն էլ պատճառ է դառնում ուսման հանդեպ ցածր հետաքրքրվածության և հանգեցնում ուսուցիչների հետ լարված փոխհարաբերությունների:
 - Վերապատրաստումների միջոցով նպաստել ուսուցիչների հոգեբանական և մանկավարժական հմտությունների զարգացմանը:
 - Գրեթե բոլոր աշակերտները նշել են, որ ուսուցիչների մոտ հոգեբանական և մանկավարժական հմտությունների պակասը շատ բացասական է ազդում նրանց հոգեկան բարեկեցության և ուսման մոտիվացիայի վրա:
 - Ներդնել աշակերտների կարգապահության և բարեվարքության արդյունավետ մեխանիզմներ, որոնք թույլ կտան ուսուցիչներին կենտրոնանալ գիտելիք փոխանցելու գործառույթի վրա: Որպես այդպիսի մեխանիզմներ, աշակերտները, ուսուցիչները և փորձագետները առաջարկել են՝
 - Էթիկայի հանձնաժողովի ստեղծում, որտեղ ուսուցիչների, աշակերտների և ծնողների ներկայությամբ կքննարկվի աշակերտի արարքը, և կսահմանվեն նրա վարքի շտկման և պատժի ձևաչափեր: Որպես պատժի արդյունավետ տարբերակներ, առաջարկվել են՝
 - Հասարակական աշխատանքների կատարում (օր. դպրոցի մաքրությանը մասնակցել)
 - Որոշակի վարքականոնների խախտումների դեպքում ֆինանսական տուգանքների վճարում աշակերտի կամ իր ընտանիքի կողմից

- Գրավոր նկատողությունների համակարգի ներդրում, որոշակի քանակի դեպքում դպրոցից հեռացում
 - Դպրոցից հեռացված լինելու դեպքում այլ դպրոց ընդունվելու մեծ դժվարություններ
- ԱՍՀՆ և ԿԳՄՄՆ ԿՈՂՄԻՑ բուլի վարք դրսևորող և բուլինգի ենթարկվող աշակերտների ծնողների հետ աշխատանքների կատարում:
 - Տեղական զանգվածային լրատվամիջոցների միջոցով մանկավարժի աշխատանքի հեղինակության բարձրացմանը ուղղված տեղեկատվական արշավներ, սոցիալական հոլովակների ստեղծում: Դա թույլ կտա գործող մանկավարժների սոցիալական դերի արժեվորում, որոշ չափով նրանց խոցելիության հաղթահարում, ինչպես նաև նոր, երիտասարդ կադրերի շրջանում մանկավարժական աշխատանքի հանդեպ հետաքրքրության բարձրացում: Մա կնպաստի աշակերտների կողմից ուսուցիչների հանդեպ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը և ուսուցչի խոցելիության նվազմանը գործատուի հետ հարաբերություններում:
 - Տնօրենների վերապատրաստում որպես կրթության ոլորտի կառավարիչների
 - Ուսուցիչների աշխատանքային իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ներդրում: Աշակերտների և տնօրենի հետ փոխհարաբերություններում ուսուցչի խոցելի լինելը նրան դարձնում է աշակերտների կողմից բուլինգի պոտենցյալ զոհ: Ուսուցչի աշխատանքային իրավունքների պաշտպանված լինելը թույլ կտա, որպեսզի նա վստահորեն կառավարի դասարանը, անհրաժեշտության դեպքում չվախենալով դիտողություն անել բուլի աշակերտներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Երեխաների կարծիքով» հարցման արդյունքներ, Երևան 2017
https://resourcecentre.savethechildren.net/node/12512/pdf/yv_brief_version_final_arm.pdf
2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղենիշները երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում. իրավական վերլուծություն, Երևան 2017
https://www.unicef.org/armenia/sites/unicef.org.armenia/files/2019-01/no%20hyph%20report-complaint%20mechanism_HRDO.pdf
3. Małgorzata Wójcik and Maria Mondry “The Game of Bullying”: Shared Beliefs and Behavioral Labels in Bullying Among Middle Schoolers, 2020 American Psychological Association, 2020, Vol. 24, No. 4, 276 –293
<https://psycnet.apa.org/fulltext/2020-43455-001.html>
4. Respecting others: Anti-bullying overview: Guidance Guidance document No: 050/2011 Date of issue: September 2011
<https://gov.wales/sites/default/files/publications/2018-03/respecting-others-anti-bullying-overview.pdf>
5. Olweus, D. Bullying at school: What we know and what we can do. Malden, MA: Blackwell Publishing (1993)
https://www.researchgate.net/publication/246876123_Olweus_D_1993Bullying_at_school_What_we_know_and_what_we_can_do_Malden_MA_Blackwell_Publishing_140_pp_2500
6. Weaver L.M A Content Analysis of Protective Factors Within States' Antibullying Laws, Journal of School Violence 12(2):156-173
https://www.researchgate.net/publication/263581347_A_Content_Analysis_of_Protective_Factors_Within_States'_Antibullying_Laws

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ընդունված 20.11.1989թ. Նյու Յորքում
ՄԱԿ-ի կողմից, վավերացված ՀՀ-ում՝ 22.07.1993

<https://www.unicef.org/armenia/%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%A%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B6%D5%BE%D5%A5%D5%B6%D6%81%D5%AB%D5%A1>

ՀՀ սահմանադրությունը, ընդունված 06.12.2015

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 29.05.1996

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>

«Հանրակրթության մասին ՀՀ օրենքը», ընդունված 10.07.2009

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>